

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ

Պրակ Ա  
(ԺԷ-ԺԹ դարեր)

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2016

ՀՏԴ 09:81'374  
ԳՄԴ 63.2+81.23  
Պ 797

Սիրով նվիրում են Արցախյան  
Ազատամարտի նահատակ  
հերոսներին:

Տպագրվում է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի  
խորհրդի երաշխավորությամբ:

Խմբագիր՝  
բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ Գաղթուհի Հանանյան

Գրախոսներ՝  
բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ Սուսաննա Գրիգորյան  
բանասիր. գիտ. թեկնածու Նաիրա Պարոնյան

## ԵՐԿՈՒ ԽՈՍԵ

**Պողոսյան Ն. Բ.**  
Պ 797 **Հայ բառարանագրության պատմության դրվագներ.** Պրակ Ա  
(ԺԵ-ԺԹ դարեր) / Ն.Բ. Պողոսյան.- Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն»  
հրատ., 2016.-112 էջ:

Աշխատության մեջ համառոտ ներկայացված են միջնադարի հայերեն հիմնական բառարանները, քննված են դեռևս ոչ շատ հայտնի մի քանի ձեռագիր և տպագիր բառարաններ՝ տալով այդ բառարանների հատկապես պարունակած նորույթը հայերենի բառապաշարի ուսումնասիրման համար: Գիրքը կարող է օգտակար լինել բանասերների, պատմաբանների, հայ գրավոր մշակույթով հետաքրքրվողների և ուսանողների համար:

ՀՏԴ 09:81'374  
ԳՄԴ 63.2+81.23

ISBN 978-5-8080-1221-9  
© Պողոսյան Նորայր, 2016  
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016

Հայ բառարանագրությունն ու դրան ուղեկից բառարանագիտությունը դեռևս չեն սպառել անելիքները: Նորովի քննելու կարիք ունեն հատկապես ձեռագիր մատյաններում պահպանվող՝ ուշ միջնադարում ստեղծված բառարանները, դրանցում ամբարված բառապաշարային նյութը: Միջնադարյան հայ բառարաններին, հատկապես՝ «Բառգիրք հայոց»-ին, դրա հիմք կազմող «Բառք քերթողականք»-ին և մյուս ձեռագիր բառարաններին նվիրված որոշակի քննություններ, մենագրություններ կան ասպարեզում, մինչդեռ ձեռագիր այն բառարանները, որոնք կապված չեն «Բառգրքի» հետ, դրա տարբերակը չեն և բառարանագրական ինքնուրույն միավոր են ներկայացնում, դեռևս ոչ ամբողջովին են նկատված, քննված, հրապարակված և շրջանառության մեջ դրված: Այնպիսի տպավորություն ունենք, որ Երեմիա Մեղրեցու տպագրած «Բառգիրք հայոց»-ը իր ստվերում է թողել մյուս՝ գուցե ոչ մեծ տարածում գտած և ընդօրինակվելու բախտին քիչ արժանացած ձեռագիր բառարանները:

Նման մի քանի բառարանների մասին է խոսվելու մեր այս գրքույկում: Ներկայացվող բառարանները գրվել են ուշ միջնադարում, մի մասը պահպանվել է ձեռագիր մատյաններում,

որոնց պայմանական անվանումները հաճախ տվել ենք մենք՝ Նահապետ Ծաղկողի բառարան, «Բառարան բժշկական», Ստեփանոս վրդ. Լեհացու «Բանք իմաստասիրականք» փիլիսոփայական բառարան, «Թուրքերեն-հայերեն հանգավոր բառարան», «Ի վերայ այբուբենից անուանք քաղաքաց» աշխարհագրական բառարան, մի քանիսն էլ պահպանվել են հնատիպ գրքերի էջերին՝ Վարդան Հունանյանի բառարանը, Հովսեփ Արցախեցու բառարանը:

Ցանկանում ենք հուսալ, որ այդ բառարաններին նվիրված մեր գրքույկն իր համեստ նպաստը կարող է բերել հայ միջնադարյան բառարանագրության ուսումնասիրությանը և օգտակար կլինի գիտական և ուսանողական շրջանակների համար:



## ՆՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԾԱՆԻ ՀԱՅ ԲԱՆԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

Թե՛ հայ բառարանագրությունը, թե՛ այս ոլորտն ուսումնասիրող բառարանագիտությունը<sup>1</sup>, շարունակելով նախորդ տասնամյակների արդյունավետ ընթացքը, վերջին շրջանում նույնպես որոշակի արդյունքներ են արձանագրել: Եթե դիտարկելու լինենք 2000 թվականից հետո ընկած վերջին 15 տարիները, ապա կարելի է ամանձնացնել մի շարք արժեքավոր աշխատություններ և բառարաններ, որոնք նվիրված են հայերենի հին ու միջին շրջանների բառարանագրությանն ու բառապաշարին ընդհանրապես:

Նախ, հայերենի բառապաշարի վերաբերյալ աշխատությունների շարքում հատուկ պետք է նշել մեծանուն բանասեր **Նորայր Բյուզանդացու** հեղինակած՝ միջին հայերենի անավարտ բառարանի լույս ընծայումը մեր օրերում: Բառարանի ձեռագիրը պահվում է Շվեդիայի Գեոթեբորգ քաղաքի համալսարանական գրադարանի ձեռագրերի բաժնում<sup>2</sup>: Հինգ հատոր կազմող ձեռագիր տետրերից չորսը եղել են մշակված-մաքագրված, իսկ հինգերորդն իրենից ներկայացրել է «խառն և բոլորովին անմշակ, ջնջումներով, խախտուած այբբենական կարգով բառացանկերի սևագրություններ», որոնք ամբողջացրել և հրատարակել է

<sup>1</sup> Բառարանագրություն և բառարանագիտություն տերմինները հստակ սահմանված են հայերենագիտության մեջ, տե՛ս օրինակ՝ **Երուսրդ Աղայանի** «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության «Բառարանագրություն և բառարանագիտություն» բաժինը, Եր., 1984, էջ 357-368: Եւսև՝ **Վ. Համբարձումյան**, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 1, Եր., 2006, էջ 8-25՝ «Հայ բառարանագրությունը և հայերենի ոչ ծավալուն բառարանները» գլուխը:

<sup>2</sup> Ն. Բյուզանդացու բառարանը և մյուս ձեռագիր նյութերը մանրամասն նկարագրում է Մարտիրոս Մինասյանն իր «Նորայր Ն. Բյուզանդացու կեանքը, հրատարակությունների և դիւանի ցանկը» հոդվածում («Բազմավեպ», 1983, թ. 1-4, էջ 39-98):

Մարտիրոս Մինասյանը, և ինքն էլ հետևյալ համառոտ բնութագիրն է տվել աշխատանքին. «Յրատարակում եմ այն բոլորը, ինչ փրկուել է միջին հայերենի այս թանկագին բառարանից, ուր հեղինակի ուշադրությունը գրաւել են յատկապէս հայերեն կամ հայերենացած բառերը, ի տարբերութիւն «Միջին հայերենի բառարան» արժեքաւոր աշխատութեան գոյգ հատորների, որոնք Մատենադարանում լրիւ չեն օգտուել Նորայրի այս անտիպ գործի մանրաժապաւենից»<sup>3</sup>:

Միջին հայերենի վերաբերյալ մեկ այլ բառարան տպագրութեան ընթացքի մեջ է ներկայումս: Խոսքը **Յոզեֆ Կարստի** «Միջին հայերենի բառարանի» մասին է: Այդ աշխատության մեծածավալ ձեռագիր էջերը պահպանվում են Երևանի Մաշտոցյան Մատենադարանում, որոնք թվայնացրել և դրանց հիման վրա Կարստի բառարանը հրատարակելու որոշակի քայլեր է կատարել Գերմանիայի Յալլե/Վիթենբերգի համալսարանի գիտական խումբը, որի կազմում աշխատելու պատեհությունը ունեցել ենք նաև մենք:

Լավրենտի Յովհաննիսյանը «Գրաբարի բառարանում» երկար տարիների պրպտումներից հետո ի մի է հավաքել ՆՔ-ում չվկայված բառերը, ոճերն ու դարձվածքները՝ բաղված 5-11-րդ դդ. և հետագայի գրաբարագիր հեղինակների երկերից: Այդ իմաստով բառարանը հայերենի հին շրջանի բառաստեղծման աղբյուրի արժեք է ստանում: Լ.Յովհաննիսյանի բառարանը ներառում է նաև նմանաբնույթ մեկ այլ՝ Ռ.Ղազարյանի և Յ.Ա.Վետիսյանի «Նորահայտ բառեր գրաբարում» (2007 թ.) աշխատության բառամթերքը: Յեղինակը նշում է, որ գրաբարյան նոր բառերի հայտնաբերումը հնարավորություն է տալիս աստիճանաբար ավելի ու ավելի ճշգրտելու այն 5000 բառերի ժամանակագրությունը, որոնք ավելացված են «Առձեռն բառարանի» երկրորդ հրատարակությունում (1865 թ.):

<sup>3</sup> Նորայր Բիւզանդացի, Բառգիրք ստորին հայոց, ի մատենագրութեանց ժԱ-ԺԵ դարուց, Իրատ. պատրաստեց Մարտիրոս Մինասեան, Ժնեւ, 2000 (Պ-Ֆ տառերը՝ անմշակ), էջ 3-4:

2006 թ. տպագրվեց Ռուբեն Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանը»<sup>4</sup>, 2012 թվականին՝ իր մահվանից շատ չանցած հրատարակվեց նաև հայագետի «Գրաբարի դարձուածաբանական բառարանը»<sup>5</sup>, որը, հեղինակի խոսքով՝ «ըստ հնարաւորին ի մի է բերում գրաբարի դարձուածքներն ու կայուն բառակապակցութիւնները, որոնք գործածութիւն են գտել ընդհանրապէս 5-11-րդ դարերի ինքնուրոյն և թարգմանական գրականութեան տարաբնոյթ գործերում»: Բառարանի գլխաբառերում բերված, բացատրված և բնագրային վկայումներով ներկայացված են մոտ 3000 դարձվածային միավորներ:

Գրաբարին նվիրված ևս մեկ նորատիպ բառարան ունի ուսուցողական բնույթ. խոսքը Լալիկ Խաչատրյանի «Գրաբարի ուսումնական բառարանի» մասին է, ուր բերված և բացատրված են 10 հազար բառեր, որոնք, ըստ հեղինակի՝ «կարող են նպաստել բուհական ծրագրերով նախատեսված մատենագրական երկերի լիարժեք և ճշգրիտ թարգմանությանը»: Նույն հեղինակի «Գրաբարի բացատրական բառարանը» ներկայացնում է ձևաբանորեն տարարժեք բառերը, որոնք «բառաբերականական իմաստով և արժեքով երկփեղկված են հանդես գալիս երկու և ավելի խոսքի մասերի տիրույթում»<sup>6</sup>: Տպագրվել են նաև առանձին հեղինակների երկերին նվիրված բառարաններ, օրինակ՝ Գրիգոր Տաթևացու երկերի նորահայտ բառերի քննությունն է պարունակում Սուսաննա Գրիգորյանի աշխատությունը<sup>7</sup>:

Յին հայերենի նորատիպ բառարանների շարքում հիշատակենք նաև Աստվածաշնչի համաբարբառը<sup>8</sup>, 1908 մեծադիր էջ ընդգրկող հիմնարար և ստվարածավալ մի աշխատություն, որը կազմվել է Սուրբ Գրքի 1997 թ. հրատարակության հիման վրա և

<sup>4</sup> Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Եր., 2006:

<sup>5</sup> Ռ. Ղազարեան, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012:

<sup>6</sup> Լ. Խաչատրյան, Գրաբարի ուսումնական բառարան, Եր., 2013: Նույնի՝ Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարարժեք բառեր), Եր., 2003:

<sup>7</sup> Ս. Գրիգորյան, Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ, Եր., 2009:

<sup>8</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն - Ս.Էջմիածին, 2012 թ.:

որը, ի տարբերություն Թադեոս վրդ. Աստուածատրեանի կազմած Նախորդ համաբարբառի (Երուսաղեմ, 1895 թ.), ընդգրկում է Աստվածաշնչի գրաբար բնագրի բոլոր բառերն առավել լիարժեքորեն:

Այստեղ չենք հիշատակում վերջին շրջանում տպագրված բացատրական, դարձվածաբանական, օտար բառերի, երկլեզվյան և այլ բնույթի բազմաթիվ բառարանները, որոնք նվիրված են արդի հայերենի այս կամ այն ոլորտին: Դրանք, հատկապես մասնագիտական (տնտեսագիտական, թատերագիտական, հոգեբանական, երկրաբանական, էներգետիկայի և բազմաթիվ այլ ոլորտների) բառարանները նույնպես իրենց որոշակի նպաստն են բերում հայերենի բառարանագրությանն ընդհանրապես: Այդ բառարանների նկարագրությունն ու մատենագիտական ամբողջական ցանկը կազմելը, կարծում ենք, օգտակար կարող է լինել հայերենագիտության համար և կլրացնի Գ. Գասպարյանի և Վ. Ալեքսանյանի կազմած ցանկերը<sup>9</sup>:

Վաղաշխարհաբարյան շրջանի տպագիր ու ձեռագիր աղբյուրներից բազմաթիվ նորահայտ (հին հայերենի բառարաններով չվկայված) կամ իմաստափոխված բառեր են հավաքված մեր «Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» բառարանում<sup>10</sup>: Նրանում դիտարկված բնագրերն ընդգրկում են 16-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանը: Դա համապատասխանում է վաղ աշխարհաբարին (ըստ Գ. Ջահուկյանի սահմանումի)՝ միջին հայերենից նորմավորված աշխարհաբարին անցնելու ենթաշրջանին և շաղկապում է մի կողմից միջին հայերենը, մյուս կողմից՝ ձևավորվող աշխարհաբարի վաղ տարբերակները: Բառարանը պարունակում է

բառակերտմամբ առաջացած, իմաստափոխված, հնչունափոխված, նոր փոխառյալ մոտ 3000 բառ, բառաձև և դարձվածային միավոր, որոնք բոլորն էլ բերված են բնագրային վկայակոչում(ներ)ով: Շատ դեպքերում բառահողվածները համադրված են հեղինակավոր բառարանների (ՆՅԲ, ԱԲ, ՄՅԲ և այլ) տվյալների հետ, որոնցում հանդիպող՝ մեր քաղած նոր բառին կազմությամբ կամ իմաստով մոտ բառերը ներկայացված են գլխաբառի բացատրությունից անմիջապես հետո: Օրինակ՝ **հանճարայեղ** բառի դիմաց ՅԲԲ-ն ունի **հանճարայեղց**, **համարողականութիւն**-ի դիմաց ԱԲ-ն ունի **համարողութիւն**՝ նույն կամ մոտ նշանակություններով, և նման համարժեքները ներառել ենք բառահողվածների մեջ՝ մեր քաղած բառի իմաստային դաշտը ճիշտ ուրվագծելու նպատակադրումով: Այդպիսով՝ բառարանը որոշ իմաստով ստանում է **հոմանշային նշանակություն**: Ըստ հնարավորին արտացոլված են նաև **պատմական համանունները**, դրանք այն բառերն են, որոնք, հայերենի տարբեր փուլերում ծագած լինելով, իրարից անկախ ստացել են նույն ձևավորումը, սակայն տարբեր են իմաստներով, օրինակ՝ **յոտնաչափ** - մեր քաղած բնագրում ունեցել է «ոտնավոր, չափածո» իմաստը, ԱԲ-ում՝ «ոտքի բնական չափ»:

«Նորահայտ բառերի» այս բառարանի տպագրությունից հետո բնագրերի դիտարկման աշխատանքները շարունակել ենք և պատմագրական, ժամանակագրական, գեղարվեստական, դիվանական, իրավական, վիմագրական բազմաթիվ նոր աղբյուրներից քարտագրել ենք մեծ թվով նոր բառեր, որոնք հայերենի բառապաշարի ուսումնասիրմանը նորանոր շերտեր են ավելացնում:

\* \* \*

Վերջին շրջանում ոչ պակաս արդյունավետ է հին հայերենին նվիրված բառարանագիտության ոլորտը: «Բառգիրք հայոց»-ի բնութագրմանն ու աղբյուրներին, ապա և Մխիթարյանների բառարանագրական գործունեությանը և «Նոր հայկազյան բա-

<sup>9</sup> Բառարանների մատենագիտական ցանկեր են պարունակում Գ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն» մեջ գետնդրված «Ցանցակ հայ տպագիր բառարանների» բաժինը (էջ 485-550), նաև՝ «Հայ բառարանագրություն. Անտացված մատենագիտություն», կազմող Վ. Ալեքսանյան, Եր., 1986: Համաժամանակ նույնպես արդյունավետ աղբյուր է հայ բառարանների համար, նկատի ունենք հատկապես [nayiri.com](http://nayiri.com) և [hy.wikipedia.org](http://hy.wikipedia.org) կայքերը:

<sup>10</sup> **Նորայր Պողոսյան**, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դարեր), Եր., 2014: Բառարանի համար գործածում ենք ՊՆԲ հապավումը:

նարանի» քննությանն է նվիրված Ռ.Ղազարյանի գրքուկը<sup>11</sup>:  
Գ.Թոսունյանն իր «Գրաբարի բառարանագրությունը»<sup>12</sup> աշխատության մեջ կանգ է առնում հատկապես տպագիր բառարանների վրա՝ դրանք ներկայացնելով բացատրական, թարգմանական, մասնագիտական, համաբարբառային տեսակներով, սույն աշխատությունն ունի նկարագրական բնույթ: Մխիթար Սեբաստացու բառարանագրական ժառանգության ուրվագիծ է Վ. Պետրոսյանի աշխատությունը<sup>13</sup>: Նելլի Մկրտչյանի մենագրությունը նվիրված է Ֆրանցիսկոս Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանի բազմակողմ քննությանը<sup>14</sup>: Նշենք նաև Հայկ Ամալյանի «Միջնադարյան հայ բառարանագրությունը»<sup>15</sup> նոր հատորը. այն փաստորեն միջնադարյան հայ բառարանագրությանը նվիրված՝ հեղինակի եռագրության երրորդ հատորն է կազմում, որի մասին մեր այս գրքուկում խոսք կլինի: Ուշ միջնադարի տպագիր՝ Մխ. Սեբաստացու, Հակոբ Վիլլոդի, Ստ. Ռոշբայի անտիպ «Գանձ հայոց լեզուի», Արսեն Դպիր Կեսարյանի և այլոց բառարանների բանասիրական և լեզվական քննություն է Ա. Պողոսյանի աշխատությունը<sup>16</sup>: \*Բառարանագիտական որոշակի անդրադարձներ են մեր մի քանի հոդվածները<sup>17</sup>:

Մեր թեմային բովանդակությամբ առավել մոտ լինելով՝ մի փոքր մանրամասն խոսենք Վազգեն Համբարձումյանի «Ակնարկներ հայ բառարանագրության պատմության» երկու հատորյակ-

<sup>11</sup> Ռ. Ղազարյան, Էջեր հայ բառարանագրության պատմությունից, Եր., 2002:

<sup>12</sup> Գ. Թոսունյան, Գրաբարի բառարանագրությունը, Եր., 2006:

<sup>13</sup> Տե՛ս Վ. Պետրոսյանի «Մխիթար Սեբաստացու լեզվաբանական ժառանգությունը» մենագրության «Բառարանագրություն» բաժինը, Եր., 2008, էջ 164-193:

<sup>14</sup> Ն. Մկրտչյան, Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն» բառարանը, Եր., 2012:

<sup>15</sup> Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Եր., 2007:

<sup>16</sup> Ա. Պողոսյան, Հայ բառարանագրությունը 18-րդ դարում, Վանաձոր, 2010:

<sup>17</sup> Տե՛ս Ն. Պողոսյան, Նոր բառեր Եվտիմոսի բնագրում, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2008, թ. 3: 17-րդ դարի հայ բառարանագրության հուշարձաններ, Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապ. գիտ. նստաշրջանի զեկուցումներ, Եր., 2012, էջ 252-264: Լատինաբան հայերենի բառարանագրության մի յուշարձան ժե դարից, «Բազմավեպ», Վենետիկ, 2011, թ. 3-4, էջ 627-645:

ների մասին<sup>18</sup> (2006): Դրանցից առաջինը ներկայացնում է 17-19-րդ դարերում ստեղծված և գիտական շրջանառության մեջ ոչ լիարժեք ներմուծված մի քանի բառարաններ: Հեղինակի կողմից «ոչ ծավալուն» բնորոշումն ստացած այդ բառարաններն են.

ա) Արիստակես Համադանեցու «Վանկաբառարանը» (ՄՄ<sup>19</sup> 2301, 167բ-172բ, 1699 թ.) վանկակազմական բառարան, որ բնույթով մոտ է նոր ժամանակներում կազմված հանգաբառարանին: 11 ձեռագիր էջ ընդգրկող այս բառարանի հիմքում ընկած է բառի վանկատման սկզբունքը, նրանում այբբենական կարգով խմբավորված են ըստ աճման տարբեր վանկեր պարունակող բառեր, ինչպես՝ *բարի* (2 վանկ), *բարեկամ* (3), *բարեկամություն* (4):

բ) Հայ-լատիներեն բառարան տերմինարան (ՄՄ 7560, էջ 41ա-64բ, 1756 թ.), որի բառահոդվածները, ըստ հեղինակի, կազմվել է Կղեմես Գալանոսի քերականության մեջ ամփոփված նյութի հիման վրա և ունեցել է հայերեն քերականական տերմինների և դրանց լատիներեն համարժեքների յուրացման գործնական նպատակ:

գ) Բառակազմական բառարան (ՄՄ 3110, էջ 113ա-146բ), ուր ընդգրկված են պարզ կազմության բառ կամ բառարմատ ու ածանց, և դրանց (իբրև բաղադրյալ հիմք) հիման վրա առանձին բաժիններում բաղադրվում են բարդ և ածանցավոր բառեր, օրինակ՝ *ինքն-ինքնիշխան, ինքնահաւան, ինքնագօր, յար-յարանուն, յարադրեալ, յարաթաթաւ* և այլն, որոնք գուցե ունեցել են բառակազմական կառույցներն ուսուցանելու նպատակ:

դ) Կլեոպատրա Սարաֆյանի «Բանալի գիտութեան»<sup>20</sup> գրքի բառարանային տվյալները. գիրքը հայերեն-ռուսերեն զուգահրական ուսումնասիրություն է, ժամանակին ծառայել է որպես

<sup>18</sup> Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 1-2, Եր., 2006-2015:

<sup>19</sup> Երևանի Մեծրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի համար շտապարանում գործածում ենք ՄՄ հապավումը:

<sup>20</sup> Կլեոպատրա Սարաֆեան, Գիրք որ կոչի Բանալի գիտութեան, Ս.Պետերբուրգ, 1788:

դասագիրք, նրանում բառերը տառադարձվում և թարգմանվում են հայերեն. Օր.՝ «басочка-բաբոչկայ-հողամաղ. Է սա վայրի թռչուն»:

ե) Գրիգոր Խալդարյանի «Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան»<sup>21</sup> աշխատության մեջ ընդգրկված բառարանը, որ հայ-ռուսերեն բառարանագրության առաջնեկներից է: Նորջուղայեցի վաճառական և հրատարակիչ Գ. Խալդարյանի այս երկի «Բառք ընտիրք ազգիս հայոց և պանծալի լեզուին ռուսաց համառօտապէս դեմընդդէմ միմեանց թարգմանեցեալ» բառարանում տրվում է հայերեն բառը, նրա ռուսերեն թարգմանական համարժեքը՝ հայերեն տառադարձված և ռուսերեն գրությամբ, այսպես՝ «պիտանի, օգտակար, պիտանացու, պիտանաւոր-պոլեզնցի-полезный»:

զ) Եղիազար Առնջեցու մատենակից բառարանը՝ «Բառք նորածն համառօտ մատենիս ի վերայ այբուբենից» (ՄՍ 3362, էջ 93ա-111ա), որն ունի գլխաբառի քերականական նշում, բացատրություն և բնագրի էջի հղում. «Ազնուապետութիւն, թեան, թեամբ, թեանց, թեամբք: Է բարդ բառ, ունօղ յիւքեան զերկուս նշանակութիւնս, որով իմանամք ազնուաց գլխաւորն կամ գլխակարգութիւնն»: Նույն հեղինակի մեկ այլ՝ «Համառօտ բառարան ի հայոց ի ռուս լեզու» (ՄՍ 6418, 142ա-158ա) բառարանը պարունակում է նաև բառերի ռուսերեն համարժեքները, օրինակ՝ «ազգական (ի, աւ), ած., родня» և այլն:

Բոլոր այս բառարաններից Վ. Համբարձումյանը քաղել և իր գրքում ներկայացրել է 170 նորահայտ բառեր, որոնք չունի ՆՂԲ-ն, ահա նման բառերի մի խումբ. *աղիւսարկու, առնչափ, ատամնատ, գովանի, ինքնահաւան, կեղծապատիր, միավանկ, մոլեկրօն, շքաւոր, պրասուն, ջնարաբատակ, տիրագիր* և այլն:

Վ. Համբարձումյանի «Ազնարկներ հայ բառարանագրության պատմության» երկրորդ հատորը ներկայացնում է Օտուկի հայերեն-լատիներեն բառացանկը (9-րդ դարի վերջ, 10-րդ դարի

<sup>21</sup> Գրիգոր Խալդարեան, Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան, Ս.Պետերբուրգ, 1788:

սկիզբ), Ստեփանոս Ռոշբայի անտիպ «Գանձ հայոց լեզուի», որ հեղինակը համարում է «18-րդ դարի հայ բառարանագրության մեծագույն նվաճումներից մեկը՝ ծավալով, նյութի բացատրության և թարգմանության առումով»: Տրվում են նաև Ե. Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի մի շարք անստույգ բառերի (աղանդումս, աղիվատոս, աղտամուղտ, աճապել, ամասայ և այլն) մեկնաբանություններ:

Ձեռագիր բառարանային նմուշներից մեկի՝ հոմանշային շարքեր պարունակող «Հաւաքումն նոյնանշան բառից», «Բառք նոյնանշանք» անուններով հայտնի բառարանների «չվկայված բառերի» քննությանն են վերաբերում **Նազիկ Յովհաննիսյանի** հրապարակումները<sup>22</sup>: Յեղինակը մի շարք բառեր քննում է՝ համադրելով հայերենի բառակազմության կաղապարային կառույցների հետ: Այսպես օրինակ՝ ներկայացվում են *ակնապուշել, գրաստախել, համակուտել, տարայարգել, փառապատուել* և այլ բառերի ձևայիններն ու արմատները, համեմատվում հայերենի բառարանային տվյալների հետ, ցույց տալով, որ դրանք շատ դեպքերում ստանում են նոր իմաստներ կամ իմաստային նրբեռանգներ:

Համառոտ այս ուրվագիծն իսկ, կարծում ենք, կարող է ցույց տալ, որ հայ բառարանագրությունը կանգ չի առել, որ մեր 21-րդ դարն էլ հայերենագիտության այս կարևոր ոլորտում հասցրել է հարուստ պաշար կուտակել՝ որպես անսպառելի ակունք ունենալով հայ միջնադարյան և նոր բառարանագրության իրապես հսկայական պաշարը:

<sup>22</sup> Ն. Յովհաննիսյան, Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր (ձեռագիր բառարանների նյութի հիման վրա), ՊԲԳ, Եր., 2012, թ. 2, էջ 170-180: Նույնի՝ Բառաքննական դիտարկումներ, «Զահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2014, էջ 90-98:

## ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՆԱԴԱՆՆԵՐԸ

Միջնադարյան հայ բառարանագրությունն իր երկար ճանապարհին ունեցել է զարգացման մի քանի հիմնական փուլեր:

Ա) 5-11-րդ դարերի հայ բառարանագրությունը սկզբնավորման շրջանում իրենից ներկայացնում էր առավելապես տարբեր երկերի շարադրանքին կից, լուսանցքներում, միջտողերին բացատրությունների, մեկնությունների, ստուգաբանությունների փորձեր կամ առանձին բառացանկեր: Դրանք նախ և առաջ կապված են թրակացու և նրա մեկնիչների, Փիլոնի, Արիստոտելի, Գր. Նյուսացու, Եփրեմի, Ոսկեբերանի և այլ հեղինակների թարգմանական երկերի հետ, ծավալով և ընդգրկված գլխաբառերով ընդարձակ չեն, հաճախ սոսկ բառացանկեր են, որոնք հայագիտության մեջ անվանվում են «մատենակից» բառարաններ:

Բ) 12-14-րդ դդ. արդեն ստեղծվում են բառարանների տարբեր տիպեր, հաճախ՝ մասնագիտական ուղղվածությամբ: Բառարանագրությունն արտացոլում էր գիտության վիճակը և ծառայում գիտական, ուսումնական նպատակների՝ վերածվելով ինքնուրույն բնագավառի: Այս շրջանի բառարաններն արդեն մեծ մասամբ ինքնուրույն բառարանային միավորներ են, մասնավորաբար հիշատակելի է առաջին լիարժեք՝ Արիստակես Գրչի ուղղագրական բառարանը:

Գ) 15-16-րդ դդ. որոշակի վայրէջք է նկատվում, նոր բառարաններ չեն ստեղծվում, արտագրվում և բազմացվում են արդեն գոյություն ունեցողները՝ հաճախ գրչագրական աղճատումներով, տարբերակներով:

Դ) 17-18-րդ դարեր, երբ ի հայտ են գալիս այբբենական դասավորության կարգ ստացած սովոր բառարաններ, ստեղծվում են նոր՝ բացատրական, մասնագիտական, թարգմանական բազ-

մաթիվ բառարաններ, սկիզբ է դրվում գիտական բառարանագրությանը<sup>23</sup>:

Միջնադարյան հայ բառարանագրության ավարտը պետք է համարել 18-րդ դարի կեսը՝ Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի ստեղծումը: Այլ առիթով Հայկ Ամալյանը հայ բառարանագրության միջնադարյան շրջանի ավարտ է համարում Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի տպագրությունը, սակայն նաև նշում է. «18-րդ դ. սկզբին գրված մի շարք բառարաններ թե՛ բովանդակությամբ, թե՛ ծավալով ու կառուցվածքով հին կերպարանք ունեն և վերաբերում են միջնադարյան բառարանագրությանը»<sup>24</sup>:

\*\*\*

Վաղ միջնադարյան աղբյուրներում բառարանները նախապես նշվում էին «բառք» ընդհանուր անվանումով: «Բառգիրք», «բառգրքոյկ», «բառարան» տերմիններն ի հայտ են եկել 12-13-րդ դարերից հետո: Օրինակ՝ «բառագիրք» առաջին անգամ հանդիպում ենք 13-րդ դ. հեղինակ Հովհաննես Երզնկացու քերականության մեջ՝ «յԸստակիսի բառագրոցն քաղեալ» հիշատակումով:

Միջնադարում ստեղծվել են տարբեր խորագիր-անվանումներով տարբեր տեսակների մի շարք բառարաններ, որոնցից հիմնականների և առավել շատ հանդիպողների համառոտ նկարագիրը տալիս ենք ստորև՝ ուսումնական նկատառումներով: Միջնադարի հայերեն բառարանների առավել մանրամասն նկարագրությունը ընթերցողը կարող է քաղել հատկապես Հայկ Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» աշխատության երեք հատորներից:

**«Բառք յունարեն»:** Ամենահին հայերեն բացատրական բառարանն է, ձեռագրերում կարելի է հանդիպել «Այս բառք ի յունականեն առ մերս յայտնեալ» ամբողջական անվանումով,

<sup>23</sup> Ներկայացվել են միջնադարյան հայ բառարանագրության շրջանաբաժանման այլ տարբերակներ ևս: Տե՛ս Վ. Ալեքսանյան, Ավնարկ հայ բառարանագրության պատմության, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1990, էջ 66-75:

<sup>24</sup> Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Եր., 2007, էջ 27:



սակայն այն ոչ թե հունարեն-հայերեն բառարան է, որը ենթադրել է տալիս վերնագիրը, այլ բազմաթիվ հունարեն բառերի հայերեն պատճենումների բացատրությունները, իսկ այդ բառերը բաղված են հունական դպրոցի մատենագրական երկերից: Օրինակ՝ *յարաբարդել* - միաւորել կամ յարել, *յարիուն* - խորաքննող, *յարաքնակ* - վերանստող կամ մշտաքնակ և այլն:

**«Բառք Փիլոնի»:** Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչ հրեա փիլիսոփա Փիլոն Եբրայեցու (Ք.ա. 25 - Ք.հ. 50 թթ.) երկերը հունաբան դպրոցի հայերեն հնագույն թարգմանություններից են՝ Թրակացու քերականության, «Պիտոյից գրքի» և այլ երկերի հետ մեկտեղ: Փիլոնի անվամբ հայտնի՝ մոտ 250 բառ պարունակող այս բառարանի նյութի մի մասը բաղված է Փիլոնի երկերից, ինչպես՝ *աներածիշտ*, *ակադիմական*, *շապրումն* և այլն: Սակայն բառերի մի մասի աղբյուրն են Աստվածաշունչը, Ոսկեբերանի երկերը, Պիտոյից գիրքը և այլն, ինչպես՝ *բրշակ*, *խնկադաց*, *մանի*, *կքողել*, *ոսոխել*, *վայրապանակ* և այլն, թեև հավանական է, որ այդ բառերը նույնպես բաղվել են Փիլոնի այնպիսի երկերից, որոնց հայերեն թարգմանությունները չեն պահպանվել:

**«Բառք քերթողականք»:** Այս բառարանն իր մեջ պարունակում է գրական հուշարձաններով վկայված և չվկայված բազմաթիվ փոխառյալ, բարբառային ու խոսակցական, անհայտ ծագման բառեր: Չվկայված բառերի օրինակներ են՝ *այենակ*, *թոռակուլ*, *երահրաւեր*, *ընդագրել*, *համանծունք*, *ճոխածեմ* և այլն: Բառարանի աղբյուր են դարձել ոչ թե մեկ կամ երկու, այլ բազմաթիվ երկեր: Նրա նպատակն է եղել բացատրել մատենագրության մեջ հանդիպող անհասկանալի բառերը, որից և համեմատաբար ստվար ծավալ է ստացել: «Բառք քերթողականքի» ընդարձակ տարբերակներից մեկի հիման վրա է 1698 թ. տպագրվել Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցը»:

**«Բառք եբրայեցոց»:** Սա հայերեն-եբրայերեն թարգմանական առաջին բացատրական բառարանն է, ուր հայերենի են թարգմանվում սուրբգրային ծագման բազմաթիվ եբրայական և մասամբ նաև հունական անուններ (Պետրոս, Պողոս, Նազարեթ, Փիլիպպոս և այլն): Ինչպես բառարանի խորագիրն է հուշում, այն

թարգմանված է հունարենից՝ «թարգմանեալ և մեկնեալ յեբրայեցոցն ի յունեն ի հայս կարգաւ ըստ նշանուսոյց ալիաբետացն եբրայեցոց»: Սակայն թարգմանության ժամանակն ու հեղինակը հայտնի չեն, ըստ որոշ տվյալների՝ ստեղծվել է 6-7-րդ դարերում:

<p>Ստեփանոսի հատումն • կամ բարձր:</p> <p>Սասկոճօթ • խոտորմունք:</p> <p>Սասեայ • արարած:</p> <p>Սասփա • հայելիք:</p> <p>Սատթէոս • պարզեւեալ:</p> <p>Սարա • դառն:</p> <p>Սարգօքոյի • դառն բեկումն:</p> <p>Սարթա • փոխաձայնող • ըստ մեզ • առ զկէտեալ • կամ տէրունական:</p> <p>Սարիա • բարձրացեալ • դառնութե ծովու • ըստ մեզ • լուսաւորեալ:</p> <p>Սարկոս • բարձր պատուար • իվերայ տանեաց:</p> <p>Սեւայ • դառնութի:</p> <p>Սեսիայ • օժեալ:</p> <p>Սեսարայիմ • որք նեղին:</p> <p>Սէտաբէէղ • զի բարի ՄԺ • կամ բարեք ՄԺ:</p> <p>Սէղքիաս • Թագաւոր ՏՊ:</p> <p>Սէղքի • սէդէկ • Թագաւոր արդարութե:</p> <p>Սէղքի սունայ • Թագաւոր փրկիչ:</p> <p>Սէսօղամ • խոշաղարար:</p> <p>Սէսօպոտամիա • գաւառ այս</p>	<p>Սարգ • հիացումն աղեղնաւորական:</p> <p>Սսէս • արաքարչեալ • ենթի ջրոց:</p> <p>Սրեա • դառնութի:</p> <p>Յ:</p> <p>Յարէթ • գեղեցկութի • կամ լայնութի:</p> <p>Յարէս • ցամաքութի • ի ձեռն սինի • ներ վերջնում:</p> <p>Յարէս • տրոմուութի • ի ձեռն սագէի • ներ վերջնում:</p> <p>Յարէթ • ընդարձակեալ:</p> <p>Յակօք • դօտեմարտող • ճոռկն դնող:</p> <p>Յասէղ • կեայ ՄԺ:</p> <p>Յասն • բժշկող:</p> <p>Յաւան • աւաղօղ:</p> <p>Յբուս • կոտումն:</p> <p>Յգրայէղ • սերմն ՄԺ:</p> <p>Յսսէ • էակ • կայուն:</p> <p>Յսբօկ • է դատարկ:</p> <p>Յսուս • լիբրայ • Յէհօ սունայ • ըստ մեզ • Յիսուս • ՏՊ փրկիչ:</p> <p>Յսու • ՏՊ փրկիչ:</p> <p>Յերամէէղ • ողորմութի ՏՊ:</p>
--	---

Նկար 1. Հատված Ռսկանյան Աստվածաշնչի բառարանից, էջ 770:

Բառարանն ընդգրկում է այբբենական կարգով դասավորված մինչև 1000 հատուկ անուն (անձնանուն, տեղանուն և տոհմանուն): Օրինակ՝

Յովնաթան – տուր կամ առաւելագոյն

Սահակ – ծաղր կամ խնդութիւն

Սամսոն – արեգակն լոցա կամ փրկութիւն

Սամուէլ – տուրք Աստուծոյ կամ հայեցեալ և այլն:

Մինչ 18-րդ դարի կեսերը՝ Մխիթար Սեբաստացու «Հայկազեան բառարանի» երկրորդ հատորի լոյս ընծայումը, «Բառք եբրայեցւոց»-ը եղել է Աստվածաշնչի հատուկ անունների ստուգաբանական հիմնական բառարանը:

17-րդ դարից ի հայտ են գալիս սուրբգրային այլ բառարաններ, որոնց մեջ հատուկ անուններին զուգահեռ բացատրվում են նաև հասարակ բառեր: Նման բառարաններից են՝ «Մեկնութիւն անուանց յեբրայեցւոց լեզուէ ի հայ բարբառ», «Բառք Սուրբ գրոց», «Այս բառք Աստուածաշունչ գրոց», «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց», «Եբրայեցւոց, քաղդեացւոց և յունաց անուանց թարգմանութիւնք»: Վերջինը գետնոված է Ռսկան Երևանցու տպագրած Աստուածաշնչի վերջում, ցանկերի շարքում, էջ 765-773 (տե՛ս Ակար 1):

**«Բառք Վարդան գրոց»:** Բառարանը պարունակում է Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկում հանդիպող պարսկերեն մի շարք բառերի բացատրություններ: Դրանք պաշտոններ, կրոններ, ծառայություն ցույց տվող բառեր են, ինչպես՝ *վզրուկ, դեհպետ, կեշտ, փշտիպան* և այլն: Բառարանում Եղիշեի երկի պարսկերեն ոչ բոլոր բառերն են ներառված, ավելի վաղ հայերենին անցած և համագործածական շատ բառեր դուրս են մնացել՝ *մարզպետ, հրովարտակ, դաստառակ, օշնան* և այլն:

«Թարգմանութիւն պարսիկ բառից ի Վարդան գրոց», «Մեկնութիւն պարսից բառից ի Վարդան գրոց» տարբերակներով

հայտնի այս բառարանը փաստորեն առաջին պարսկերեն-հայերեն բառացանկն է: Այն տպագրվել է ՊԲՀ-ում<sup>25</sup>:

**Արիստակես Գրիչի ուղղագրական բառարանը:** 12-րդ դարի հայ գրիչ, բառարանագիր Արիստակես Գրիչը ուսանել է Կիլիկիայի Լամբրոն բերդի մոտ գտնվող Սկևռա վանքում, ուր բարձր զարգացման էին հասել գրչության արվեստն ու մանրանկարչությունը: Նույն վանքում էլ ծավալել է գիտական գործունեություն, գրել «Վերլուծութիւնք բացերևապես բազմազան բառից և բայից» աշխատությունը և դրանով փաստորեն հիմնադրել հայերենի գրչության արվեստի լեզվական-բերականական տեսությունը: Այս երկի նպատակն է հստակեցնել հայերենի հին ուղղագրությունը, հիմնականում Յ-ի գրության կանոնները, գրիչներին ու աշակերտներին վարժեցնել միասնական ուղղագրությանը, որ հաճախ էր աղավաղվում «յանվարժից և յանհանճար գրչաց»: Աշխատությունն ունի 10 կանոն, որոնց վերջում ուղղագրական բառարանն է՝ բառերի այբբենական դասավորությամբ: Արիստակես Գրիչը բերում է իր նկատած սխալ բառերի ճիշտ գրությունները՝ ընդամենը մոտ 900 բառօրինակ՝ *անոշ, անուշակ, անուշահոտ, անդեայ, անդեորդ, անդանար, անդեն, անդնդային* և այլն: Բառացանկում բերված են նաև սխալ գրությամբ հանդիպող հատուկ անունների ճիշտ ձևեր՝ *Անդրեաս, Հռիփսիմէ, Յակոբ, Սերովբէ, Սինա* և այլն: Արիստակես Գրիչի «Արուեստ գրչութեան» աշխատությունը, ինչպես նաև «գրչության արվեստի» ավելի ուշ երկերը (Գևորգ Սկևռացի, Գրիգոր Տաթևացի, Անանուն հեղինակ) արժանացել են քննական տպագրության բախտին<sup>26</sup>:

**«Բառք Նարեկացւոյն»:** Միջնադարում կազմվել է Գրիգոր Նարեկացու «Մատենանում» և մյուս գործերում հանդիպող նոր և

<sup>25</sup> Գ. Գասպարյան, «Վարդանաց պատմության» միջնադարյան բառարանը, ՊԲՀ, 1963, թ. 2, էջ 269-275:

<sup>26</sup> Տե՛ս Լ. Խաչերյան, «Գրչության արվեստի» լեզվական-բերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Եր., 1962: Աշխատության 227-287 էջերին հրատարակված է Արիստակես Գրիչի «Վերլուծութիւնք բացերևապես բազմազան բառից և բայից» աշխատության քննադիր՝ համեմատությամբ 9 ձեռագրերի:

անհասկանալի որոշ բառերի բացատրական բառարան: «Մատենանոց գրքերգութեան»-ը մատենակից և «Բացայայտութիւն բանից Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ», «Բառք է գրոց Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» անունները կրող բառարանում բերված և բացատրված են «Մատենակի» Բան-երի շատ բառեր և արտահայտություններ, հաճախ տրված են դրանց փոխաբերական իմաստները: Նախապես այն ունեցել է «Նշանակութիւն խորթին բառից» խորագիրը, ուր բառերը դասավորված են եղել ըստ գլուխների, 16-17-րդ դդ. վերածվել են այբբենական կարգի, լրացվել և վերածվել մոտ 2000 բառ պարունակող բառարանի:

Այս բառարանը որպես հավելված գետնոված է Նարեկի 1774 թ. հրատարակության վերջում «Նշանակութիւնք խորթին բառից ինչ մատենիս» վերնագրով (էջ 347-386): Նրանում արդեն բացատրությունները ժամանակի խոսակցական երանգն են ստացել՝ արևմտահայ ընթերցողին ավելի հասկանալի դարձնելու համար: Տրված է նաև Նարեկի համապատասխան գլուխը, ուր գործածվել է տվյալ բառը, օրինակ՝

**Բոլորապտուղ** - ողջակէզ, թամամ փէշկէշ, բան Ա, 1

**Բռնախոյեան** - դեմ ելլող կտրիճ, ճենկճի, ՂԳ, 18

**Բռնամարտիկ** - կտրիճ, ճենկ ընող, ԿԶ, 2. կամ ուժով կիւլէշմիշ ըլլող, ՂԳ, 13

**Գաղտնակուր** - գաղտնի ուտող, ինչպես՝ պաղոսախից մեջի որդերը, ԿԹ, 2

**Գանչութիւն** - հնչումն, կանչուածք, ՂԲ, 8 և այլն:

Նարեկի այս կամ այն հատվածի իմաստն առավել լիարժեք ընկալելու համար բառարանի որոշ բառահոդվածներ կարող են օգտակար լինել նաև այսօր:

**«Յանդէս բանաստեղծաց»:** Այս բառարանը հոմանշային շարքերի ամբողջություն է, որոնք կազմվել են գեղարվեստական խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման ուսուցողական նպատակով: Այն իբնութային բառարան է և կապված չէ որևէ կոնկրետ ստեղծագործության բառապաշարի հետ: Ամբողջ բառարանն ունի մոտ 150 հոմանշային փնջեր, որոնք պարունակում

են տարբեր բանակի՝ 3-ից ընդհուպ մինչև 50 հոմանիշ բառեր, ըստ այդմ բառարանի բառերի թիվը հասնում է մինչև 1600-ի:

Բառարանի պահպանված բազմաթիվ օրինակներից է ՄՍ 1654 ձեռագիրը, որի ամբողջական վերնագիրն է՝ «Յանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ», վերջինիս 253ա-260ա էջերից քաղել և ներկայացնում ենք հոմանշային մի բանի շարքեր:

Ասել - ոգել, պատմել, տարտասել, բացառոցել, բացիրել

Դեգերել - դանդաղել, խենեշանալ, յիրալ, յահուրել, ջերանիլ

խազմ - վրդով, խռով, դերձիկ, հակորակք, ոխորիմք, կղամ

խաւար - միջին, խաւարաբորբ, թուզ, ուղթր, աղտամուղտ

խրոխտալ - պանծալ, կոկորդալ, կոկովտել, ճոխաբանել,

ճամարտակել

Յամանգամայն - համագոյգ, միաժողով, թափանցանց

Յատու - կարճավճիռ, հակիրճ, համառօտ, փարթար և այլն:

Ճարքերում ընդգրկված բառերը հաճախ ուղղակիորեն հոմանիշ չեն գլխաբառին, սակայն համընկնում են իմաստային ինչ-ինչ առումով: «Յանդէս բանաստեղծաց»-ը հատկապես ուշ միջնադարի հայ դպրոցներում ծառայել է որպես բառապաշարի հարստացման, հոմանիշների ուսուցման միջոց:

**«Բառք քերականին»:** Սա քերականական տերմինների բացատրական բառարան է, սկզբնական շրջանում գործածվել է Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» թարգմանությանը կից, որ հեղինակել է քերականության և նրա մեկնություններին քաջ գիտակ մի հեղինակ: Բառերը նախապես դասավորված է եղել Թրակացու քերականության գլուխներին համապատասխան, շատ տերմիններ բացատրվել են ճիշտ այնպես, ինչպես հանդիպում են Դավթի, Անանունի, Ստեփանոս Սյունեցու և այլոց մեկնություններում: Պարունակում է մոտ 180 բառ-տերմին, օրինակ՝ «մակաւասար-ի վեր քան զհաւասար», «փաղանուն-բազմանուն», «նայք-խոնաւք», «շաղաշար-զուգաշար» և այլն:

Բառարանն ընդգրկում է թե՛ հայերեն բառեր, որոնք ձեռք են բերել քերականական տերմինի արժեք, թե՛ հունաբան նորա-

ստեղծ տերմիններ: Վերջինները հունարեն համապատասխան տերմինի պատճենում են որպես նորակազմություն, ահա նման օրինակներ.

Մականուն - επωνυμον

Մակաւասար - επιχοινων

Մակրայ - επιρρημα

Մակրաշխ - επιμεριζομενον

Մակդիր - επιδετον

Մակաստութիւն - επιτασζ

Մեծասար - πυρριχιοςζ

Մեծավերջ - τροχαιοςζ և այլն:

Քերականությունը եղել է մեր միջնադարյան դպրոցների կարևոր ամարկաններից մեկը, և այս բառարանն իր զգալի դերն է ունեցել քերականության ուսուցման համար, որի վկայությունն է «Բառք քերականին» բառարանի բազմաթիվ ընդօրինակությունների առկայությունը: Բառարանի գիտահամեմատական բնագիրը հրատարակել է Նիկողայոս Ադոնցը Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության բնագրից հետո<sup>27</sup>:

**«Բառք Գաղիանոսի»:** Բժշկագիտական առաջին մասնագիտական այս բառարանն ապացուցում է, որ Հայաստանում բժշկագիտությունը հին արմատներ ունի: 8-10-րդ դարերում արդեն հայերենի են թարգմանված եղել Հիպոկրատի (Ք.ա. 5-րդ դար) և Գաղիանոսի (Ք.ա. 2-րդ դար) աշխատությունները, որոնք որոշակի ազդեցություն են գործել բժշկական մտքի զարգացման վրա: Այս և այլ, նաև արաբական երկերի միջոցով հայերենի մեջ են թափանցում բժշկության, հիվանդությունների, դեղաբույսերի հետ կապված տարբեր բառեր, և առաջ է գալիս դրանք բացատրելու անհրաժեշտություն: Այդպես է 10-11-րդ դդ. ծնվում «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանը՝ անունը վերցնելով հույն գիտնական Գաղիանոսից:

«Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանի տարբերակները սփռված են ձեռագրերում, այն դեռևս 19-րդ դարի վերջին հրատարակության է պատրաստել Նորայր Բյուզանդացին, բայց մինչ օրս մնում է անտիպ:

Միջնադարյան հայերեն բառարանները չեն սահմանափակվում թվարկվածներով: Բազմաթիվ գրչագրական տարբերակներով են պահպանվել նաև «Բառք խորանին», «Բառք վարդապետացն», «Եօթներորդ գլուխ գրոցս, որ կոչի բառագիրք», «Բառք գովասականք», Չաքարիա Գրչի հեղինակած բառարանները և ուրիշներ: Շատ հաճախ նշված բառարանները մեկը մյուսի աղբյուր են հանդիսացել, գրիչներն ըստ հայեցողության ընդգրկել են տարբեր հատվածներ, ներառել որևէ բառարանի մեջ, այդպիսով որոշ դեպքերում դժվար է հստակ սահման դնել այս կամ այն բառարանի, նրանում ընդգրկված բառահոդվածների միջև:

Ընդունված է ասել, որ հայերեն ձեռագիր ամենահին բառարաններից են Չմմառի վանքի (հայ կաթոլիկ եկեղեցին է Լիբանանի համալուս գյուղում) 1123 և 1178 թթ. ժողովածուները, Երևանի Մաշտոցյան Մատենադարանի 12-13 դդ. և 1304-1305 թթ. գրված ձեռագրերը: Հատկապես ուշ միջնադարից պահպանվել են բառարանների մեծ թվով ձեռագիր ընդօրինակություններ: Երևանի Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրացուցակի միայն 7-րդ հատորում ընդգրկված են Արիստակես Գրիչի 9 բառարան, «Երեմիայի Մեղրեցույ բառք Աստուածաշունչք գրոց»՝ 3, Յովհաննես Յարութիւնեանի «Հաւաքումն քերականական բառից»՝ 1, «Բառք քերականի»՝ 2, «Բառք Երրայեցուց»՝ 7, «Թարգմանութիւն պարսից բառից Վարդան գրոց»՝ 2 և այլ բառարանային նմուշներ պարունակող ձեռագրերի նկարագրություններ: Հետագա էջերին կներկայացնենք միջնադարում ստեղծված բառարաններից մի քանի նմուշ:

<sup>27</sup> Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, тип-я Императорской Академии Наук. 1915, էջ 57-64:

## ՆԱԽԱԿԵՏ ԾԱՂԿՈՂԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Գիտական շոջանառության մեջ դեռևս չդրված բառարաններից առաջինը, որի մասին կխոսենք, Նահապետ Ծաղկողի փոքրածավալ բառարանն է:

Երևանի Մաշտոցյան Մատենադարանի 1528 թվահամար ձեռագիրն ամփոփում է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսաց» երկը՝ ընդօրինակված 1649-51 թթ. Շոռոթում (գյուղաքաղաք Նախիջևանում): 583 թղթյա թերթ պարունակող սովոր ձեռագրի գրիչն է Բագարատ Դպիրը, ստացողը՝ Հայրապետ Նազուբենց Շոռոթեցին, ծաղկողը և սրբագրողը՝ Նահապետը: Այս Նահապետ Ծաղկողը հեղինակել և ձեռագրի սկզբում 1ա-2բ էջերին որպես հավելագրություն թողել է համառոտ մի բառարան, որի անունով էլ այն կոչում ենք՝ Նահապետ Ծաղկողի բառարան:

Բառարանին առաջինը անդրադարձել է Գ.Գասպարյանը հետևյալ խիստ համառոտ բնութագրումով. «Հեղինակն իր առջև նպատակ է դրել գրաբար և օտար բառերը թարգմանել աշխարհաբարով, կասեինք՝ ժամանակի խոսակցական բառերով: Դա նշանակում է, որ դեռ 17-րդ դարում այդ բառերն արդեն հեռու էին բուն ժողովրդի լեզվից»<sup>26</sup>: Փոքրիկ այս բառարանին այլ անդրադարձ չենք հանդիպում:

Ինչ է իրենից ներկայացնում Նահապետի բառարանը, և այն ինչ նպաստ կարող է բերել հայերենի՝ հատկապես վաղ աշխարհաբարի բառապաշարի շերտերն ուսումնասիրելու համար:

Նահապետ Ծաղկողն իր բառարանի համար թողել է հետևյալ ծանուցումը (ձեռագրի կրճատ գրությունները բացել ենք).

«Գիտասցէ եղբայրութիւնդ ձեր, ո՛վ ընթերցօղք գրոցս, զի ես՝ մեղաւոր Նահապետս ընդ իմում նուաստութեանս չափու սրբագրեցի զգիրքս և զոր ինչ բառ որ յօտար լեզուաց կայր ի մեջ սորա, զամենայն հաւաքեալ և աստ եղեալ թարգմանութեամբ հանդերձ, զի յընթեմնուլն ձեր եթէ դիպեսցի բառ ինչ, զոր ոչ կարեք գիտել, եկեալ աստ գտանիցեք» (ՄՄ 1528, էջ 1ա):

Ձեռագրի մեկ այլ՝ 515բ էջին Ծաղկողը թողել է նաև բառարանի հետ անմիջական կապ չունեցող մեկ այլ հիշատակագրություն. «Քրիստոս Աստուած ողորմեայ նաեւ յթեամեղ Նահապետիս, որ ըստ կարի իմում եւ ըստ չափու սրբագրեցի եւ ծաղկեցի, եթէ Տերդ հաճեալ հաւանեսցի»:

Հեղինակն ընթերցողին իր ժամանակի խոսակցական տարբերակով բացատրում է գրաբարյան այնպիսի բառեր, որոնք իր ժամանակի հայերենի գործածությունից դուրս եկած լինելով՝ կարող էին անհասկանալի լինել ձեռագրի հնարավոր ընթերցողներին, ինչպես՝ **հերկել** բառը բացատրված է «ցելել», **մատակարար** - «մարանապետ, զոր մանկտաւազ ասեն», **մեղրապոպ** - «ձմերուկ», **նշանախեց** - «կեսգիր կամ կետ», **տարացոյց** - «օրինակ», **տաւաղել** - «ժողովել» և այլն:

Նահապետի բառարանն ընթերցելիս աչքի են ընկնում մի շարք բառեր, որոնց իմաստը որոշակիորեն տարբերվում է գրաբարում տվյալ բառի ունեցած հայտնի իմաստից, զգացվում են բառերի իմաստային «շեղումներ», նոր իմաստներ ու բացատրություններ: Օրինակ՝ **բեկոր** բառի իմաստը հայտնի է («կտոր իրին բեկելոյ, բեկեալ մասն», ՆՐԲ), սակայն այս բառարանում **բեկոր**-ը սովորական իմաստից մի փոքր այլ կերպ է բացատրված՝ «զինուց կտորուած»: «Հոյակապ և խոյակապ» բառահոդվածում Նահապետի բերած բացատրությունը՝ «թագակապ և թագէ կաթուղիկէ», ամենևին նույնական չէ գրեթե բոլոր բառարաններում անկա «հոյակապ, փառաւոր, հռչակաւոր»

<sup>26</sup> Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Եր., 1966, էջ 39:

իմաստներին: Կամ **յեղեղել** բառը բացատրված է՝ «բևեել», **ընթադրել**՝ «յետս դարձուցանել»: Նման օրինակներ կարելի է բերել տասնյակներով:

Բառարանում արձանագրված՝ իմաստային տեղաշարժ ունեցած բառերն ակնառու ցույց տալու նպատակով Նահապետի բացատրությունները զուգադրել ենք «Առձեռն բառարանի» տվյալների հետ: Ընտրությունը պայմանավորված է «Նոր հայկազեան բառարանի» համեմատ ԱԲ-ի ունեցած առավել մեծ բառաքանակով: Ներկայացնում ենք նաև Ստեփանոս Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» հատկապես այն բացատրությունները, որոնք իմաստով մոտ են Նահապետի բառարանի բացատրություններին: Կարծում ենք նման համեմատության միջոցով հնարավոր կլինի տեսանելի կերպով ցույց տալ Նահապետի բառարանում եղած նոր իմաստները, որոնք չունեն մյուս բառարանները: Մի քանի դեպքերում բառերը բացակայում են ԱԲ-ում կամ ՀԲԲ-ում: Բոլոր դեպքերում պահպանել ենք ձեռագրի ուղղագրությունը:

Ախոյեան - մարտակից կամ դանիմ. ԱԲ-(1) առաջ նետուող, (2) հակառակորդ, թշնամի. ՀԲԲ-կռուի մեջ առաջին յարձակվող, Նախամարտիկ

Ամոք - քաղցր. ԱԲ-մեղմ, կակուղ, անուշ. ՀԲԲ-մեղմ, բարեխառն, քաղցր

Բայ - կես բան. ԱԲ-բայ՝ քերականության մեջ. ՀԲԲ-մասն բանի

Բեկոր - զինուց կոտորուած. ԱԲ-կոտորածին կտոր. ՀԲԲ-կոտորված կարծր առարկայի կտոր

Գամագիծ - յաղթող. ԱԲ-գամագիծ գտանեմ ճար անել, մեղադրել. ՀԲԲ-(1) գամագիծ > գամագի(ւ)տ՝ ելք՝ հնար գտնել. (2) վնասել, վտանգել

Գայթ ի գայթ - կաղ ի կաղ. ԱԲ-թոյլ, անհաստատ. ՀԲԲ-ն այս բառը չունի

Գունել - հնարել. ԱԲ-գուն գործել - ջանալ, հնարք ընել. ՀԲԲ-(2) ձևացնել

Գրապանակ - գրաման. ԱԲ-հմայել, վակաս, գրպան. ՀԲԲ-(1) անծի պահպանության գիր. (2) գրպան. (3) գրապան՝ զգեստի եզր. (4) պապկա

Դաշնաւոր - ուխտաւոր. ԱԲ-դաշնակից, դաշնակաւոր. ՀԲԲ-դաշնակից

Ընթադրել - յետս դարձուցանել. ԱԲ-տակը դնել կոխկրտել, տեղաւորել, առջևը դնել. ՀԲԲ-(1) ենթադրել. (2) ոտնակոխ անել, գետին գլորել

Կեղել և կեղեքել - պոզահարել և նեղել. ԱԲ-տանջել, կեղեքել, չարչրկել. ՀԲԲ-կեղեքել, չարչարել, նեղել

Կքրել - ձևանալ. ԱԲ-գլուխ վերցնել, յանդգնել. ՀԲԲ-(1) յոխորտալ. (2) հակառակել, դիմադրութիւն անել

Հայթայթանք - սպառնալիք. ԱԲ-ճար, ճարակ. ՀԲԲ-(4) խորամանկ յիշոցներ, չարամիտ ջանքեր

Հենք - հեծելագօրք. ԱԲ-հեն՝ աւազակ ծովու՝ ցամաքի. ՀԲԲ-(2) ասպատակ, հրոսակախումբ

Հիռ և հեռ - խեռ և Նախանձ. ԱԲ հեռ-կռիւ, հիռ գամ-ման գալ, պտտիլ. ՀԲԲ-հեռ՝ հակառակութիւն, կռիւ, հիռ - պտոյտ, շրջան

Հոյակապ և խոյակապ - թագակապ և թագէ կաթուղիկէն. ԱԲ-հոյակապ՝ փառաւոր, հռչակաւոր, խոյակապ - տե՛ս հոյակապ. ՀԲԲ-հոյակապ՝ շքեղ, փառաւոր, խոյակապ - տե՛ս հոյակապ

Հորդան - առաջնորդ, որ զճանապարհն հորդէ և պատրաստէ. ԱԲ-հորդան տամ - ճամբայ հանել, քշել տանիլ. ՀԲԲ-հորդան տալ՝ ճանապարհ ձգել

Ճատագով - հաւատարիմ. ԱԲ-ջատագով՝ դատարանի պաշտպան, փաստաբան. ՀԲԲ-(3) ընդհանրապես՝ մի անծի կամ մի գաղափարի պաշտպան

Մշտիկ - փունջ, ԱԲ-(1) ծորթիկի կապոց. ՀԲԲ-(1) բոյսերի տրցակ կամ կապոց՝ աւելի նման, մի հեղուկ սրսկելու համար

Մշտկաւ - փունջով. ԱԲ-ն և ՀԲԲ-ն այս բառը չունեն

Մորի, մորոջ - բոյն է, բունոջ. ԱԲ-գազանի բոյն. ՀԲԲ-(2) գազանի որջ, կաղաղ (անտառում)

Յահուր - յանդուզն, ԱԲ-յախուռն. ՀԲԲ-(1) յախուռն. (2) յանդուզն

Յամր - յետի. ԱԲ-ծանր, կամկար, տնտնացող. ՀԲԲ-(2) ուշացած, յետ մնացած

Յանգուցանել - մխիթարել. ԱԲ-իրեն յարմարեցնել՝ քաշել, ընտանեցնել. ՀԲԲ-սիրով կապել, գրավել

Յեղյեղել - քննել. ԱԲ-դարձնել, նոյն խօսքը պես-պես կերպով կրկնել. ՀԲԲ-(2) նոյն բանը տարբեր եղանակով կրկնել

Նհանջել - փոփոխել կամ յետ դարձուցանել. ԱԲ-նահանջել. ՀԲԲ-նհանջ՝ նահանջ

Շարթանալ - պարապել. ԱԲ-հանգչիլ, դադրիլ. ՀԲԲ-շարթաթ պահել, հանգստանալ

Ռրսայս - ոտքն պարզել և վայր անկանել. ԱԲ-երեսն ի վեր՝ կռնրկի վրայ պառկած. ՀԲԲ-տե՛ս յորսայս

Ուծացաւ - մոռացաւ. ԱԲ-ուծանամ պաղիլ, չորանալ. ՀԲԲ-սառել, պաղել (մէկից)

Ձրել - շրջել կամ խախտել. ԱԲ-ջնջել, աւրել. ՀԲԲ-(5) ջնջել, ոջնջացնել, փարատել. (6) հերքել

Սեպ - քարածերպ. ԱԲ-ցցուած քարածայռ. ՀԲԲ-(3) բարձր՝ սրածայր ժայռ

Տարրանալ - գոյանալ. ԱԲ-միանալ, արմատանալ, զօրանալ. ՀԲԲ-տարր դառնալ, նիւթական ձև ստանալ

Տեռագերծել - անարգել. ԱԲ-մերկացնել, թալլել. ՀԲԲ-ն բառը չունի

Քահել - սաստել. ԱԲ-(1) վարել, շարժել, (2) քաւել, ՀԲԲ-1) գահել, (2) քաւել:

Բառարանում գրաբարյան մի շարք բառեր բացատրված են բարբառային, խոսակցական, մի քանի դեպքերում նաև՝ իր ժամանակի օտար-փոխառյալ համարժեքներով: Դրանք հեղինակի շրջանում և նրա տարածքում անշուշտ առավել լայն գործա-

ծություն են ունեցել գրաբարյան համապատասխան հին բառի համեմատ, որը և առիթ է եղել գրաբարյան բառերը դրանցով բացատրելու համար: Այսպես, **վրան** բառի բացատրության մեջ գրված է «չատիր», **անտառ** - «քոլ», **առհաւատչեայ** - «չէնի կամ բէ», **ընդելուզել** - «բանդութարի նշխել», **որոջ** - «թոխլի կամ շիշակ», **կրպակ** - «դութան», **ազոխ** - «ժուռ խաղողի», **անիւ** - «սայլի ակն» և այլն:

Ստորև ներկայացնում ենք Նահապետի բառարանում բարբառային և օտար բառերով բացատրությունների այլ օրինակներ՝ բաղված ձեռագրի 1ա-1բ էջերից: Հեղինակի բացատրական նշումները թողել ենք անփոփոխ.

առեջ - հենք կամ կողեր

ասպարեզ - ձիընթաց մի կամ նետածիզ մի, որ է ճԾ քայլ, կամ մէրդան ասել

արօր - վեցկու գործիքն է

բանակ - ուրդու

գուսան - սազանդար

գրաւական - գրաւ կամ բէ

դարանել - բուսայ մտանել

դրօշակ - փեշ

երեսանակ - պախուց կամ նօխտայ (արաբ. nokta, nukta, թուրք.-ից)

երաստան - աղամբ

ըմբշամարտ - քուշտակիր (ԱԲ-ն համարում է պրսկ. բառ՝ քուշտընգիր կամ քուշտնգուր)

ընդելուզել - բանդութարի նշխել

թովիչ - ափսունչի (ԱԲ թովիչ՝ «օծերու կարդացող, կախարդ»)

լեզոն - գունդք կամ թօթուն

լարծել - ոտնածել

լրտես - ջաշուշ (պետք է լիսեր ջաշուտ, անշուշտ սխալագրություն է) և այլն:

Համոզվելու համար, որ օտար կամ բարբառային այս բառերը եզակի գործածություն չեն Նահապետի բառարանում և տա-

րածված էին իր ժամանակի թե՛ խոսակցական լեզվում և թե՛ գրավոր աղբյուրներում, այն համեմատության մեջ ենք դրել 17-րդ դարի այլ աղբյուրների տվյալների հետ: Նահապետի բառարանում ընդգրկված բառերից շատերը, հեղինակի բերած իմաստներով, կարելի է գտնել մատենագրական տարբեր աղբյուրներում:

**Աղիւս** - քարբիճ. Նահապետի բառարանում բերված **քարբիճ** բառը հնչյունական այլ տարբերակով մի քանի անգամ կիրառված ենք գտնում **Չաքարիա Ագուլեցու «Օրագրութայն»** մեջ. «Վերի թաղի Սուրբ Զրիստափոր անվան եկեղեցին ինքնին փլաւ, զերայ Գ խորանն երած **քարփիչով** ին շինել» (**Չաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, 1938, էջ 95**): «Վանքի հողէն **քարփիչ** երեցին, բերին եկեղեցոյ Դ բունջ պունճաղն Դ փոշիշն արարին» (և.տ. էջ 97):

**Անագ** - կլայեկ. «Միայն մեծամեծք ծածկվին Ա ֆութայով, և ի սանայեաթե պակասեն, արծաթ և պղինձ, **կլայեկ** և արծիճ ո՛չ գտանի բնաւ» (**Յովհաննես Թութունջի, Ուղեգրութիւն, 1968, էջ 303**)

**Առասան** - պարան կամ **շարիթ**. «Միրիջանի տղա Աւետիքն [ետ] մէկ լաւ ջահ, մէկ թօփ **շարիթ**» (**Ակոռու Ս. Յակոբ վանքի քրթուկը, 1977, էջ 206**)

**Բանակ** - ուրդու. «Ես իւրեանց ժԲՈ դուռուշ պարտատը ինիմ, գան **ուրտուն** զօրե զիս գտանեն, տամ անպատճառ»: «Անպատճառ իրեն թեսլիմ անես ու ձեռնեն գիր ամեսս այլ ու Սեֆարին հետն ինձի **օրտուն** դրկես» (**Դիւան Ս. Յակոբայ, 1940, էջ 315**):

**Դատակնիք** - սջիլ ասեն ոմանք և դատավճիռ. «Մահմետականքն հարկէին զդատաւորն ամնել **սիջիլ** մահուան ի վերայ Նիկողայոսի՝ զի սպանցեն զնա, եւ դատաւորն արար **սիջիլ**» (**գրչ. սիճիլ) (Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, 1990, էջ 402**):

**Շիթայ** - բխաւ. «Զանի քանի անգամ զիս բռնեցին, զնդան գձեցին, **բուխավեցին**» (**Չ.Ագուլեցի, Օրագրութիւն, էջ 102**):

**Որոշ** - թոխլի կամ **շիշակ**. «Շիշակ, որ է տարեկան այծ» (**ՄՍ 6275, էջ 219բ**)

**Մաքսապետ** - գօմրուկչի. «Ընդ այն ժամանակն ...Եմին եւ **գօմրուկչի** այնպէս ջերմ սեր ունէին ի վերայ քահանայից եւ եկեղեցաց, որ բնաւ ոչ հրաժարին վարդապետաց կշտէն» (**Մանր ժամանակագրութիւններ (XIII-XVIII դ.), հատոր I, 1951, էջ 248**):

**Սուրհանդակ** - **շաթիր**. «Յորժամ թագաւորն ի դուրս ելանէ, այս է զինաթն՝ ԻԴ յեղաք, ԻԴ **շաթիր** և ԻԴ խաչալամ» (**Յովհաննես Թութունջի, Ուղեգրութիւն, էջ 308**):

**Զանքար** - ճիւլ (127) լիտր է, և լիտրն, **ՅԲ (72) մսխալ**. «Աստուած ողորմի Փշրկէնց Մահդասի Յայրապետին և իւր որդի մահդասի խօճայ Մարգարէին, որ ետուն ընծայ Ա արծաթե կանթեղ, քաշն **ՃԸ մսխալ**» (**Ակոռու Ս.Յակոբ վանքի քրթուկը, էջ 197**):

**Փիղ** - **ֆիլ**. «Շատ կերպ գագան կայ, և է մայրի, առաւել **ֆիլ**, առիւծ, քերկերտան» (**Յովհաննես Թութունջի, Ուղեգրութիւն, էջ 307**):

**Զիմք** - դամաղ. «Ամպարն անոյշ հոտ ունի, զմարդոյ դամաղն անուշ պահէ» (**Չաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, էջ 455**):

Բնագրային այս օրինակների հղումներից դժվար չէ նկատել, որ բառարանում ներկայացված խոսակցական ու փոխառյալ բառերը գործածվել են հիմնականում հայերենի արևելյան հատվածում (Ագուլիս, Ակոռի, Պարսկաստան) ստեղծված երկերում: Դրա ուղղակի ապացույցն են նաև Նահապետի բառարանում հանդիպող **շահուայ** «ճանապարհ արթունի» և **համշահիրին** «ի մի քաղաքե» բառերը, որոնք կարող էին հայերենին անցնել պարսկամերձ հատվածներում:

Իմաստափոխություն կրած և բարբառային բառերից բացի բառարանը հատկանշվում է նաև մի շարք բառերով, որոնք հայերենի մյուս բառարաններով կամ մատենագրական աղբյուրներով չեն ավանդվել, և դա, կարծում ենք, ամենաարժեքավորն է



Նահապետի բառարանի համար. այստեղ արձանագրվել և պահպանվել են մի քանի նորահայտ բառեր, որոնց կազմությունն ու

ներկայացված բացատրությունը հավելյալ բնութայան կարիք ունեն: Ներկայացնում ենք նոր բառերի շարքը՝ բնավող ձեռագրում ունեցած բացատրություններով:

Անբղիտանալ - յիմարել ի տոփանս կամ պշնուլ

Աղտաղտուն - չորային (ԱԲ աղտ բառի տակ «չոր» իմաստը չունի, այլ՝ «աղտ, ցեխ»)

Չախոնդան - զգայարանք

Խնջոյս - լկքի (°) խաղ

Յամշահրին - ի մի քաղաքէ

Յամփսոնն - մի սեղան

Մարմաչել - ակտրծել

Մժեռ - մռայլ և մռախուղ

Մոզգայլ - մոմռալ (ԱԲ ունի մոզգայլիմ «սաստիկ տխել, կու տալ»)


Յորթ և թի - կթոց և թի

Յործիւք - ընծայիւք

Վահ - հին

Վրիծել - տանջել:

Մեծ չէ Նահապետ Ծաղկողի բառարանում ընդգրկված բառահոդվածների քանակը՝ մոտ 500 բառ: Սակայն փոքրիկ բացատրական այս բառարանը միայն բառերի քանակով չէ, որ պետք է արժևորել: Այն, ինչպես փորձեցինք ցույց տալ, պարունակում է վաղ աշխարհաբարի շրջանում բառապաշարային տեղաշարժերը արտացոլող իմաստափոխված, նորակազմ, բարբառային մեծ թվով բառեր և այդպիսով իր ուրույն նպաստն է բերում հայերենի միջնադարյան բառարանագրությանը:



Սկայր 2. Յատված Նահապետ Ծաղկողի բառարանից, ՄՄ 1528, էջ 1բ<sup>29</sup>:

<sup>29</sup> Մեր շնորհակալությունն ենք հայտնում Երևանի Մաշտոցյան Մատենադարանի Ձեռագրագիտության և Մայր ցուցակի բաժնի ղեկավար Գեորգ Տեր-Վարդանյանին՝ գրքույկում տեղ գտած՝ ձեռագրերի որոշ էջեր թվայնացնելու հնարավորություն ընձեռելու համար:

## ԹՈՒՐՔԵՐԵՆ-ՅԱՅԵՐԵՆ ՅԱՆԳԱՎՈՐ ԲԱՌԱՐԱՆ

Հայ միջնադարյան մատենագրությունը բազմաթիվ ուշագրավ տվյալներ է պահպանել Մերձավոր և Միջին արևելքի ցեղերի ու ժողովուրդների, նաև նրանց լեզուների մասին: Բնական է, որ հայերենը չէր կարող անմասն մնալ ժամանակի միջազգային հաղորդակցության լեզուների, այդ թվում՝ արաբական, պարսկական, թուրքական լեզուների հետ շփումներից: Մատենագրական տվյալներին զուգահեռ ստեղծվել և ձեռագրից ձեռագիր են փոխանցվել հայատառ պարսկերեն-հայերեն, թուրքերեն-հայերեն և այլ բառարաններ ու բառացանկեր:

Դրանց մեջ եզակի արժեք ունի, օրինակ՝ հայ-մոնղոլերեն բացատրական բառացանկը՝ պահպանված Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Յայոց»-ում: 51 բառ պարունակող այդ բառացանկը մոնղոլերեն լեզվի առաջին գրավոր հուշարձանն է, որի հիման վրա մոնղոլագետ Բ. Վլադիմիրցովը հայտնաբերել է հին մոնղոլերենի հնչյունական մի քանի համակարգային օրինաչափություններ<sup>30</sup>: Ավելորդ չի լինի բառացանկը մեջբերել ամբողջությամբ.

«Այլ եւ կանայք նոցա կախարոք էին եւ զամենայն ինչ հմայէին. եւ առանց հրամանի կախարդացն եւ դիւթիցն ոչ երթային ի ճանապարհ ուրեք, բայց թէ նոքա հրամայէին: Այլ եւ խօսք նոցա խժականք եւ անծանօթք ի մենջ. քանզի կոչէին զանուն աստուծոյ թանգրի, եւ զմարդ էրէ, հարան, եւ զկին՝ էմէ, ափշի, եւ զանուն հօր՝ էչկա, եւ զմայր՝ աքա, եւ զեղբար՝ աղա եւ զբոյր՝ աքածի, եւ զզուխ՝ թիրօն, եւ զաչս՝ նիտուն, եւ զականջս՝ չիքին, եւ զմօրուս՝ սախալ, եւ զերես՝ յիւզ, նիուր, եւ զբերան՝ աման, եւ զատամն՝ սիսուր, սիդուն, եւ զհաց՝ օթմակ, եւ զեզն՝ օքար, եւ զկով՝ ունէն, եւ զոչխար՝ դոյնա, եւ զգառն՝ դուրդան, եւ զայծ՝ իման, եւ զծի՝ մօրի, եւ զջորի՝ լօսա, եւ զուղտ՝ թաման, եւ զշուն՝ նօխայ, եւ զգայլ՝ չինա, եւ զարջ՝ այտքու, եւ զաղուես՝ հօնքան, եւ զնապաստակ՝ թաբլղայ, թուլայ, եւ զհաւ՝ թախեսա, եւ զաղանի՝ քօբուչին, եւ

զարծուի՝ բուրբուի-դուշ, եւ զջուր՝ ուսուն, եւ զգինի՝ տարասուն(ս), եւ զծով՝ նաուր-տանգըզ, եւ զգետ՝ մօրան-ուլանսու, եւ զթուր՝ իօլտու, եւ զաղեղ՝ նըմու, եւ զնետ՝ սըմու, եւ զթագաւոր՝ մելիք, եւ զպատրոն՝ նուին, եւ զմեծ պատրոն՝ եքա նուին, եւ զերկիր՝ էլ, իրկան, եւ զերկինք՝ գօգայ, եւ զարեգակն՝ նարան, եւ զլուսին՝ սարա, եւ զաստեղս՝ սարդա, հուտուտ, եւ զլոյս՝ օտուր, եւ զգիշեր՝ սոյնի, եւ զգրագիր՝ բիթիքչի, եւ զսատանայ՝ բառահուր, էլէպ եւ զայլ այսպիսի խժական անուանս, զոր ի բազում ամաց մեզ անծանօթ, իսկ այժմ ակամայ ծանուցեալ»<sup>31</sup>:

Ուշ միջնադարում և առավելապես օսմանյան շրջանում հայերենի՝ հատկապես խոսակցական տարբերակների վրա մեծանում է թուրքերենի ազդեցությունը: Դրանով պայմանավորված՝ ձեռագրերում ի հայտ են գալիս թուրքական օտար բառերը բացատրող, մեկնաբանող երկեր, նաև՝ գործնական նպատակներ հետապնդող բառարաններ:

Հայ-թուրքերեն այդպիսի մի ուշագրավ բառարանի հեղինակ է վաճառական և բանահավաք Եղիա Մուշեղյանը (1689-1750): Իր ժամանակին լեզուների իմացությամբ հայտնի Ե. Մուշեղյանը միառժամանակ եղել է Շահ Թահմազի (1722-32 թթ.) արքունի գրագիրը, տարբեր պատվիրակությունների կազմում շրջագայել է Եվրոպայով և Ռուսաստանով: Ծնված լինելով Կարինում՝ գրեթե մայրենիի չափ տիրապետել է թուրքերենին: Լեզվաբանական գիտելիքներ չի ունեցել, իր գրվածքներում, օրինակ, թուրքերենի ձայնեղները հայերեն տառադարձելու շփոթ է նկատվում, դրանք ներկայացրել է հայերենի մերթ խուլերով, մերթ ձայնեղներով՝ *պասմաճի, պականմախ, տոնադ, բայց նաև՝ բուլպուլ, դուրուստ, դաշ* և այլն: Սակայն ձեռքի տակ ունեցել և օգտվել է տարբեր բառարաններից, այդ թվում՝ «Բառգիրք հայոց», «Բառգիրք թուրքի՝ սովորելու» (այդպես է անվանել ինքը՝ Եղիա Մուշեղյանը):

Չեղինակը թուրքերեն ինչ-ինչ բնագրերից շարունակաբար դուրս է գրել բառեր և արտահայտություններ, տվել է դրանց բացատրությունները: Հետագայում այդ բառերն առանձնացրել է զլխաբառերով՝ ըստ հայերեն տառերի: Ձեռքի տակ ունեցած այդ նյութի հիման վրա բառարանն ամբողջացրել է 1720-21 թթ.

<sup>30</sup> Б. Я. Владимирцов, Сравнительная грамматика монгольского письменного языка и халхаского наречия, Л., 1929, т. 2: 13:

<sup>31</sup> Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Յայոց», գլ. ԼԲ: Հայերեն-մոնղոլերեն այս բառացանկի մասին տե՛ս Ռ. Բաղդամյան, Կիրակոս Գանձակեցու մոնղոլերեն բառացանկը, ՊԲՀ, 1979, թ. 1, էջ 129-142:

ընթացքում: Ձեռագիրը պահվել է Ռուսաստանի արխիվներում Եղիա Մուշեղյանի հեղինակած բազմաթույն ձեռագրերի, հաշվեմատյանների, նամակների շարքում: Դրանց մեջ ի դեպ կան նաև բառարանային այլ նմուշներ՝ թուրքերեն-հայերեն փոքրիկ բառարան, ռուսերեն-հայերեն, ֆրանսերեն-հայերեն, լեհերեն-հայերեն բառացանկեր: Ե.Մուշեղյանի թուրքերեն-հայերեն բառարանը առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակել է Բ. Չուգասոյանը<sup>32</sup>:

Եղիա Մուշեղյանի բառարանի կառուցվածքը հստակ է. տրվում է գլխաբառը, դիմացը բերվում է հայերեն իմաստը կամ իմաստները, երբեմն՝ հոմանիշներով, օրինակ՝

Այեար - թամբ

Ակար - եթե

Անճախ - հագիւ, սակայն

Ամանաթ - պահեստ, պատանդ

Այիպլու - բժաւոր, արատաւոր և այլն:

Մեզ համար արժեքավոր են Ե. Մուշեղյանի բառարանի հատկապէս հայերեն բացատրությունները, որոնք արտացոլում են իր ժամանակի հայերենի բառապաշարը: Նրանում հանդիպում ենք իմաստափոխված, հնչունափոխված, փոխառյալ բազմաթիվ բառեր, որ գործածական են հիմնականում բարբառներում, գրական լեզվում չեն հանդիպում: Ահա նման որոշ բառեր.

Ալեվլուկ - դատարկաբանություն

Բբուկ - փետուր

Չարդաստուն - հանդեծարան

Թորոն - թոնիր

Ճայրոտ - սեպ

Պիտվական - պիտանի

Վերերիկ - պատմունճան

Տղիտուն - արգանդ և այլն:

Բառարանը հրատարակած Բ. Չուգասոյանը մատնանշում է Եղիա Մուշեղյանի մոտ պահպանված պահլավերեն 6 բառեր, որոնք հնարավոր է հին հայերենում գործածական են եղել, սակայն գրավոր աղբյուրներով չեն վկայվել և բառարաններում չեն արձանագրվել.

Արբակ (պիլվ. harbak) - նապաստակ (ըստ Ե. Մուշեղյանի բացատրության)

Աւանդակ (պիլվ. avandak) - լեռան գագաթ

Դրաւանդ (պիլվ. dravand) - որոգայթ

Ռընտաթ (պիլվ. randak) - հյուսնի ողորկիչ գործիք

Վառակ (պիլվ. varak) - տոգեղ, տծև

Վտավանդա (պիլվ. vitavandak) - ասպարեզ՝ երկարության չափ:

Բառարանի մասին պատկերացում կազմելու համար ներկայացնենք Ու տառով գլխաբառերն ամբողջությամբ:

Ուլախ - վազկան

Ուլխուր - կապ, խրաց

Ուզանկու - մտրակ

Ույմախ - վայլել, վայելել

Ուլեար - յարմախ

Ուլահ - իլախ (=լեհ)

Ույդուն - ըմբռնելի, յարմար

Ուդուֆ - հմուտ

Ուճա տադուն թափասի - բարձրավանդակ

Ուզմախ - լողալ, լուղալ

Ունդապի - գրիւ նաշիհի

Ուշաղ յերի - սաղմառ, արգանդ, տղիտուն

Ույլուղ - ճուռ

Ուռուպա - բուր (=հանդերձ, կտորտանք)

Ուռմի, ուրմի - Յորմի (=Ուրմիա)

Ուսկարա - բարդան (=կարաս):

«Թուրք-հայերեն բառարանի առաջին փորձերից մեկը՝ Եղիա Մուշեղյանի այս բառարանը ուշարժան է նաև նրանով, որ մեր բառապաշարը հարստացնում է 112 նոր բառերով, չհաշվելով անստույգ բառերը, գաղափար է տալիս 18-րդ դարի առաջին տասնամյակներում հայ արիեստավորական-առևտրական շրջա-

<sup>32</sup> Եղիա Մուշեղյան, Թուրքերեն-հայերեն բառարան (2000 բառային միավոր), աշխատ. Բ. Չուգասոյանի, Եր., 1986: Թեմայի հետ առնչվում են Բ. Չուգասոյանի նաև երկու այլ հոդվածներ՝ «Եռալեզվյան միջնադարյան մի նոր բառարան», «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, թ. 10, էջ 81-91: «Պարսկերենում արաբերենից փոխառյալ բառերի հայատառ միջնադարյան մի բառարան», ՊԲՀ, 1970, թ. 3, էջ 150-184:

նակներում գործածվող հայերենի վիճակը»,- եզրակացնում է բառարանը հրատարակած Բ. Չուգասյանը:

\*\*\*

Նախ նշենք, որ ուշ միջնադարի հայերեն աղբյուրներում եզակի չեն հանգավոր բացատրական բառարանները: Նման մի հակիրճ բառարանի հեղինակ է Հակոբ Նայանը (18-րդ դարի կեսերին պատրիարք Երուսաղեմի և Կ.Պոլսի), որի ոտոսավոր նաև բառախաղ է հիշեցնում.

Ածուխ՝ բեովիւր, մուրխարա,

Կղզի՝ անունն է ատա,

Ծուռ մի՝ նայիք օտարին,

Ելի պաքսայըն, Եատա<sup>33</sup>:

Թուրքերեն-հայերեն բառարանների մեջ իր եզակի տեսակով, ծավալով, բառերի ընդգրկմամբ, գլխաբառերի գեղարվեստակա-նացած բացատրություններով առանձնահատուկ արժեք ունի Մաշտոցյան Մատենադարանի 1635 թվահամար ձեռագրում պահպանված «Հանգաւորեալ բառգիրք թուրքերեն-հայերեն» բառարանը (անվանումը ձեռագրացուցակը կազմողներինն է):

1778 թ. գրչագրված թղթյա այս ձեռագիրն ի մասնավորի ամփոփում է Գրիգոր Կեսարացու «Թուրք միխթարական առ Ամթեցիս վասն մահուան Գրիգորի կաթողիկոսի Ուռհայեցոյ» (էջ 118բ-131բ), որ ոճական բազմաթիվ հնարանքներով արձակ և տեղ-տեղ չափածո գեղարվեստական մի երկ է, Աբրահամ Անկյուրացու «Տաղ վասն առման ընտամպօլու ասացեալ ողորմ և գեղեցիկ» (137ա-147բ) ողբի մի տարբերակը, այլևայլ տաղեր, 149ա-201ա էջերին՝ մեզ հետաքրքրող բառարանը:

Հանգավոր բառարանի հեղինակի և ստեղծման հանգամանքների հարցն իր պարզաբանումն է ստանում 1794 թ. Նոր Նախիջևանում տպագրված «Տետրակ համառօտ բառարանի» խորագիրը կրող բառարանի միջոցով<sup>34</sup>: Հեղինակն է Պօղոս Տիւրիկեցի Թորոսյանը: Հեղինակն առավելապես արևմտահայ խոսվածքի կրող է եղել, որի մասին են վկայում թուրքերենի ձայնեղների տառադարձումը հայերեն խուլերի, վաղակատար

դերբայի «ասեր են», «ասացեր են» կազմությունները: Ողջ շարադրանքը ցույց է տալիս, որ հեղինակը լավ տիրապետել է գրաբարին, գլխաբառերը բացատրելիս հաճախակի է գործածել գրաբարյան այնպիսի բառեր, որ ուշ միջնադարի համար համագործածական համարելի կարելի՝ **ախաւեղազես, անձնագեղ, խառնիճ, զգեսլի** և այլն:

Բառարանի ՄՄ 1635 ձեռագիր տարբերակը որոշակիորեն տարբերվում է 1794 թ. տպագրվածից: Օրինակ՝ միևնույն բառերը բացատրելիս ձեռագրի **ծաղիկ, բազմահոտիկ, հովարիչ** բառերի փոխարեն ունի **ծառ, բազմահատիկ, հովահրիչ**: Տարբերություններ կան նաև տողերի քանակի, բառերի հնչյունական-ուղղագրական կազմության միջև: Մենք հենվում ենք բառարանի ձեռագիր տարբերակի վրա, որ 16 տարով ավելի հին է տպագրից:

Ձեռագիրն ունի շեղ նոտրգիր հստակ ընթեռնելի ձեռագիր: Տեղ-տեղ միայն նկատվում են *ռ-ռ-ս, ա-ու, ի-ե* տառերի շփոթ, որ դժվարացնում է թե՛ թուրքերեն գլխաբառի, թե՛ նրա հայերեն բացատրության ճշգրիտ վերծանումը, ինչպես օրինակ, հստակ չի ընթեռցվում գրված է **ասի, թե՛ առի, տամար-տումար, սիլվի-սելվե**: Առհասարակ ձեռագիրն ամբողջությամբ նոտրգիր է, բայց տարբեր հատվածներ տարբեր ձեռագրերով են գրված: ՄՄ ձեռագրացուցակի հեղինակների կարծիքով՝ ձեռագրի տարբեր մասեր թեև ունեն «գրչական զգալի տարբերություններ, բայց հաւանաբար գրուած են միեւնոյն գրչի ձեռքով՝ տարբեր ժամանակներում»<sup>35</sup>:

Առանց նախաբանի ու նաև խորագրի բառարանն ուղղակի սկսվում է հետևյալ կերպ (կետադրությունը մերն է).

Ապանօս փայտն է ոպնիազ,

Այազ ասէ, յերբ օղն է պարզ,

Ապուռճուպուռն է խառնախորթ,

Ասմայ՝ տնկոյն ասեր են որթ:

Եվ այդպես տրվում է թուրքերեն բառը հայերեն տառադարձությամբ, ապա բացատրությունը՝ ողջ բառարանը ծայրեծայր հանգավորված տողերով: Որոշ բառահոդվածներում հեղինակը

<sup>33</sup> «Արևելեան մամուլ», Կ.Պոլիս, 1894, թ. 15, էջ 466:

<sup>34</sup> Պօղոս Տիւրիկեցի Թորոսյան, Տետրակ համառօտ բառարանի, արարեալ և չափաբերմամբ ոտանաւորեալ ի վայելումն նորավարժից դպրատան, Նոր Նախիջևան, 1794:

<sup>35</sup> Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, Եր., 2009, էջ 703-710:

«հայերեն» բառի համարժեք է գործածում «**հայեվար**», «**հայվար**», ինչպես՝ «Թօխմախն **հայվար** անուանի թակ», «Թօփուզն **հայվար** անուանի լախտ», բայց նաև՝ «Թառղօս տառղուն ասեն **հայլեյրեն**»:

Բառարանը գուրկ չէ նաև բանաստեղծական-տաղաչափական արվեստից: Տողերը հիմնականում 8 (քիչ դեպքերում նաև 7) վանկանի են: Հեղինակը գեղարվեստականացրել է տողերի վերջնահանգերը, թերևս բառարանն ու նրանում բառերի բացատրություններն առավել գրավիչ և ըստ այդմ ուսուցման համար դյուրին դարձնելու նպատակադրումով:

Գլխաբառերի այբբենական խիստ կարգ չկա, բառերը դասավորված են միայն առաջին տառի հիման վրա, ինչպես՝ *ածր, ալըռենկ, աթըն, արտուճ, անաքտար, առփայ, աւատանլըխ, աթըլ...*: Բացակայում են հայերեն ձայնեղներով սկսվող բառերը, որոնք բառասկզբում և բառամիջում փոխարկվել են պարզ խուլերի: Բացակայում են նաև Ժ, Ծ, Ռ, Ր տառերը: Այդպիսով գլխաբառեր կան Ա, Ե, Չ, Է, Ը, Թ, Ի, Լ, Խ, Կ, Հ, Ղ, Ծ, Մ, Յ, Ն, Ծ, Ո, Չ, Պ, Ս, Վ, Տ, Փ, Զ, Օ, Ֆ տառերով:

Բառահոդվածներում ներկայացված և բանաստեղծության տողերով բացատրված է մոտ 1700 բառ, օրինակ միայն Կ տառով սկսվող բառերն են՝ *կեահիճե, կելիրկետեր, կտօրիւմեզ(ո), կելիր, կեօվերճ, կիւլպէշէթեր, կիւնէշիկ, կեճոնկեճե, կենճե, կեօնըն, կիւճենմէկ, կեճիրմէկ, կեզ(ո)ինմէկ, կեյրիտօնմէկ, կեմիւմէկ, կեռիւմէկ, կեյինմէկ, կեվշէկ* և այլն:

Գլխաբառերում շատ կարելի է հանդիպել հայերենի տարածքային այս կամ այն տարբերակը կամ բարբառն անցած թուրքական փոխառություններ, որոնք առատապես հանդիպում են ավելի ուշ շրջանի՝ 18-19-րդ դդ. բարբառներում, սակայն բառարանը ստեղծելու շրջանում այդ բառերը գուցե դեռևս համագործածական չեն եղել, ուստի հեղինակը հարկ է համարել դրանք բացատրել, ինչպես՝ *մայմուն, մէշէ, մէշին, մանդայ, մասխարա, մէյտան, մուշամպայ, մայա, մահանայ, նալպանտ, նախըշ, նեֆէս* և այլն:

Որոշ բառեր ըստ երևույթին **հեղինակային նորակազմություններ** են, որ ստեղծվել են հատկապես հանգ կազմելու համար, օրինակ՝ **գիտածու** և **մեղրածու** բառերով կազմվել են իրար հաջորդող «ծանօթ և **գիտածու**», «ճանճ **մեղրածու**»

(=մեղու) վերջերը, նորակազմ են նաև ընդգծված հաջորդ բառերը՝ «տօլապ – պատուհան, **փեղկերախ**», «քեօրիւկն Է փուբբ\* **իրարծարծիկ**», «փէշտահտայ բառն Է **երկբացիկ**»:

Մի շարք բառեր հիշեցնում են ժամանակի խոսակցական լեզուն, և այդ առիթով կրկին պետք է ասել, որ բառարանի հեղինակը ձգտել է ըստ հնարավորին բառարանը հանրագործական դարձնել: Գլխաբառերը խոսակցական տարբերակով բացատրելու օրինակներ են հետևյալները (բաղել ենք ձեռագրի տարբեր էջերից).

Եօլտաշ՝ ուղեկից Լ՝համըռահ<sup>36</sup>

Եափաելընը՝ միսմիւնաւոր  
Չելտե՝ ապուրն Է շիկաթան  
Չիւբեամ ասելն Է աղբրհար  
Էյէլեմէկ՝ խարտոցել  
Էկիւմէկ՝ գճկնալ, ծռիլ  
Էտեփիլի՝ ամօթխած, խախտ  
Թերգին՝ դերձակ Է և կարուակ  
Թօղլաճին Է կղմընդարար  
Իփէկ՝ բարակուկ թել  
Խոռուխ՝ ազդին Է թթվաշաղ  
Կեռիւմէկ՝ ձգտել, ձգտել  
Կեպէ՝ յղի և ծոցվոր կին  
Մանղալ բառիկն Է խարկնկալ  
Շաշին յիմար, մորոս, փախուկ  
Տուտի մեղուախօսն Է՝ փեթակ և այլն:

Բառարանում խիստ առատ են շաղկապով կազմված (բաղ-հյուսական) բարդություններն ու հարադրությունները, և դա ուրույն ոճ է հաղորդում բառարանին.

Գոնջ և գողի  
Դիրտ և մրուր  
Չօրեղ և ժիր  
Խուրճ ու փունջ  
Ծեր և կրօն

\* Աստղանիշ կողմ այս և մյուս բառերը բերված են ձեռագրի գրությամբ:

<sup>36</sup> Համ բաղադրիչով կազմված այլ բառեր են՝ *հաւքահիրին, համկիսն*, հմմտ. Ն. Պողոսյան, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարոյան աղբյուրներում (16-18-րդ դդ.). եր., 2014:

Ծերպ և փապար  
 Ծոյլ և պղերգ  
 Կակուղ և թոյլ  
 Կից և կցակ  
 Համր ու մունջ  
 Ղամբար և ջահ  
 Նեղ ու սուղ  
 Նոխմ և մուբ  
 Շամբ և շամբակ  
 Ողջ և լման  
 Որմ և պատ  
 Ուռն և կռան  
 Պայթել և ճայթել  
 Պսակ և թագ և այլն:

Բառարանում բառերը բացատրելու ոճ պետք է դիտել նաև նվազական ածանցներով կազմված բառերի առատությունը, որոնց միջոցով մի կողմից հնարավոր է լինում հանգեր կազմել, մյուս կողմից՝ խոսակցական երանգ հաղորդել բառահոդվածներին.

Ազուցիկ	Դաշտակ
Ամպակ	Չարդիկ
Անօսրիկ	Հանքիկ
Ասպաստանիկ	Ձողակ
Բառիկ	Նաւիկ
Բարձիկ	Շնորհուկ
Բուսիկ	Փորոդիկ
Գոլորշիկ	Զգիորիկ և այլն:

Թուրքերեն-հայերեն հանգավոր բառարանի՝ հատկապես թուրքերեն գլխաբառերի քննությունը պետք է շարունակել թուրքագիտության, հայերեն-թուրքերեն ուշ միջնադարի առնչությունների շրջանակի մեջ: Ծիշտ է, նրանում բերված ոչ բոլոր բառերը կարող են թուրքական ծագում ունենալ, կան նաև պարսկական և արաբական ծագման բառեր (պահիր «գարուն», քիլ «կավ», պաղ «այգի», տեվիր «շրջանակ» և այլն), սակայն դրանց մի մասն էլ հայերենին է անցել թուրքերենի միջնորդությամբ: «Արաբերեն ու պարսկերեն բառերից այսօր մեր լեզվի մեջ կյանք ունեն գրեթե

միայն այն բառերը, որոնք թուրքերենի մեջ էլ կան»<sup>37</sup>: Նման հարցերի պարզաբանումը, սակայն, դուրս է մեր նպատակադրումից:

Իսկ այստեղ՝ բառարանը համառոտ ներկայացնելուց հետո մեջբերում ենք մի հատված Ն տառով սկսվող գլխաբառերից, դա առավել տեսանելի պատկերացում կարող է տալ հանգավոր բառարանի մասին:

Նաբլիթմեկ վիպել կամ ճառել,  
 Նաղ(զ)ար վերմէն է գչարել:  
 Նանէն, որ անանուխ խոտիկ,  
 Նարն է նուռն բազմահոտիկ:  
 Նօխտան է կետ, Նիշ ինչ փոքրիկ,  
 Ներկիզն եղև Նարկես ծաղիկ:  
 Նագիթն է նուրբ, գողտր և փափուկ,  
 Նեմլին՝ թաց, գիճ Լ՝ասի տամուկ:  
 Նեֆտն է նաւթ, իւղն խստավար,  
 Նալպանտն և Նալչաճին՝ պայտառ:  
 Նէթես՝ ռիշտ ճիշտ և ժլատ,  
 Նալ և Նալչայ անուանին պայտ:  
 Նախըս՝ դժնեայ, վես, կամակոր,  
 Նախշը բառն է ճամկաւոր:  
 Նեֆես՝ շունչ հովհանիչ\* թոթոց,  
 Նասըրըն կոշտ վերք է կամ խոց:  
 Նիզամ կանոն Լ՝ասի սահմանք,  
 Նիագ՝ աղերս կամ աղաչանք:

Իր բնույթով սա բացատրական բառարան է, հնարավոր է՝ ունեցել է ուսուցողական նշանակություն: Այդպիսի համոզմունք է հայտնում նաև Գ.Գասպարյանը՝ նշելով. «Պարզվում է հեղինակի նպատակը՝ ունենալ զուտ դպրոցական-ուսուցողական բառարան, այն է՝ աշակերտները անգիր անելով սովորեն տաճկերենը: ...Բառարանի թարգմանությունից բացի ուսուցողական մի կողմն էլ այն է, որ հեղինակը տալիս է որոշ բնութագրումներ՝ առյուծը գթոտ է, արջը վավաշոտ, սոխը կծվաբեր և այլն»<sup>38</sup>:

<sup>37</sup> Բ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 281:

<sup>38</sup> Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 192:

## «ԲԱՌԱՐԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ»

Դեռևս ոչ լիարժեք ուսումնասիրված, գիտական շրջանառության մեջ չդրված բառարանագրային մեկ այլ հուշարձան է ներկայացվելիք հաջորդ ձեռագիր բառարանը: Բժշկական բառարաններից վերևում առիթ ունեցանք խոսելու «Բառք Գաղիա-նոսի» մասին: 10-րդ դարի ընթացքում ստեղծված այս բառարանից բացի բժշկագիտական բնույթ ունեն նաև «Թարգմանութիւն դեղոց», որ ձեռագրերում ի հայտ է գալիս 13-րդ դարից և բույսերի, ծաղիկների, հունդերի և նմանիքների օտար անուններ է բացատրում, ինչպես՝ *այթխար, բահման, բարոնած, խարտալ* և այլն, նաև՝ «Անուանք դեղերոյ հայերեն և արապկերեն և լատին բառով» (15-րդ դ.): Բառարանային արժեք ունի նաև Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետ» բժշկարանի երկրորդ բաժինը<sup>39</sup>, որը բառահոդվածների ձևով ներկայացնում է 3500-ից ավելի բուժիչ բույսերի, կենդանիների և հանքային նյութերի անվանումներ ու նրանց հոմանիշները և որը համարվում է միջնադարի հայկական բժշկության գագաթը: Հայերեն բժշկական բառարանները, սակայն, նշվածներով չեն սահմանափակվում:

Մաշտոցյան Մատենադարանի թ. 6275 ձեռագրում պահպանվել է 55 էջ ընդգրկող բառարան – բժշկարան (էջ 184ա - 239բ), որ պատկառելի ծավալ է միջնադարյան բառարանի համար, մանավանդ եթե հաշվի առնենք, որ գրված է մանր նոտրգրով: Բառարանի ամբողջական խորագիրն է՝ «Բառք են այսոքիկ, որ կոչի բառարան բժշկական շարայարեցեալ բժշկական վարդապետաց հնոց և նորոց, արարեալ ի վերայ այբուբենի»:

Ձեռագիրը 17-րդ դարում գրչագրված ժողովածու է, ուր բժշկական բառարանից բացի՝ ընդգրկված են նաև Ամիրդովլաթ

<sup>39</sup> Տե՛ս Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց Անպետ կամ բառարան բժշկական Լիւթոց, աշխ. Կ. Բասմաջեանի, Վիեննա, 1926: Ա. Ամասիացու մյուս երկը տե՛ս՝ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկության, աշխատ. Ստ. Մալխայանցի, Եր., 1940: Ուսումնականության այս է, աշխատ. Դոնարա Կարապետյանի, Եր., 2014:

Ամասիացու «Ուսումն բժշկութեան», «Ախրապատին» (Ա-Զ տառերը), «Անգիտաց անպետ» աշխատությունները, նաև՝ «Այս է Լիւթ սրբալոյս միւռոնին», «Յաղագս հողմոց, օրոց և ջերմութեանց», «Յիշեմք զինչ խառնուած դեղեր կայ» քաղվածո հատվածները:

Նշված ՄՄ 6275 ձեռագիրն առհասարակ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության բնագրային հիմնական աղբյուրներից մեկն է, այդ թվում 1940 թ.՝ Ստ. Մալխայանցի հրատարակության համար: Ընդ որում այս ձեռագիրը նշված է որպես «Միջին հայերենի բառարանի» սկզբնաղբյուր, սակայն թռուցիկ դիտարկումն իսկ ցույց է տալիս, որ թ. 6275 ձեռագրում ընդօրինակված «Օգուտ բժշկութեան» տարբերակում կան բազմաթիվ բառեր, որոնք չեն մտել «Միջին հայերենի բառարանի» մեջ, ինչպես օրինակ՝ **գնձակցաւութիւն, ցորեկկուրութիւն, տրփատել** (սիրտն տրփատի), **լիգելիք, ծորով ապուր** և այլն:

«Բառարան բժշկական» իր բովանդակությամբ բժշկական բառերի, տերմինների, բույսերի, հիվանդությունների բացատրական բառարան է, թվում է՝ քաղված հայերեն և օտար բազմաթիվ աղբյուրներից ու բառարաններից: Զաղվածո լինելն է հուշում ոչ միայն խորագրի «վարդապետաց հնոց և նորոց» նշումը, այլև բառահոդվածների պարունակությունը: Շատ հաճախ միևնույն գլխաբառը հաջորդաբար ներկայացվում է հնչյունական տարբերակներով և տարբեր բացատրություններով, դրանք անշուշտ վերցված են տարբեր գրքերից, ինչպես՝

Եղբարոս, որ է եղբուրոս, որ խարպախ, որ է խրպախ

Եղբուրոս, որ է վրացի կոճ

Եղբիւրոս, որ է հաւթան և ինքն վրացի կոճն է, և այլ ասեն խարբուկ, սպիտակ մրտին տակն է

Եղբարոս, որ է հաւթանի և ինքն վրացի կոճն է, որ է խարպակ:

Մուր, որ է մոջիմ

Մոջիմ, որ է նամ

Մոջիմ, որ է տասրած

Մոջիմ, որ է մավրբօշակ:

Տունկ, որ է այգի

Տունկ, որ է տեկեկ

Տունկ, որ է խաղողին ծանն:

Նույն բառի հնչունական և բառային տարբերակները բառարանի մեջ մուծելը տարածված իրողություն է բժշկարանների համար: Դեռևս Ամիրդովլաթ Ամասիացին իր «Անգիտաց անպետ»-ի ներածական մասում գրքի կազմության մասին խոսելիս հարկ է համարում նշել՝ «Եւ կայ դեղ, որ հինգ վեց անուն ունի, և ամեն անուանքս յիշած է ի վերայ գրին, թէ զինչ գիր որ ի յառաջն գայ»<sup>40</sup>: Այս տարբերակները նաև հուշում են, որ իր ժամանակ դրանք գործածական են եղել հայերենի որոշակի շերտերում, և բառարանագիրն իր ունեցած բոլոր ձեռագիր տվյալները հարկ է համարել ներմուծել բառարանի մեջ այն առավել լիարժեք դարձնելու նպատակով: Կրկին հիշատակենք Ա. Ամասիացուն. նա իր բառարանը «աշխարհաբառ» գրելու պատճառների շարքում թվարկում է նաև օտար տերմինների առատությունը և գրում «Բ պատճառն այն է աշխարհաբառ լինալուն, որ այլ բառեր խառնեցաք, որ մեք ի տաճկաց բառն գտաք և պիտուան էր այս բառերս մեզի, վասն տաճկանց ստածումն առնալուն համար»:

«Բառարան բժշկական»-ում բառերը բացատրված են երեք կերպ. օտար գլխաբառը բացատրված է հայերեն համարժեքով, օրինակ՝ «այուրում, որ է ոսկի», «աւզար, որ է ջուր», «ալթունլունճայթ, որ է արծուճանկ», «աղլեմիա, որ է ոսկոյ և արծաթին այրած աղտերն», «կանդումն, որ է ցորեն», «կիֆալ, որ է գլուխ», «ճատայ, որ է չափիչն» «մահի, որ է ձուկ» և այլն:

Հայերեն բառերը բացատրված են օտար համարժեքով, «ածուք, որ է պաղչայ», «աղիք, որ է մայեայ», «անմեռուկ, որ է փրփրեմին հունդն և այլ ասեն շրթայ», «գարի, որ է շեր, որ է շայիր», «խոզանձուկն, որ է տլֆին», «կրունկ, որ է քայա» և այլն:

Օտար բառը բերված է օտար համարժեքով. «ալթուն, որ է գահապ», «ախլուլ, որ է թարպօղայ», «աղրապ, որ է տօվայի ֆարսի», «յարար, որ է նայե», «նամր, որ է դաբլան», «սեկուլ, որ է մանսուրն և իւր պտուղն», «տոմալան, որ է քամահ» և այլն: Նման բառահոդվածները գերակշռում են, և դա բնական պետք է համարել միջնադարում հատկապես բժշկագիտության համար, որի տերմինների որոշակի մասը ուներ արաբական ծագում:

<sup>40</sup> «Անգիտաց անպետ», 1926, էջ 24:

Նման դեպքերում հաճախ օտար բառին հաջորդում է նաև հայերեն հավելյալ բացատրությունը՝ «անտիճայ, որ է հաշիշլբալպն և հայերեն հօտիս կասեն»:

Բառարանում կարելի է գտնել տասնյակ նորակազմ, փոխառյալ և իմաստափոխված բառեր: Նոր՝ այլ աղբյուրներում չհանդիպող բառերից են, օրինակ՝ **կանաւոր, կրծացաւութիւն, մանօղակ, ուժովութիւն, վարնորակ, օճահար** և այլն:

Առանձին քննության թեմա է որևէ հասկացության իմաստային դաշտին առնչվող նույնանիշ տերմինների առկայությունն ու դրանց բացատրությունը բառարանում: Մենք տարբեր էջերից բաղել ենք **գինի, խաղող, հաց** (ցորեն) հասկացությունները, որոնց վերաբերյալ մի շարք բառեր են բերվել և բացատրվել բառարանում

#### ԳԻՆԻ

Ամալիս, որ է խաղողի գինի:

Ճամհուրի, որ խաղողի գինի:

Միսդար, որ է պիղծ գինին, որ աւիրէ և շուտ հարբեցնէ զմարդն խիստ:

Մուտամ, որ է գինի:

Մուլ, որ է գինի:

Ոլովինայ, որ է գարու գինի:

Սեքի, որ է գինի վաղար, որ է գինի:

Վարհիզ, որ է գինի:

Տիլայ, որ է հին գինին:

Տլայ, որ է գինի:

#### ԽԱՂՈՂ

Մայանկու, որ է գինու խաղող:

Վին, որ է սև խաղող:

Տենէկ, որ է տունկ խաղողի:

Քուրմ, որ է քիմն, որ է տունկն խաղողին:

#### ՀԱՏ

Խուլագ, որ է հաց:

Կանդումն, որ է ցորեն:

Հանդայ, որ է ցորեն:

Հավարի, որ է լուացած ցորենին ալուրն և բարակ մաղած և եփած:



Հաց լուացած, որ է ցորեն լուացած, որ է նաևի շուշթան, որ է լուացած ցորենին հացն:

Ղամահի, որ է հանդայ, որ է ցորեն:

Զալուկ, որ է կարմրուկ ցորենն:

Ֆատիր, որ է բաղարճ հացն:

Ֆիրիկ, որ է եղի ցորենն, որ այրեն ի կրակն և ուտեն և թուրքերեն ութմայ կասեն:

Ուշարժան է վերջին բառահողվածը՝ **Ֆիրիկ**, որ **Ֆիրիկ** անվան հնչյունական մի նոր տարբերակ է ներկայացնում, Ամիրոզվաթ Ամասիացու «Անգիտաց անպետն» ունի **Ֆրիկ** տարբերակը նույն բացատրությամբ: Հնչյունական տարբերակի մի ուրույն օրինակ է նաև «**Տարիխ**, որ է չոր մանտր ձուկն» բառահողվածը, այն **տառեխ**-ի մեկ այլ տարբերակ է ներկայացնում:

«Բառարան բժշկականը» չի սահմանափակվում զուտ բժշկագիտության ոլորտով, այն ունի երկրագիտական, բուսաբանական, կենսաբանական բազմալեզվյան բացատրական բառարանի բնույթ, որում հայերենից արաբերենի ու նաև պարսկերենի ու թուրքերենի (և հակառակը) թարգմանված-բացատրված են բժշկական, մարդակազմական տերմիններ, բույսերի, կենդանիների, քարերի և նման այլ անվանումներ: Այդպիսով բառարանը ստանում է իր ժամանակի բժշկական, բուսաբանական, երկրաբանական բառերի հանրագիտարանային արժեք՝ բացատրություններով, աղբյուրների լայն ընդգրկմամբ, հոմանիշային շարքերով: Միաժամանակ մեծ նշանակություն ունի այդ շրջանի հայերենի հնչյունական, բառապաշարային բնորոշ իրողությունները բացահայտելու համար:

## «Ի ՎԵՐԱՅ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ԱՆՈՒԱՆՔ ԶԱՂԱՔԱՅ»

Աշխարհագրական անունների հայերեն գիտական բառարաններ ստեղծվել են 19-րդ դարից, և դրանց թվում, զուտ բառարանային առումով, հիշատակելի են Նշան Ճիվանյանի «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական յատուկ անուանց» (1879), Սուքիաս Էփրիկյանի «Պատկերագարդ բնաշխարհիկ բառարանը» (1903-1905), Հայնրիխ Յուլբշմանի «Հին Հայոց տեղույ անունները» (թարգմանությունը գերմաներենից՝ Յ. Բ. Պիլեզիկճյան, 1907), հայ տեղանվանագիտության պսակը՝ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանն» իր 5 հսկա հատորներով<sup>41</sup>:

Մինչ մերօրյա արդյունքին հասնելը հայ աշխարհագրական բառարանագրությունը երկար ճանապարհ է անցել: Հայերեն աշխարհագրական անունների բառարանային-նկարագրական առաջին տեղեկությունները հասնում են, եթե չհաշվենք Զենոֆոնին, Պտղոմեոսին, Ստրաբոնին և օտար այլ հեղինակներին, մինչև Մովսես Խորենացի: Մեր իրականության մեջ Պատմահայրն է առաջին անգամ փորձել պարզել բազմաթիվ տեղանունների ծագումը, տեղադրությունը, ինչպես՝ *Հայք*, *Հարք*, *Միւնիք*, *Արագած*, *Արմաւիր*, *Արտաշատ* և այլն: Հետագա դարերի պատմագրական երկերից առանձնանում է հատկապես Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Միսական» (1299 թ.) երկում պահպանված՝ Տաթևի վանքին հարկատու մոտ 700 գյուղերի անունների ցանկը, այն պարունակում է նախագրային հայերենի և իր ժամանակի բարբառների հետ կապված մի շարք անուններ՝ **Բորտի**, **Դերբն**, **Երեծ**, **Խումզ**, **Կմեզ**, **համս**, **Ձղու**, **Տատան** և այլն, որ այլ աղբյուրներից հայտնի չեն և եզակի կիրառություններ են:

<sup>41</sup> Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Յ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Եր., 1986-2001:

Աշխարհագրական անունների փոքր բառարան է Գրիգոր վրդ. Կեսարացու՝ 16-17-րդ դարերի սահմանագծին կազմած «Անուանք քաղաքաց» բառարանը: Այն պահպանվել է մի շարք ձեռագրերով, հավելվածի տեսքով «Աշխարհացոյց» անվանումով լույս է տեսել նաև «Բառգիրք հայոց»-ին կից (Ա տպ., էջ 337-344): Իր ժամանակի պահանջներին և ընդունված սկզբունքներին համապատասխան՝ Գ. Կեսարացու այդ բառարանը տալիս է տեղանուն-գլխաբառը, դրա տարբերակը, որոշ դեպքերում՝ համառոտ նկարագրություն երկրների, գավառների, քաղաքների անվան, տեղադրության մասին, լեզվական կամ պատմական դիտարկումներ գրեթե չկան, շարադրանքի լեզուն վաղ աշխարհարաբարյան է: Ահա Գր. Կեսարացու բառարանի սկիզբը.

Աւետեաց երկիրն Երուսաղէմ է  
Արաբիայ - Ուռում դալէ  
Անտիոք - Անթաքիայ է  
Արարատեան - Էջմիածին է  
Արտաշատ - որ է Դվին, Երևանու քովն է  
Ալանք - Շրուան է իւր երկրովն և այլն:

Աշխարհագրական բնույթ ունի 17-րդ դարի վերջին նաև Դովսեփ Վարդապետի կազմած բառարանը, որում հեղինակը զանազան աղբյուրներից հավաքել և ներկայացրել է աշխարհագրական մեծ թվով անուններ:

\*\*\*

Իր բնույթով և կազմությամբ աշխարհագրական բառարան է ՄՄ 2271 ձեռագրի 196ա-210բ էջերում պահպանված «Ի վերայ այրուբենից անուանք քաղաքաց» աշխատությունը: Ձեռագիրը գրվել է 1724 թ. Սպահանում, գրիչն ու ծաղկողն է Ավետիս Երեցը, գրված է փոքր նոտրգիր տառերով, տեղ-տեղ ունի զարդարուն գլխատառեր, գունավոր վերնագրեր:

Աշխարհագրական այս բառարանում ներկայացվում է գլխաբառը, անվան հնարավոր տարբերակները, ապա տվյալ վայրի մասին պատմական, աշխարհագրական կամ կրոնական հակիրճ տեղեկություններ: Այսպես.

«Ագաթափարթ, որ է Մծբին և այժմ Նսեպին կոչի, որ է այժոռ Սրբոյն Յակոբայ հայրապետին:

Ազովտոս և Գազայ և Ասկաղոն և Ակարոն, գաւառք են այլազգեաց ի կողմն հարաւոյ Երուսաղէմի:

Աթախ և Զենի, Թերջան է և Բալու, ուր գգիրն եգիտ Մետրոպ վարդապետն, այսոքիկ Արշակունիք կոչին:

Ալանք, Շարվան, Շամախի: Շարվան Արտուշանն շինեաց և կոչեաց անուանք Շարվան Շամախի, կայ ի մտից Երասխն, ի մէջ Արախոյ և Կուր գետոյ, զոր Աղուանի կոչեն, ուստի էր Օտա իշխանն Տրդատայ, ուր մեծ եկեղեցին է Ամարաս, ուր կայ Նշխարքն Գրիգորի Աղուանից կաթողիկոսին:

Ակռականդ, Կանդիսայ է:

Աղիովիտ և Զաջբերունի, Արծեշ է, ուր կայ Սուրբ ուխտն Մետրոպայ և Արծուաբեր և Ուռնկարու Սուրբ Նշանն ամենազոր:


Ակունք յեփրատի, ծաղկաւետ վայելչութիւնք, Զօսա տաղին է:

Այրարատ, Էջմիածինն է և Կարբի, ունի բազում գաւառս՝ Արշունիկ և Ձոր Երասխ, Կաղզվան է, ուր կայ Սուրբ ուխտն Թաթոյն և Վարոսի վանքն, ուր գթումաս առաջնորդ կացոյց» (ՄՄ 2271, էջ 196ա-197ա):


Եվ այս սկզբունքով բառարանում նկարագրված են Աֆրիկայի հյուսիսի, Ասիայի, Մերձավոր Արևելքի, Եվրոպայի մի շարք տարածաշրջաններ ընդգրկող տեղանուններ, այդ թվում երկրանուններ՝ *Անկլիա, Բուլղարայ, Ըսպանիայ, Ընկուզաց երկիրն, Պոսնայ, Զնդուստան, Զինումացին*, հիշատակվում են՝ *Փարեգ, ազգն ըռուսաց, ֆռանկք* և այլն:

Բառերը բերված են հիմնականում այբբենական կարգով, բառարանային դասավորությամբ և ոչ թե աշխարհագրական ձեռնարկի կամ «Աշխարհացոյցի» նկարագրությունների նմանությամբ: Թեև որոշ դեպքերում բառահոդվածները միտված են աշխարհագրական նկարագրությունների, ինչպես Արագած անվան դեպքում է.

«Արագած, մեծասքանչ լեռան, որ ստորոտն մինչև ի կատար լերինն մին աւուր և կես ճանապարհ է, ի չորս բաժանին լերինք մեծամեծք, և ի մէջ նորա զոգ հովտաձև և յարթայատակ, և չորեսին ծայրք լեռանցն հանդեպ միմեանց խաչանման» (էջ 198ա): Առհասարակ բավականին մանրամասն է նկարագրված Արագածի շրջակայքը, որ կարող է ցույց տալ հեղինակի այդ վայրերից լինելը: **Տեղերավանքի** մասին, օրինակ, ասվում է՝ «ուր կայ լրջակապուտ Սբ. Նշանն»:



Նկար 3. ՄՄ 2271 ձեռագրի «Է վերայ այբուրենից անուանք բաղաբաց» բառարանի առաջին էջը:



Նկար 4. Հատված ՄՄ 2271 ձեռագիր բառարանից:

Տեղ են գտել բնիկ հայերեն կամ հունարեն տեղանունների օտար, թուրքական տարբերակներ, որ անշուշտ լայն գործածություն և բաղաբացիություն էին ստացել 17-18-րդ դարերում, օրինակ՝ «Արծեկ - Ալտնավուզ», «Դվին - Թօփրա դալասի», «Կեսարիայ - Ղայսարիա» և այլն:

Բառարանում կան ուշագրավ մի շարք գլխաբառեր, որոնք նոր տվյալ կարող են հաղորդել այս կամ այն տեղանվան՝ ուշ միջնադարյան տարբերակի մասին, ինչպես օրինակ՝

- Արամիտու Բաղդատն է:
- Արծրունիք Սասուն է:
- Արցախ Խաչկեն է:

Բեթապատ Սուլօֆ է:

Յանի Ղարսն է:

ՊԷԼԵ ՊԵԼՊՐԱՏՆ է:

Սօրացուց գաւառն Բաբերթ է:

Վեհրեժ Վանատիկն է:

Վերիվան Երևան է:

Վրացտուն Գուրճիստան է:

Բառարանի մի քանի տեղանուններ եզակի նմուշներ են, չեն հանդիպում նաև «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում», մանավանդ որ մեկ միլիոն քարտ պարունակող քարտարանը, որի հիման վրա հեղինակները կազմել են նշված բառարանը, ձեռագիր մատյանների տվյալներ չունի: Այլ աղբյուրներում չհանդիպող տեղանուններից են՝

**Անիաթան**, Բագրատունեաց ձորագետն է, Անին է:

**Գոթացիք**, Զօթայիեայ է:

Առբերան և **Տարբերան**, Բերկրի է:

**Արգեղտան**, Անկղ է:

Աւան գեղաքաղաքն ասի **Արագածուստն**, Իգաստունն է:

Հավանական պետք է համարել գրչագրական վրիպակներից ի հայտ եկած նման տարբերակների առկայությունը՝ *Արագածուստ* <*Արագածոտն*, *Արգեղտան* <*Անգեղտուն* և այլն: Հավանական է նաև, որ բառարանի հեղինակը, տարբեր աղբյուրներից օգտվելով, իր ձեռագրի մեջ է մուծել միևնույն անվան տարբերակներ, ինչպես օրինակ *Արծրունիք*-ը հանդիպում է երկու տարբեր տեղերում՝ տեղորոշվելով որպես *Սասուն* և *Սասան*:

Ուշադրության արժանի է բառարանի հեղինակի մղումը՝ ամեն տեղանվան դեպքում ըստ պատշաճի ներկայացնելու տվյալ վայրում գոյություն ունեցող քրիստոնեական սուրբերի մասունքները, սրբատեղիները: Բառարանում բերված պատմական որոշ տվյալներ կարող են հետաքրքիր լինել, օրինակ Բալու քաղաքի մասին ասում է՝ «ուր զգիրն եգիտ Մեսրոպ վարդապետն»: Որոշ տեղանուններ ուղեկցվում են հակիրճ պատմություններով, որպես օրինակ բերում ենք Հերմուսօլիս (քաղաք Եգիպտոսում) գլխաբառի տակ Հիսուսի հետ կապված մի պարականոն պատմություն՝ աշխարհաբարի փոխադրված.

«Նախապես այնտեղ գնաց Քրիստոսը, մի այրի կնոջ տուն, որը վկացրեց ապա սրբեց Նրան զոգնոցով և ասաց. «Ըո մայրը

նման է Արուսյակի, իսկ դու՝ Երկրի», նաև շատ գովասանական բաներ ասաց: Իսկ Քրիստոսի լվացման ջուրը ուր որ թափվեց, մի զարմանալի ծառ բուսեց, որ բուժիչ հատկություն ունի: Եվ վեց տարի Տերն ապրեց Եգիպտոսում»: Համանման այլ պատմություններ նույնպես կարելի է հանդիպել տեղանունների բացատրություններում, որ անշուշտ բանահյուսական որոշակի արժեք են ներկայացնում:

Ձեռագիր «Ի վերայ այբուբենից անուանք քաղաքաց» բառարանն, այդպիսով, արժեքավոր սկզբնաղբյուր է դառնում հայ միջնադարյան տեղանվանագիտության, ուշ միջնադարում աշխարհագրական պատկերացումների մասին, նաև բանահյուսական և պատմական որոշ նոր տվյալներ է պարունակում արժանի բնության:



**ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՅԱՅՈՒ**  
**«ԲԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ» ԲԱՌԱՐԱՆԸ**


Փիլիսոփայական ուղղվածության բառարանային փորձեր ունենք դեռևս 5-11-րդ դարերում: Ձեռագրերում հանդիպող այդպիսի նմուշներից է «Սահմանք իմաստասիրականք»-ը, որ փիլիսոփայական, աստվածաբանական, մասամբ նաև բնագիտական սահմանումների հավաքածու է: Այն Նեոպլատոնական փիլիսոփայական դպրոցը ներկայացնող մի անհայտ հեղինակի ստեղծագործությունն է, հունարենից հայերեն է թարգմանվել 6-7-րդ դարերի ընթացքում: Նրանում տրվում են մոտ 420 տերմինների (օրինակ՝ տեսակ, պատահումս, տարրորոշումս, ճշմարիտն, հաւատ, ապացոյց, յարացոյց և այլն) Արիստոտելի, Պլատոնի և այլ փիլիսոփաների սահմանումները:

Գրիգոր Նյուսացու (335 - 394թթ.), աստվածաբան, փիլիսոփա, եկեղեցական գործիչ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու հետ կազմում է «երեք մեծ կապաղովկիացիների» եռյակը) աշխատություններից բաղված սահմանումների ցանկ է «Նիւսացւոյ» բառարանը, որ հայերեն է թարգմանվել մոտ 8-րդ դարում և նախապես կցված է եղել Նյուսացու երկերն ընդգրկող ձեռագրերին:

Փիլիսոփայական բառարանի հեղինակ է նաև Գրիգոր Երուսաղեմացին (12-րդ դ.)՝ «Սահմանք զանազանք արտորոշեալք ըստ սրբոց և ծայրագոյն վարդապետաց յաղագս տարբերական և այլ և այլ անուանց»: Լատինաբան հայերենի արգասիքներից է Կղեմես Գալանոսի քերականության վերջում զետեղված փիլիսոփայական բառարանը<sup>42</sup>, ուր հայերենից լատիներեն են թարգմանված փիլիսոփայական, տրամաբանական, քերականական տերմիններ: Լատինաբանների միջավայրում ստեղծված ձեռագիր բառարաններից է Լվովի համալսարանի ձեռագրական

<sup>42</sup> Կղեմես Գալանոս, Թերական և տրամաբանական ներածութիւն առ իմաստասիրութիւնն շահելոյ, 3րոմ, 1645: Տե՛ս գրքի երկրորդ պրակի էջ 1ա-27բ՝ «Բառգիրք իմաստասիրական բառից հայոց և լատինացւոց»:

բաժնում պահվող «Բառգիրք իմաստասիրական բառից հայոց և լատինացւոց» բառարանը (Cod. arm 62-1)<sup>43</sup>, ուր այբբենական կարգով բերված են հայերեն փիլիսոփայական, աստվածաբանական և այլ բնույթի բառեր՝ դիմացը տալով լատիներեն համարժեքը:



Նկար 5. Մեկ էջ Լվովի համալսարանի ձեռագրատան հայերեն-լատիներեն փիլիսոփայական բառարանից:

<sup>43</sup> «Բառգիրք իմաստասիրական բառից հայոց և լատինացւոց» բառարանը պարունակող ձեռագրի համառոտ նկարագրությունն է պարունակում Ն. Ակինեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Լվով և ի Ստանիսլաւով, Վիեննա, 1961: Նշված ձեռագրի թվայնացված որոշ էջեր մեզ է տրամադրել Լվովի համալսարանի գրադարանի աշխատակից Անուշական Մետրոպոլիտ:

Փիլիսոփայական բառարանագրության հաջորդ և հիմնավոր հանգրվանը եղավ Ստ. Լեհացու «Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք» աշխատությունը:

\* \* \*

Թարգմանիչ, փիլիսոփա, աստվածաբան **Ստեփանոս վրդ. Լեհացին** (ասվում է նաև Լվովցի, Իլովացի) գործել է 17-րդ դ. առաջին բառորդից մինչև 1689 թթ., ուսանել է Լվովում, հմտորեն տիրապետել լատիներենին, լեհերենին: Տեղափոխվել է Էջմիածին, ձեռնադրվել վարդապետ: Եռանդուն մասնակցություն է ունեցել Էջմիածնական գիտական, գրական կյանքին: Նրա կատարած թարգմանությունների շարքը բավականին երկար է. «Հայելի վարուց» բարոյախրատական գրույցների ժողովածու, Թովմա Աբվինացու «Գիրք հոգեաց և հրեշտակաց», «Գիրք պատճառաց», որ հայ դպրոցներում օգտագործվել է որպես փիլիսոփայության դասագիրք, Դիոնիսիոս Արիսպագացու «Ցաղագս երկնայնոցն քահանայապետութեան», «Ցաղագս եկեղեցական քահանայապետութեան» և այլն: Առանձնակի կարևորություն ունեն հռոմեացի Փլավիոսի «Գիրք պատմութեանց յաղագս պատերազմի Հրեից ընդ Հռովմայեցիս և աներման Երուսաղեմի» երկի և Արիստոտելի «Մետաֆիզիկա»-ի թարգմանությունները:

Հայագիտությունը վերջնական պատասխան չի տվել այն հարցին, թե արգասաբեր այս հեղինակի փիլիսոփայական բառարանը նույնպե՞ս թարգմանական, թե՞ ինքնուրույն գործ է: Ստ. Լեհացու բառարանը պարունակող ՄՄ թ. 110 ձեռագրի հիշատակարանում պահպանվել է այսպիսի մի տող. «Վասն զի **Նորաթարգման** էր և անգաղափար, բաց ի մուսաւատայէն և բնաւ թէ ծեթիկ և խծծաբոյծ այլայլական տառիւք գծեալ»: 1662 թ. գրված այդ ձեռագրում ընդգրկված են նաև Դիոնիսիոս Արիսպագացու գործերի և «Պատճառաց գրքի» թարգմանությունները, ուստի դժվար է ենթադրել, թե իրականում հիշատակագիրը Լեհացու այս գործերից կունկրետ մե՞կը նկատի ունի «Նորաթարգման» ասելով, թե՞ բոլորը միասին: «Բանքը» պարունակող հնագույն այս ձեռագիրը գրվել է 1662 թ., իսկ «Պատճառաց գրքի» թարգմանությունը Ստ. Լեհացին կատարել է 1660 թ., Արիսպագացու գործերը թարգմանվել են 1662 թ. և

առաջին անգամ հանդիպում են հենց մեր Նշած թ. 110 ձեռագրում:

Նորայր եպս. Պողարյանը «Հայ գրողներ» գրքում, նախքան Լեհացու գործերի ցանկի շարադրումն ունի այսպիսի մի դիտարկում. «Լեհացին նշանաւոր հանդիսացաւ իր կատարած թարգմանութիւններով, որոնցմէ կրնանք յիշել հետեւեալները, ժամանակագրական կարգով»: Ապա ներկայացվում են Լեհացու թարգմանական գործերը՝ ներառյալ նաև «Բանք իմաստասիրականք»-ը, ուրեմն ենթադրելի է, որ Ն. Պողարյանն այս գործը թարգմանություն է համարում<sup>44</sup>: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում Ստ. Լեհացուն նվիրված հոդվածի հեղինակ Յ.Միրզոյանը բառարանը անառարկելիորեն համարում է ինքնուրույն գործ՝ գրելով. «Ստեփանոս Լեհացին թողել է նաև ինքնուրույն աշխատություններ, որոնցից ամենաարժեքավորը «Բանք իմաստասիրականք...» ծավալուն բառարանն է՝ գրված մինչև 1662 թ.»:

Ստ. Լեհացու աշխատությունն իր բնույթով փիլիսոփայական և աստվածաբանական հասկացությունների բացատրական բառարան է, որում բերված են բառ-հասկացությունների ընդարձակ ու բազմակողմանի բացատրություններ: Վերը նշված «Սահմանք իմաստասիրականք», «Բառք Փիլոնի» խորագրերը կրող բառարանները նույնպես պարունակում են տարբեր աշխատություններից բաղված հասկացություններ, սակայն դրանք սահմանումների ոչ ընդարձակ հավաքածուներ են: Նրանցում գլխաբառերը բացատրվում են պարզ սահմանումի ձևով, մեծ մասամբ մեկ նախադասությամբ, մինչդեռ Լեհացու բառարանում հասկացությունների բացատրությունը շատ ավելի ընդարձակ է, հաճախ ընդգրկում է ձեռագրի մեկ և ավելի էջ: Տարբեր են նաև «Սահմանքի» և այս բառարանի ծավալները. մոտ 420 գլխաբառ պարունակող «Սահմանքն» ունի առավելագույնը 18-20 ձեռագիր էջ, իսկ Լեհացու բառարանի որոշ ձեռագիր տարբերակներ ունեն մոտ 100 էջ: Ծավալային և մանավանդ բովանդակային տարբերությունների համեմատությունը հանգեցնում են այն եզրակացության, որ Լեհացին իր բառարանը կազմելիս որպես

<sup>44</sup> Նորայր արք. Պողարյան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 549:

աղբյուր չի ունեցել «Սահմանքը»<sup>45</sup>: Իսկ եղած որոշ սմանությունների պատճառը կարող են լինել ընդհանուր սկզբնաղբյուրներն ու բացատրվող գլխաբառերի նույնությունը:

Լեհացու բառարանում տեղ են գտել փիլիսոփայական բոլոր բնագավառներին, այդ թվում՝ գոյի ուսմունքին, իմացության տեսությանը, բարոյագիտական հարցերին, էսթետիկային վերաբերող հասկացություններ: Բացատրված են **ազատություն, անհատ, անձն, անձնիշխանություն, արուեստ, ապականություն, բնություն** (բնույթ), **գեղեցիկ, գիտություն, գոյացություն, երևակայություն, զգայություն, զորություն** (հնարավորություն), **էակ, էություն, ժամանակ, իմացում, ճանաչում, ճշմարտություն, ներգործություն** (իրականություն), **ստեղծագործություն** և բազմաթիվ այլ հասկացություններ: Նման կերպ բառարանը ձեռք է բերում նաև ուսուցողական, ճանաչողական նշանակություն, հնարավորություն է ընձեռում առավել ստույգ գիտենալու, թե միջնադարյան մատենագիրներն ինչ իմաստ էին դնում նշված և այլ սկզբունքային հարցեր պարզող հասկացությունների մեջ, ինչ ծավալ ու բովանդակության ունեին այդ հասկացությունները:

Լեհացին իր ներկայացրած գրեթե յուրաքանչյուր բառ, լինի փիլիսոփայական թե բարոյագիտական, աստվածաբանական թե գեղագիտական, բացատրում է քրիստոնեական աստվածաբանության դիրքերից: Այսպես օրինակ՝ գոյաբանական հարցերը ներկայացնում է արարչաբանության, բարոյագիտականը՝ առաքինությունների, գեղագիտականը՝ գեղեցիկի քրիստոնեական ընկալման մեջ: Եվ սա շատ բնական էր Լեհացու համար, քանի որ փիլիսոփա լինելուց առաջ նա աստվածաբան էր և ըստ այդմ ոչ միայն փիլիսոփայում էր, այլ նաև աստվածաբանում:

«Բանքը» կարող է ուսումնական ձեռնարկ ծառայել քրիստոնեական վարդապետության, գեղագիտության, փիլիսոփայական որոշ հարցերի հետազոտման համար: Ստ. Լեհացին իր բառարանը կազմելիս թերևս հենց այդպիսի նպատակ է ունեցել՝ աշակերտներին ամփոփ և ամբողջական պատկերացում տալ իր ժամանակի փիլիսոփայական գիտելիքների, հիմնական հասկացությունների, կատեգորիաների մասին:

Ստ. Լեհացու բառարանի լեզուն լատինաբանության որոշ ազդեցության կնիք է կրում, որի ցայտուն դրսևորումներից են որոշ նախամասնիկների գործածությունն իբրև նախդիր, օրինակ՝ *ներ ստորոգություն, ներ իմացման, ներ չարի*, ներգոյականի կազմության համար *ըն-* նախամասնիկի գործածությունը՝ *ընտնում*: «Բանք»-ում կան անեզական բառեր, որոնք լատինաբան հայերենի հետևությամբ հանդես են գալիս ք-ի անկումով՝ դառնալով եզակի, ինչպես՝ *միտ, օրել*: Լատինաբանության հատկանիշ պետք է համարել նաև *-համ* նախածանցի հաճախակի անհարկի գործածությունը՝ *համահետևին* (փոխ. հետևին), *համաբնական* (փոխ. բնական): Գործածվում են դասական հայերենում չհանդիպող բառաձևեր՝ *իբրու, նոյնում, նոյնոյ* և այլն: Դրանք, սակայն, մեծ տարածում չունեն, «Բանք»-ում գերակշռում են գրաբարի օրինաչափ կազմությունները:

Փիլիսոփայական այս ձեռագիր բառարանը, չնայած պարունակած գիտական, ուսուցողական մեծ նյութին, դեռևս չի արժանացել տպագրվելու բախտին: Այն քննել և 2013 թ. իր ավարտական թեզում մի քանի ձեռագրերի համեմատությամբ ներկայացրել է Մայր Աթոռ Ս.Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան Ռուբիկ սարկավազ Արզումանյանը: Հեղինակը նաև բանասիրական, լեզվական որոշ դիտարկումներ է կատարել: Ստեփանոս Լեհացու նորակազմ բառերի մի ստված մասը ներառված են «Նորահայտ բառեր» մեր բառարանում՝ բաղված ՄՄ 1756 ձեռագրի 7ա-182ա էջերից, օրինակ՝ **անփոփոխակործ, խոստացական, հետախնդիր** (=հետամուտ), **յառաջեղելական, նոյնակարգ, ունողական, սրտակորություն** և այլն: Առհասարակ Ստեփանոս Լեհացին բառաստեղծ հեղինակ է, և երբ կարիք է զգացվում տեսական այս կամ այն հասկացությունն արտահայտելու համար նոր բառեր ստեղծել, նա չի վարանում դա անել, որով հարստանում և մշակվում է հայերեն իմաստասիրական լեզուն:

Ստ. Լեհացու բառարանի բնույթը ցույց տալու համար կարծում ենք տեղին կլինի մեջբերել մի քանի բառահոդվածներ: Ներկայացված հատվածները բաղել ենք ՄՄ 1756 թվահամար ձեռագրի 7ա-12ա էջերից:

<sup>45</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան, Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական բառարանը, ՊԲՀ, 1975, թ. 2, էջ 134-145:

«Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք, համառօտաբար իբր սահմանօրէն արտադրեալք և հաւաքեալք ըստ այբուբենից.

**Ազատութիւն** է իւրաքանչիւր իրի տէրութիւն և իշխանութիւն ներգործութեան իւրոյ առ հակակայս: Բոլոր արմատ ազատութեան իբրու ենթակայ է կամք, իսկ բան է որպէս պատճառ: Առաջին ազատութիւն տկարացեալ է ի ձեռն յանցանաց, այլ ոչ բոլովիմբ կորուսեալ: Ազատութիւն հակակայի հարկաւորութեան բռնադատութեան, այլ ոչ հարկաւորութեան վախճանի: Կարողութիւն կամենալոյ գչար ոչ է ազատութիւն և ոչ մասն ազատութեան:

**Աղօթք** է գործ բանականին գործականին, վասն զի է կամ խնդիր պատճառելեացն յԱստուծոյ կամ համբարձումն մտաց առ Աստուած: Աղօթք միշտ ունի զկատարումն խնդրուածոց, եթէ ունիցի զչորտեսին զայսոսիկ, այսինքն՝ եթէ իցէ բարեպաշտապէս, առ ի փրկութիւն վասն անձին իւրոյ և յարատևողաբար: Յամենայն աղօթս չորեքկին է հարկաւորութիւն, այսինքն՝ համբարումն մտաց առ Աստուած, հաստատուն յոյս ընդունելոյ զխնդիր, զոհութիւն և մաղթանք: Գործ աղօթից է երեքկին, այսինքն՝ վարձ, կատարումն խնդրոյ և հոգևոր սփոփումն մտաց: Աղօթից պիտոյ է միշտ տևել ըստ զօրութեան, այլ ոչ ըստ ետութեան:

**Առաքիւնութիւն**, պարզաբար ասացեալ, ասի սեր, զի կախեալ է զկամաց, որոյ առաջին և նախկին ձգտումն է սեր: Առաքիւնութիւն է բարի ունակութիւն մտաց, որով բարւոք կեամք, որով ոչ ոք չարաչար վարի, զոր Աստուած ի մեզ առանց մեր գործէ: Առաքիւնութիւն է բարի գործառութիւն անձնիշխանութեան, վասն զի առաքիւնութիւն կարգաւորի առ նա, որպէս առ սեպիական իւր գործ: Առաքիւնութիւն է կարգաւորութիւն սիրոյ, զի սեր ի մեզ նովաւ կարգաւորի: Առաքիւնութիւն ընդհանրականապէս է, որ բարի առնէ զունօղն և զգործ նորա բարի կացուցանէ և այս երկակի՝ կամ նիւթականապէս միայն, որպէս առաքիւնութիւնք իմացականք, կամ տեսակաբար, որպէս առաքիւնութիւնք բարոյականք: Ամենայն առաքիւնութիւնք և մոլութիւն է ունակութիւն մտաց և կամաց ըստ պատճառի, այլ ոչ ըստ ենթակայի: Առաքիւնութիւնք հեղեալք պատճառին ի մեզ առ ի յԱստուծոյ առանց մեր գործելոյ, այլ ոչ առանց մեր հաւանելոյ:

Առաքիւնութիւն ճշմարիտ և պարզաբար կարգաւորէ առ սկզբնական բարին, իսկ առաքիւնութիւն ճշմարիտ և ըստ իմիք և անկատար կարգաւորէ առ հաղորդելի բարի:

**Արիութիւն** է մանաւանդ շուրջ գերկիւղի մահու և նախ է շուրջ գերկիւղի և երկրորդաբար՝ շուրջ գիւղամարծակութեամբ: Արիութիւն սանձահարէ գերկիւղ և ժուժկալութիւն՝ զտրտմութիւն, իսկ հեգութիւն՝ զբարկութիւն: Եւ որ միանգամ է արի, գոյ և համբերող, այլ ոչ անդրադարձաբար, քանզի համբերութիւն է մասն արիութեան: Եւ արիութիւն տանի զվտանգ մահու, բայց համբերութիւն տանի զինչևիցէ չար: Արիութիւն նախկնաբար է առ երկիւղի և երկրորդաբար՝ առ տրտմութեան, իսկ համբերութիւն՝ առ ներհակ սոցին:

**Արուեստ** է ուղիղ բան ամենելեաց և ունակութիւն ներգործական: Արուեստ, որ կարգաւորի առ գործ բանականին, ասի ազատական, իսկ որ կարգաւորի առ գործ մարմնոյ, կոչի ծառայական: Արուեստ ոչ կարէ ածել զտեսակ գոյացական, եթէ ոչ զօրութեամբ բնութեան, զի տեսակք արուեստաւորաց են պատահմունք: Արուեստ միշտ է առ բարի, որպէս և գիտութիւն, իսկ որ ինչ յինքնէ կարգաւորի առ չար ոչ է արուեստ: Տեսակք արուեստաւորաց ոչ այլ ինչ են, եթէ ոչ բաղադրութիւն, կարգ և ձև»:



## «ԲԱՈՂԻՐՔ ՅԱՅՈՅ»-Ի ԾՇՊՐՏՈՒՄՆԵՐ

«Բառզիրք հայոց» բառարանն առաջին անգամ տպագրվել է 1698 թ. Երեմիա Մեղրեցու ջանքերով (հենց նրան են շատերը համարում բառարանի հեղինակը)<sup>46</sup>:

Հայերենագիտությունը վաղուց է ապացուցել, որ «Բառզիրք» հիմքում ընկած է «Բառք քերթողականք» ձեռագիր բառարանի տարբերակներից մեկը: Բազմաթիվ բառահոդվածների համեմատությամբ դա հաստատում է Ռուբեն Ղազարյանը՝ գրելով. «Երեմիա Մեղրեցին նոր բառարան չի կազմել, այլ անմիջականորեն, գրեթե առանց փոփոխությունների, «Բառզիրք հայոց» վերտառությամբ տպագրության է ներկայացրել ձեռքի տակ եղած «Բառք քերթողականք» բառարանի գրչագրերից մեկը՝ ընդօրինակված ոչ վաղ, քան 17-րդ դարում»<sup>47</sup>:

«Բառզիրքն» առհասարակ համարվում է ուշ միջնադարի հայ բառարանագրության գլուխգործոցը, այն տպագրվելուց հետո լայն տարածում է գտել հայ միջավայրում, մինչև Մխիթար Սեբաստացու «Բառզիրք հայկազեան լեզուի» ի հայտ գալը ամենից գործածական բացատրական բառարանն է եղել հայ իրականության մեջ: Այն պահից, երբ առաջին տպագրությունը այլևս չի բավարարում մշակութային կյանքի պահանջները, 1728 թ. «Բառզիրքը» նույնությամբ վերահրատարակվում է Կ.Պոլսում:

Լույս ընծայումից ի վեր հայ առաջին տպագիր այս բառարանն արժանացել է ուսումնասիրողների խիստ հակադիր և իրարամերժ գնահատականներին, այսպես.

Հ.Աճառյան. «Մանրամասն քննելուց հետո աշխատությունը տեսա, որ մեծագույն մասամբ **վրիպակների մի հավաքածու է**

<sup>46</sup> Բառզիրք հայոց, արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիա վարդապետ, Յալի-կոնա, 1698, 344 էջ:

<sup>47</sup> Ռ. Ղազարյան, Էջեր հայ բառարանագրության պատմությունից, Եր., 2002, էջ 24-25:

այն... Պետք է շատ զգուշությամբ վերաբերվիլ սույն բառագրքի հետ և նրա հիշած ձևերը իբր ճշմարտություն չընդունիլ»<sup>48</sup>:

Գ.Զահուկյան. «Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» մեծապես շահած կլիներ, եթե «Բառզիրք հայոց»-ի քննական բնագրի հրատարակության աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի հրատարակումը»<sup>49</sup>:

Բառարանը եղել է նաև այլ լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Ռ. Ղազարյանը ընդհանուր առմամբ «Բառզիրքը» սխալաշատ գործ է համարում գրելով. «Բառարանում նկատելի են բազմատեսակ վրիպակներ և ակներև սխալներ, որոնք թերևս հատուկ են միայն «Բառզիրք հայոց»-ին: Աշխատությունը տպագրական տեսակետից նույնպես զերծ չէ թերություններից: Բառարանում կան բազմաթիվ տպագրական վրիպակներ, որոնք հատկապես մեծ դժվարություններ են առաջացնում բառարանից օգտվելիս»<sup>50</sup>:

1975 թ. Հայկ Ամալյանի աշխատասիրությամբ տպագրվեց ԲՀ-ի քննական-համեմատական բնագիրը: Մինչ այդ բանասերը մեկ այլ առիթով մատնանշում է հին բառարաններում անկա աղճատումները և այդ մասին գրում. «Հին բառարանների որոշ բառեր, օրինակ՝ **ապարեկ, արուեզ, աթեր, գարգեցի, կամիտ...** այսօր անհասկանալի և անմեկնելի են: Դրանցից շատերը հավանաբար պահպանել են իրենց նախնական, ճիշտ ձևերը, իսկ մի մասն էլ անկասկած այլ բառերի աղավաղումներ են: Այդպիսի բառերից շատերի նախկին, ճիշտ ձևերը հնարավոր է վերականգնել գրչագրերի բաղդատական հետազոտության ճանապարհով»<sup>51</sup>:

«Բառզիրք հայոց»-ի բազմաթիվ բառարանային ճշգրտումներ են կատարել Լ. Հովհաննիսյանն ու Վ. Համբարձումյանը<sup>52</sup>: Մասնավորապես Վ. Համբարձումյանը նշում է, որ «բառարանում դեռևս կան բառեր, որոնք կարոտ են նոր լուսաբանման», ապա

<sup>48</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 10:

<sup>49</sup> Գ. Զահուկյան, Ստուգաբանություններ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1976, թ. 12, էջ 41:

<sup>50</sup> Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 25-26:

<sup>51</sup> Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Եր., 1966, էջ 64:

<sup>52</sup> Լ. Հովհաննիսյան, Բառաքննական նկատառումներ «Բառզիրք Հայոցում» տեղ գտած մի քանի բառերի վերաբերյալ, ՊԲՀ, 2000, թ. 2:


անդրադառնում է ԲԶ-ի **աղանդումն, աղիփատոս, աճապել, անդուք, եկիտ, ռաքամ** և այլ բառերի ստուգաբանությանն ու բնությանը<sup>53</sup>: Այս ամենով հանդերձ՝ չի կարելի ասել, թե «Բառգրքի», նրա շատ բառերի նկատմամբ կասկածները փառատվել են ներկայումս:

\*\*\*


Երևանի Մաշտոցյան Մատենադարանի մի բանի ձեռագիր բառարանների բառահոդվածների համեմատությամբ (թթ. 739, 1654 և այլ) փորձել ենք ցույց տալ, թե գրչագրական և լեզվական ինչպիսի փոփոխությունների, հաճախ աղճատումների միջոցով էին ի հայտ գալիս հնարավոր վրիպակները, որոնք ձեռագրից ձեռագիր անցնելիս քաղաքացիություն էին ստանում և ամրագրվում որպես նոր բառեր, ապա իբրև կայուն ու վստահելի ձևեր՝ արտագրվում հետագա գրիչների կողմից: Ձեռագրական հստակ օրինակներով հնարավոր է ցույց տալ նման բազմաթիվ «**բառափոխումներ**»:

Բառահոդվածի շփոթից, սխալ արտագրելուց կամ բառանջատումից ի հայտ էին գալիս նոր բառեր: Նման մի բնորոշ օրինակ է «կատակ – ահել կ. ազդուրել» բառահոդվածը, որը ոչ ճիշտ արտագրելու հետևանքով շաղկապի կ. (=կամ) կրճատ տառը միացել է հաջորդ բառին և առաջացել է մեկ այլ ձեռագրի «կատակահել – կազդուրել» հատվածը: Այդպես ուսումնասիրողները կարող են հայերենի համար նոր բառ համարել «**կատակահել**», մինչդեռ այն ի հայտ է եկել պարզ գրչագրական սխալի արդյունքում:

«Չամադամ – անուշակ» բառահոդվածի միացումից ստացվել է «**համադաշունակ**» նոր և անստույգ բառը, (տե՛ս նկար 6) որը նաև տեղ է գտել «Բառգիրք հայոց»-ի առաջին և երկրորդ տպագիր տարբերակներում՝ «համաուղնակ», «համադաուղնակ» անստույգ ձևերով (նկար 7):



Նկար 6. «Չամադաշունակ» բառահոդվածն ըստ ՄՄ 1654 ձեռագրի, էջ 229ա:




Նկար 7. «Չամադաուղնակ» բառահոդվածն ըստ «Բառգիրք հայոց»-ի 1728 թ. էջ 172:

«խաղամ – ծիլ» բառահոդվածի հետագա կցումից առաջացել է «**խաղամծել**» անստույգ բայը:

Առավել արտառոց է թ.1654 ձեռագրում հանդիպող հետևյալ «բառափոխությունը»: Ձեռագրի 231ա էջին կարդում ենք «ցոփան – հաստատ» բառահոդվածը, ընդ որում հստակ ուր-


<sup>53</sup> Վ. Գամբարձումյան, Բառաբանական դիտարկումներ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Յայոցի» մի բանի բառերի շուրջ, - ՊԲԶ, 2010, N 3, էջ 161-169:

վագծվում է, որ գրիչը կամ արտագրողը «ցոփան» բառավերջում նույնպես ուղղում է կատարել. նախապես եղել է «ցոփալ», հետո գրչագրական միջամտությունից հետո դարձել է «ցոփան» (սկար 8)



Սկար 8. «Ցոփան - հաստատ» բառահոդվածն ըստ ՄՄ 1654 ձեռագրի, էջ 251ա:

Ամեն դեպքում շփոթն ակնհայտ է: Հետագա պրպտումներն ի հայտ են բերում, որ դա ավելի վաղ ձեռագրից «ցոփ - անհաստատ» բառահոդվածի փոփոխությամբ առաջացած մի նոր բառ է՝ «ցոփան», որը հայտերենում փաստորեն գոյություն չունի և ընդամենը գրչագրական մի սխալի արդյունք է, իսկ նրա բացատրությունը ոչ թե «հաստատ» պետք է լինի, այլ հակադիր իմաստը՝ «անհաստատ» (սկար 9):



Սկար 9. «Ցոփ - անհաստատ» բառահոդվածն ըստ «Բառագիրք հայոց»-ի 1698 թ. Տպագիր օրինակի, էջ 318:

Այլ օրինակներ. «հակատակել» բառն ի հայտ է եկել տարբեր ձեռագրերում «հակառակել» և «հակագրել» բառերի անհասկանալի միակցումից, որի մի տարբերակն է «Բառագիրք հայոց»-ի տպագիր տարբերակ ներմուծված «հակատառել - հակագրել» բառահոդվածը:

Մեկ տառի փոփոխմամբ առաջանում էին նոր բառեր. «բացատրել» բառը վերածվել է «բացաւորել»՝ «ատ» տառակապակցությունը սխալմամբ «աւ» գրելու պատճառով, «գահաւորակ»-ը դարձել է «գահուրակ, «բացասակ»-ը՝ «բայասակ» և այլն:

Նոր բառեր էին գոյանում ամբողջական վանկերի փոփոխմամբ. «հաստատորութիւն» փոխ. հաստատարութիւն, «ներշանակ» փոխ. ներշրջանակ և այլն:

«Բառափոխումների» օրինակներ շատ կարելի է բերել: Ձեռագիր և տպագիր բառարանային տվյալների համեմատության շնորհիվ հնարավոր է եղել վերականգնել հարյուրի հասնող «բառափոխումներ», որոնցից մի փունջ ներկայացնում ենք ստորև Աղյուսակ 1-ի բառացանկում:

Աղյուսակ 1.

ԲՀ սպորդած «բառափոխումը»	Ճիշտ բառաձևը
գիտակացել	գիտակցել
դեսպան	դեսպակ
դիտհուակ	դիտահաւակ
ընդորմամբ	ընդ որոնմամբ
թաչել	թափել
թերաննակ	թերանունակ
խաղտալ	խայտալ
հմատակ	հպատակ
ճարանակ	ճարտարնակ
շաղծակել	շաղկածել
շարակռպել	շարակարգել
պարզանակ	պարզունակ
վաղագաբար	վաղագաղափար

Ձեռագրային տարընթերցումները, ինչպես նկատելի է բերված օրինակներից, նոր բառերի կարող են հանգեցնել մի շարք պատճառներով, ինչպես՝ ձեռագրերում հաճախ *ա-ու, գ-դ, ս-ո* տառերի գծագրությունը հստակ չտարբերակելու, բառակցման եղանակով շարադրելու (երկտասն, նորնորու, բարմեղեալ), կրճատ գրությունը սխալ բացելու (միտերեցկին, փոխ. մահտեսի երեցկին), անծանոթ բառերը հայերեն կամ օտար այս կամ այն բառին նմանեցնելու և ժողովրդական ստուգաբանության (եղայ շրջեալ-հեղաշրջել) և ուրիշ շատ պատճառներով:

Նման ճանապարհով գոյացած բազմաթիվ աղճատված բառեր են սպորդել Հայկ Ամալյանի տպագրած «Բառգիրք հայոց»-ի քննական քննադրում: Դա քնական և անխուսափելի պետք է համարել, քանի որ աշխատասիրողի ձեռքի տակ չէին կարող լինել բառարանի ձեռագրային բոլոր նախօրինակները, նաև՝ մեկ անհատի ջանքերից դուրս է բոլոր աղճատումները ճշգրտելը: Օրինակ՝ «Բառգրքի» 1975 թ. հրատարակության միայն 60-70 էջերում տեղ են գտել կասկածելի կազմությանը այսպիսի բառեր՝ **գագուցեալ, գակուցեալ, գայկուցեալ, գաղասն, գաղփալ, գամգագարիչ, գարած, գասիոնգաբեր, գոդթել, գեղեղորե, ո-**

րոնք, անշուշտ, ձեռագրային աղճատումների արդյունք են, և որոնց առաջացման ուղիները պետք է պարզել՝ ձեռագրային տվյալները մեր մատնանշած եղանակով ճշտելուց հետո:

Պետք է ասել, որ գրչագրական վրիպակներից ի հայտ եկած «նոր» բառերը միայն ձեռագիր բառարաններում չէ, որ հանդիպում են: «Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» բառարանի վրա աշխատելիս 16-18-րդ դարերի տարբեր աղբյուրներից ու բնագրերից (թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր) բաղել ենք գրչագրական տարբերակներ, հնչյունափոխված բազմաթիվ ձևեր, որոնք առաջին հայացքից կարող են նորակազմ բառեր գրանցելու առիթ տալ, բայց ամեն դեպքում պետք է քննել՝ պարզելու համար դրանց ճիշտ սկզբնաձևը և ըստ այդմ էլ՝ բնագրի ճիշտ բովանդակությունը:

- քննադրում տպված է անհարեստ - փոխ. անարիեստ
- բորոր - բոլոր
- գծողիկ - գծողիկ
- խոստացաւ - խստացաւ
- կարտարելապեւ - կատարելապեւ
- հայրկազանց - հայկազանց
- մարբրափայլ - մաքրափայլ
- նաւաստ - նուաստ
- նոյաբողբոջ - նորաբողբոջ
- տառատպող - տառապող և այլն:

Նման բառերը խիստ զգուշությամբ պետք է ներառվեն բառապաշարային քննությունների մեջ՝ պատահականորեն նորակազմ չդիտելու համար:

Ամեն դեպքում պետք է ամրագրել, որ «Բառգիրք հայոց»-ը մեծ կարևորություն ունի հայերենի բառապաշարի ամբողջական նկարագրության ու քննության համար: Իսկ մեր մատնանշած ուղին կարող է տարածվել առհասարակ անհստակ կազմություն և իմաստ ունեցող բազմաթիվ բառերի հնարավոր աղճատումները նկատելու, դրանց նախաձևերը գտնելու համար՝ հենվելով ձեռագիր բառարանների տվյալների վրա: Մեկ աշխատությամբ, իհարկե, անհնար է վերհանել «Բառգրքի» գրչագրական բոլոր աղճատումներն ու «բառափոխումները», դա անվերջանալի աշխատանք է, սակայն և առանձին բառեր ճշգրիտ քննելու համար անհրաժեշտ է հետևել տվյալ բառի՝

տարբեր ձեռագրերից տպագիր բառարանի մեջ փոխանցվելու ճանապարհին ու «ճակատագրին»:

Այս ճանապարհով հնարավոր է նաև ճշտել ու գտնել հայերեն առաջին տպագիր բացատրական բառարանի՝ «Բառգիրք հայոց»-ի շատ բառերի սկզբնական ու ճիշտ ձևերը և իմաստները: Այդպիսով «Բառգիրքը» վերագտած կլինի իր արժեքին համապատասխան տեղը հայ գրավոր մշակույթում:


## ՎԱՐՂԱՆ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԸ<sup>54</sup>

Ձեռագիր մատյանների բառարանային սնուչների հետ մեկտեղ 17-րդ դարից ստեղծվել են տպագիր բառարաններ: Առաջին հայերեն տպագիր բառարանը՝ Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Բառգիրք հայոց»-ը, լույս է տեսել դեռևս 1621 թվականին<sup>55</sup>: Նույն՝ 17-րդ դարում տպագրված բառարաններից հիշատակելի են նաև Կղեմես Գալանոսի «Քերականական և տրամաբանական ներածութիւն» աշխատությանը կից բառարանը (1645 թ.), Աստվածատուր Ներսեսովիչի «Բառգիրք լատինահայ» (1695), Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ը (1698): Նշված տպագիր բառարանները քաջ հայտնի են հայագիտությանը: Սակայն դրանց զուգահեռ հրատարակվել են նաև ծավալով ոչ մեծ բացատրական բառարաններ, որոնք զետեղված են հնատիպ գրքերի վերջերում, հաջորդում են երկերի հիմնական բովանդակությանը և միտված են տվյալ գրքի բնագրում առկա՝ հեղինակի կամ թարգմանչի պատկերացմամբ անհասկանալի, նորակազմ բառերն ընթերցողին հասկանալի դարձնելուն: Բացատրական նման բառարանները որոշակի պատկերացում են տալիս ժե դարի հայ բառարանագրության, շատ դեպքերում լատինաբան հայերենի, ինչպես նաև վաղ աշխարհաբարյան հայերենի վիճակի մասին ընդհանրապես:

1674 թվականին Հռոմում տպագրվել է Հովհաննես Պոնայի «Ձեռքածութիւն յերկինս» աշխատության հայերեն թարգմանությունը: Լատիներենից թարգմանությունը կատարել է Վարդան

<sup>54</sup> Այս հատվածի ընդարձակ տարբերակը տպագրվել է «Բազմավեպում», տե՛ս Ն. Պողոսեան, Լատինաբան հայերենի բառարանագրութեան մի յուշարձան 17-րդ դարից, 2011, թ. 3-4, էջ 627-645:

<sup>55</sup> Տե՛ս Ն. Մկրտչյան, Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն» բառարանը, Եր., 2012:



Յունանյանը<sup>56</sup>: Գիրքն ունի 35 գլուխ, սկսում է «Յաղագս վերջնոյ վախճանին մարդոյ» և ավարտվում է «Յաղագս կացութեան կատարեցելոցն» գլուխներով՝ ընդամենը 348 էջ: Թարգմանության հեղինակ Վարդան Յունանյանը կազմել և գրքի երկրորդ մասում տպագրել է **«Բառարան գրքոյս»** անվանումով բառարանը: Ահա այս բառարանի՝ հայ բառարանագրությանը բերած նպաստը փորձենք ներկայացնել հիմնական գծերով: Մեզ ծանոթ գիտական ուսումնասիրություններից այս բառարանի մասին համառոտ անդրադարձներ ունեն Գ. Գասպարյանի «Յայ բառարանագրության պատմությունը» (էջ 64), Յ. Ամալյանի «Յայ միջնադարյան բառարանագրությունը»: Վերջինս մեր քննած բառարանն անվանում է «Յ. Պոնայի թարգմանությանն առընթեր «մատենակից բառարան», որն իր սկզբունքով և կառուցվածքով նոր երևույթ է, իսկական իմաստով բացատրական բառարան»<sup>57</sup>: Բառարանի լատինաբանություններին է անդրադառնում նաև Վազգեն Յամբարձումյանը «Լատինաբան հայերենի պատմություն» աշխատության մեջ:

\* \* \*

Վարդանը որդին էր Յունան բահանայի, Թոխաթի ճռու գյուղից: Լեհահայերի մեջ ծայր առած խառն ժամանակներում 1682-ին կանչվել է Էջմիածին և հնազանդվել Մայր Աթոռին, սակայն ոչ անհայտ Նիկոլ արք. Թորոսովիչի մահվան լուրն առնելուց հետո մեկնում է Էվոլ և հանձն է առնում Լեհահայոց արքեպիսկոպոսության աթոռը: «Լեհահայոց բռնի միութեան երթ սկզբնաւորողն Նիկոլ էր, զայն լրացնողը Վարդան եղաւ», գրում է նրա մասին Մաղաքիա Օրմանյանը<sup>58</sup>: Վարդան Յունանյանի և մանավանդ նրա գրական վաստակի մասին գովեստի խոսքեր է ասում լեհահայ Ստեփանոս Ռոշբայ մատենագիրը. «Վարդանս այս... էր ճարտար գրագիր, ուշիմ և հմուտ բառիցն Յայոց:

<sup>56</sup> Գրքի ամբողջական տիտղոսաթերթը հետևյալն է. **Յովհաննես Պոնա**, Ձեռքածութիւն յերկիսս. Պարունակող զգացմանց սրբազանիցն հարց և հնազունից իմաստասիրաց: Յօրնեցեալ աշխատասիրութեամբ տեռնն Յոհաննու Պոնայի վսեմագունոյ բարտինայի Ս. Ե. Յ. և թարգմանեցեալ ի հայկական բարբառ ի Վարդանայ Յունանեան: Յամի ներմարմութեան Տեառն ՌՌՅԱ: Եւ ըն թուաբերութեան արամազնոյ ՌՃԻ, տպագրեցեալ ի մեծն Յոնմ, ըն տպարանում սրբազանի համագումարին զհաւատոյ:

<sup>57</sup> Յ. Ամալյան, Յայ միջնադարյան բառարանագրությունը, Եր., 2007:

<sup>58</sup> Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, 1818:

Երթեալ յԷջմիածին, և անտի ընդ նուիրակսն զայ ի Լեհաստան, ուր զբարեկարգութիւն և զուղղափառութիւն Յայոց տեսեալ՝ մտանէ ի Դպրատունն Յայոց. աստի զկնի ուսանելոյն ինչ լատիներեն՝ գնայ ի Յոնմ, և ի դպրատանն Ուրպանեան ուսեալ կատարելապէս զլատին լեզու, թարգմանէ զՁեռքածութիւն յերկիսս, յամի Տեառն 1671. տպի **գեղեցիկ ոճով, բայց խորին և նոր բառիւք**: Չկնի արքեպիսկոպոսին Նիկողայոսի՝ ոչ շատ յամեցեալ և ինքն ի Յոնմ, դառնայ ի Լեոպոլիս. բայց զի Նիկողայոս առոյգ էր և առողջ, առեալ զիրաման ի Ս.Ժողովոյն՝ երթայ ի Յայաստան քարոզելոյ աղազաւ. ուր ընդ ամս իբր տասն տււէ»:

Ստ. Ռոշբան իր ժամանակագրության մեջ խոսում է նաև Վ. Յունանյանի ստեղծագործական վաստակի մասին «Էր անպարապ ի գրելոյ և ի թարգմանելոյ. թարգմանեաց զԶաթեխիզմն և զԶահանայապետականն Յոնմեական, Կերակուր քահանայից, Պակասութիւնք Պատարագին, Ծիսարանն (Մաշտոց), Գանձարան աղօթից և այլն: Գրեաց զբաջալերական թուղթն առ Եվդոկիացիս, որ է գիրք լի վկայութեամբ Յայոց ժողովոցն, կաթողիկոսաց և վարդապետաց մինչև յիր ժամանակն»<sup>59</sup>:

Վարդան Յունանյանի լեզվական-թարգմանական գործունեության մի մասն է կազմում նշյալ բառարանը:

Բառարանն ստեղծելու մասին հեղինակը մանրամասնում է ներածականում գրելով. «Կարևոր իմն վարկի շարագուզել աստեն համառոտաբար զլուծմունսս **ձայնից ոմանց նորակերտից**, զմիտք և զոճ լաթինականի բարբառոյն, պայծառապէս և անաղճատ արտասանելոյ սակս հնարեցելոցն. և ևս սակաւուց այլոց նախնականաց, որք ի կիր առեցեալք եղեն յինէն ըստ հարագատից նոցին իմացից նայսմ փոքրկանս մատենում» (էջ 1): Ներածականում հեղինակը նշում է նաև, որ բացատրելու համար ընտրել է իր կարծիքով դժվարհասկանալի բառերը («ըստ որում թելադրեաց ինձ խելամտութիւն»), իսկ հասկանալի («ընդելագոյն և բացալոյծ») բառերը շոշանցել է: Իր բառարանը կազմելիս, այդպիսով, հեղինակը նպատակ է ունեցել Յ. Պոնայի գրքի հայերեն թարգմանության մեջ եղած նոր կամ անհասկանալի

<sup>59</sup> Ստեփանոս Ռոշբա, Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցակաւք, հրատ. Գ.Ոսկեան, Վիեննա, 1964, էջք 183 և 198:

բառերը բացատրել՝ ընթերցողին բնագրի իմաստը լիարժեք հասու դարձնելու նպատակով:

52 էջ ընդգրկող «Բառարան գրքոյս»-ը պարունակում է 250 բառահոդված, սակայն նրա արժեքը միայն ընդգրկված բառաթերթի քանակով չի պայմանավորված: Բառարանն արժևորելու համար առանձնանում են մի քանի հիմնական կետեր:

ա) Բառարանում հեղինակն ունի որոշ ստուգաբանական դիտարկումներ, ինչպես՝ մազնիս բառը բացատրելիս գրում է, թե ոմանց կարծիքով բառն այդպես է անվանվել այս քարը գտնողի անունից, իսկ ուրիշներն անունը բխեցնում են Մազնեսիա գավառից, որտեղ գտնվել է այդ քարը: Կամ քաղցկեղ բառի համար գրում է՝ «նեխեցուցանե գվերս ծախելով զմիսն, ուստի և յանգաբար կոչեցաւ քաղցկեղ, այսինքն՝ քաղցեալ խոց» (էջ 80): Այդպիսով սկիզբ է դրվում բառերը բառարանում բացատրելու ստուգաբանական մեթոդին:

բ) Որոշ դեպքերում Վ. Գունանյանը բառերն օժտել է ձևաբանական բացատրություններով՝ ցույց տալու համար տվյալ բառի հոլովումը, խոնարհումը և այլն, օրինակ՝ միանդր բառի համար նշում է, որ հոլովվում է -եր վերջավորությամբ, կախել՝ -ի հոլ., բռնետղ՝ -ետեղ, նաւակիտր՝ -կիտեր և այլն:


գ) Շատ դեպքերում բառերը բացատրում է բարբառային, իր տերմինով՝ «ռամկօրէն բառերի» միջոցով: Դրանց գործածությունն ապացույցն է այն բանի, որ գրավոր խոսքում ազատորեն գործածվում էին խոսակցական-բարբառային բառեր, և Վ. Գունանյանը նույնպես իր բացատրություններում չի շրջանցել այդպիսի բառերը, այնքան որ դրանք սովորական են եղել իր ժամանակին: Բարբառային բառերի հետ մեկտեղ հեղինակը բերում է նաև օտար-փոխառյալ բառեր, օրինակ՝ գնդակ բառը բացատրում է այսպես. «է անուն գործւոյ ուրումն բոլորակածնի, որով խաղան մանկունք», և այս բացատրությանը զուգահեռ տալիս է նաև դրա ռամկօրէն ձևերը՝ «Ֆռլաղուճ կամ պտտուկ»: Բարբառային այլ բառեր են հետևյալները. բռնետղ-կորթ, կախել-կորթ, խեցեմորթ-շողոտ, էպեղուլաղի, մազնիս-«տաճիկք մլքատուզ տաշի կոչեն», մետ-ապրայ, ոստղ-սոսինձ, սառնորակ-այլլօր, սղղումն-սլվլումն և այլն: Ընդ որում բառահոդվածների մեջ, որպես կանոն, առաջինը ներկայացնում է բարբառային ձևը, դրանից անմիջապես հետո՝ բարբառներում գործածվող փո-

խառնյալ տարբերակը, ինչպես՝ «հազի - ռամկօրէն բռունք, անճախ»:

դ) Բառարանի հիմնական առանձնահատկություններից մեկը գիտական տերմիններ սահմանելն է: Գեղինակը, լավատեղյակ լինելով լատիներենին ու իր ժամանակի տեսական, աստվածաբանական մտքին, փորձում է եղած ու նաև իր հնարած տերմինները բանաձևել, սահմանել, օրինակ՝ «պողոտենուագ-տեսակ իմն բանաստեղծականի վերածառույթան, որ զբաղաբականաց կամ գյատկառից անձանց զվարս և զկեանս առցուցանէ: Լատ. բօմէտիա» (էջ 62), «տեսափոխ-կոչին զանագանութիւնք փոփոխմանց ընտեսարանում, մինչ իրակին ի դերասանից պողոտենուագք կամ քաղենուագք, որք լինին կամ ելլամտիք անձանցն իրակօղաց և կամ փոփոխմամբ նկարից պէսպիսեաց: Լատ. Սչէնայ» (էջ 72):

ե) Մի քանի խոսք պետք է ասել բառարանում լատիներեն բառերի տառադարձման և ուղղագրության մասին: Նախ՝ բոլոր դեպքերում չէ, որ հայերեն բառի հետ մեկտեղ հեղինակը տալիս է նաև լատիներեն համարժեքը: Իսկ որտեղ որ կան լատիներեն բառեր, առանց բացառության ներկայացված են հայերեն տառերով՝ *իլլէճիթիմուս, ինֆէլիքս, էքսքուճօ, բօստգուլօն* և այլն: Այստեղ նկատվում են հետևյալ օրինաչափությունները:

Լատիներեն C տառի դիմաց բառասկզբում հեղինակը, ըստ արտասանության, գործածում է հայերենի Զ կամ Զ՝ *Calmnia-Զալո՛ւմնիա, Castigo-Զասթի՛կօ, Circumspicio-Չիռքուսփի՛ցիօ* և այլն: Լատ. D-ի դիմաց գրված է հայ. S՝ *Discriptio-Տիւքնէ՛ցիօ, Discerno-Տիւքնէ՛նօ*, այդպես է և՛ բառասկզբում, և՛ բառամիջում: Լատ. G-ն տառադարձված է հայերենի Կ՝ *Garrulitas-Կառու՛լիթաս*: Լատ. P-ի դիմաց հայ. Փ՝ *Pirata-Փիռա՛թայ, Spiritus-Սփի՛րիթուս*: Լատ. T-ի դիմաց հայ. Թ՝ *Turbo-Թու՛նփօ, Tragoedia-Թռաճէ՛տիա* և այլն:



Նկար 10. Վարդան Յունանյանի բառարանի էջ 74-ը:

Սրանք հիմնական և համակարգային օրինաչափություններն են, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ ժԵ դարում լեհահայ գաղթօջախում, ուր գերազանցապես ապրել և գործել է Վարդան Յունանյանը, գործածվող հայերենն իրենից ներկայացնում էր «երկշարք ձայնեղազուրկ» բաղաձայնական համակարգ ունեցող խոսակցական մի տարբերակ, որում ձայնեղ բաղաձայնները վերածվել էին խուլերի (բ>պ, գ>կ, դ>տ): Թեև պետք է ասել, որ նշված կանոնները գործում են միայն փոխառյալ լատիներեն բառերի գրության մեջ, իսկ բառարանի, ինչպես նաև Յ.Պոնևայի

«Ձեռքածութան» շարադրանքում հնչյունական նման շեղումներ չեն հանդիպում, թարգմանությունն ունի կանոնաակնարկոր գրաբարյան համակարգ թե՛ հնչյունական, թե՛ բերականական առումներով:

\*\*\*

Բառարանը նախ և առաջ լատինաբան հայերենի մի նմուշ է, ինչպես որ ամբողջությամբ լատինաբան շնչով է գրված «Ձեռքածութիւն»-ը: Այստեղ հանդիպում ենք և՛ ներգոյականի ըն կամ ն մասնիկով կազմության, և՛ շարադասական նորամուծությունների, և՛ նորահնար բազմաթիվ բառերի, որոնք լատինաբան հայերենի աչքի զարնող օրինաչափություններից են: Բնագրից բերված մեկ-երկու մեջբերումները դրա լավագույն վկայությունը կարող են լինել. «Ձերկիրս այս, զոր փբացելով ճեմմամբ այժմ ներբակոխես, յապայ ինքն ներբակոխեսցէ գբեգ, և ո՛չ ևս յաւելցիս ստանալ յայնմանէ, զոր վերլուծեցելովք անդամօք քովք և նեխեցելօք օդուածովք զետեղիցես: Ի սմին և նայսմ ոչընչում շինեա՛ր քեզ զմեծամեծս և զանմահականս» (էջ 125): «Ամենամեծ նշան բաղադրեցելոյ մտին, և ի թիւրից ըղծածկտութանց մաքրեցելոյն, է՛ կարելն կալ ընդ ինքեան: Որպես Աստուած, ինքեամբ միայնով երանեցեալ, կինքեան ցանգ յարամայ» (էջ 248):

Լատիներենից կատարված այս թարգմանության մեջ, բնականաբար, մեծ թվով բառեր թարգմանվել ու պատճենվել են հենց լատիներենից, որոնց մի մասը ներառված է բառարանի մեջ:

Ստորև ներկայացվող Աղյուսակ 2-ը կարող է ցույց է տալ, թե Վարդան Յունանյանն իր բառարանում ինչ կերպ է վարվել լատիներեն բառերը հասկանալի դարձնելիս: Աղյուսակի չորս սյունակներում համադրել ենք՝ ա) լատիներեն բառի հայերեն տառադարձված տարբերակն ըստ Վ. Յունանյանի բառարանի, բ) լատիներեն բառը, գ) նույն բառի՝ Վ. Յունանյանի ստեղծած հայերեն համարժեքը, դ) նույն բառի՝ արդի հայերենում ունեցած իմաստը կամ համարժեք բառը: Համեմատության համար ընտրել ենք լատիներեն-հայերեն՝ մեր օրերում կազմված բառարանը<sup>60</sup>: Նման կերպ հնարավոր կլինի ցույց տալ, թե Վ. Յունանյանի

<sup>60</sup> Ա. Հայրապետյան, Լատիներեն-հայերեն բառարան, Եր., 2005: Պարունակում է մոտ 15 հազ. բառային միավոր:



կերտած բառերը մերօրյա կիրառությունն ստացել են, թե՞ մնացել են բառարանում մեկ անգամ գործածվելով, և թե 17-րդ դարում լատինաբան հայերենի ընդերքում ստեղծված բառերը հետագա ինչ ճակատագրի են արժանացել:

*Աղյուսակ 2.*

ա) Լատ. բառի տառադարձումն ըստ Վ. Յունանյանի բառարանի Զալու՛նիա	բ) Լատիներեն բառը	գ) Վ. Յունանյանի կազմած նոր բառը	դ) Արդի հայերեն համարժեք կամ բացատրությունը
Զարսի՛կո	Calumnia	բարուր	զրպարտություն, խարդավանք
Չիռնուփի՛ցիո	Circumspicio	ալկաշրջածեմ	շուրջը նայել, զննել
Զոսսթի՛թուս	Constituto	տրամակայեմ	դնել, տեղադրել, սահմանել
Զոսվեռսա՛ցիո	Conversacio	երթելցուլթին	հաճախակի օգտագործում, վարվեցողություն
Տիսլե՛նո	Discerno	տրամատեսեմ	բաժանել, տարբերել
Տիսլե՛ցիո	Discriptio	ենթատրոհում	բաժանում, բաշխում
Տիու	Diū	յարակ	երկար (ժամանակ)
Տիուլոն՛նիթաս	Diuturnitas	յարակունություն	տևողություն, երկարատևություն
Էմե՛նո	Emendo	դեղյարդարեմ	ուղղել, կարգավորել
Էքսքու՛գո	Excuso	առքասրեմ	արդարացնել, որպես արդարացում ներկայացնել
Էքսիե՛նո	Exhērēdo	ժառանգատեմ	ժառանգությունից զրկել
Ֆիսու՛ցիայ	Fiducia	յուսացողություն	համոզվածություն, գրավադրում
Կառու՛լիթաս	Garrulitas	կարկայտություն	շատախոսել, երգել (թռչունների)
Հիսթորիո	Histrio	դերասան	դերասան
Ինֆելի՛թս	Infelicitis	ապերաջան	դժբախտ ինչ-որ բանում, ոչ երջանիկ
Լարա՛յ	Larva	դիմայլակ	ուրվական, չար ոգի
Մակնոփե՛րե	Magnophēre	մեծիրապես	համառորեն, ստիպողաբար
Մալե՛	Māle	չարութ	վատ
Մեթա՛	Mēta	միանդր	կոն(աձև) մարմին, կշան, նպատակ
Օքքուփո	Occūpo	գետեղեմ	զբաղեցնել, զավթել

Փիռա՛թայ	Pirāta	նաւարտակ	ծովահեն
Փոֆի՛ցիո	Prōficio	զարգանամ	առաջ շարժվել
Փոմփիթուս	Promptus	յարմարափոյթ	ակնառու, պատրաստի, հարմար
Փոփո՛սիթում	Prōpōsitum	առաջադրեալ	հասանելի, բաց
Փոթի՛նուս	Prōtinūs	փոյթընդոստ	այսուհետև, հետո, անդադար
Փոու՛Էթուս	Prōventūs	հաշուեմուտ	երևալը, բերքահավաք, զարգացում
Ռա՛րուս	Rārus	տրամախիտ	հազվադեպ
Ռա՛ցիո	Rātio	բանավարություն	հաշիվ, ցուցակ, գումար..., նաև՝ բանականություն, դատողություն
Ռեքու՛սո	Rēcūso	ընդքասրեմ	հրաժարվել, դեմ լինել՝ բողոքել
Ռեսի՛ցիո	Rēsilio	ընդոստեմ	հետ թռչել
Սաթիսֆա՛թցիո	Satisfactio	բաւականարություն	բավարարվածություն
Սցե՛նայ	Scēna	տեսափոխ	բեմ
Սիմուլա՛թում	Simulācrum	նմանակերտ	տիպար, նմանակ, ուրվական
Սիեթթա՛թուկում	Spectācūlum	հայեցարան	տեսարան, բեմականացում
Սփի՛րիթուս	Spirītūs	կենակիր	շնչելը, օդ, հոգի, կյանք
Սթոմա՛թուս	Stōmāchus	եփարան	ստամոքս
Սու՛մնա	Summa	զումարտակ	բարձր պաշտոն
Սուփեռչիլիում	Sūpercilium	արտուուն	հոկք
Թի՛թուկուս	Titulus	պատուագրություն	մակագրություն, տիտղոս
Թռաճե՛տիա	Trāgoedia	բաղեմուազ	ողբերգություն
Թո՛թուս	Trōchus	գնդակ	երկաթյա օղ
Թու՛նիո	Turbo	գնդակ	արագ պտույտ, հոլ

Բերված բառացանկից երևում է, որ մի շարք դեպքերում լատիներեն բառի դիմաց Վ. Յունանյանը նոր բառ է հնարել, չնայած որ հայերենում գոյություն ունեին դրանց համարժեքները, ինչպես՝ լատ. *Sūpercilium* բառը թարգմանված է **արտուուն** այն դեպքում, երբ հայերենում գործածական էր **յօկք** բառը, նմանապես հեղինակը հնարել է **մեռիկայ՝ թույն** բառի փոխարեն, **նաւարտակ՝** ծովահեն-ի փոխարեն, **դիմայլակ՝** ուրուականի փո-

խարեն, **չարութե՛** վատ-ի փոխարեն, **պատուագորութիւն՝** մակագորության փոխարեն և այլն:

\* \* \*

Վարդան Զունանյանի բառարանի ամենաուշագրավ կողմը, մեր կարծիքով, նոր բառերի առատությունն է: Խոսքն այս դեպքում այն բառերի մասին է, որոնք որևէ այլ աղբյուրում չեն հանդիպում, գրանցված չեն նաև ՆՅԲ-ում և ԱԲ-ում: Առհասարակ լատինաբան հեղինակների երկերին, այդ թվում՝ բառարաններին հատուկ է նորակազմ բառերի առատությունը: Կղեմես Գալանոսի «Զերական և տրամաբանական ներածութիւն» գրքի վերջում զետեղված «Բառզիրք ամենայն իմաստասիրական բառից հայոց և լատինացոց» թարգմանական գիտական բառարանի և տառի տակ բերված մոտ 300 բառերից 14-ը բացակայում են գրաբարի բառարաններում, այսինքն՝ դրանք պետք է համարել նորակազմ **այսութիւն, անարտագրելի, անաւարտելի, անդրաշրջիլ, անդրաշրջումն, անըմբռնելութիւն** (ԱԲ-ն ունի անըմբռնողութիւն), **անյատուկ, անյատկապէս, անողջախոհութիւն, առբայ** (ԱԲ՝ առբայութիւն), **առբայական, առբայապէս, արեգակնակացումն, արտաքսապէս:** Այս շարքում չենք հաշվել ուղղագրական տարբերակները՝ **անանճատելի, առմատ** և այլն:

Մեկ ուրիշ՝ Աստվածատուր Ներսեսովիչի 596 էջ ընդգրկող «Բառզիրք լատինահայ» բառարանի միայն առաջին տասը էջերին հանդիպող նորակազմ բառերն են՝ **անարգասնեալ, հնասկզբականք, վիժարար, առերգեցեալ, կարկեհանատեսիլ, յարմարազարդ, յարմարակիրթ, քացխավաճառ, թթվըշաղ** և այլն:

Նոր բառերով խիստ հարուստ է նաև Վ. Զունանյանի բառարանը, չնայած որ հեղինակն իր թարգմանության բնագրում եղած ոչ բոլոր նոր բառերն է մուծել իր բառարանի մեջ, օրինակ՝ «Ձեռքածութեան» շարադրանքում առկա **արտացուցանիմ, ենթադատութիւն, համբաւածաւալ, հոգունակաբար** և շատ այլ բառեր չեն ընդգրկված գլխաբառերի թվում: Անտեսված են նաև

բառահոդվածներում բառերը բացատրելիս գործածված մի շարք նոր բառեր, օրինակ՝ **անկարելոջ** բառի բացատրության ժամանակ գործածում է **լարաբաժանեցեալ** նոր բառը, սակայն այն բառարանի բառաշարքերում չկայ, **արտևուն** բառը բացատրելիս ունի **կարճաբոյս** բառը, նմանապէս՝ **յոզնամենութիւն, մեծահաշուեցութիւն, խռթնածութիւն, շարժառոցել և շրջածութիւն** և այլն, սակայն դրանք ընդգրկված չեն բառացանկի մեջ: Բայց, օրինակ՝ **յուսացողութիւն** բառը բացատրելիս գործածվում է **իսկադիր**, որը կա նաև բառացանկում, **բաւականարութիւն** բառը բացատրելիս գործածում է **առբասրել**, որն ընդգրկել է իր բառաշարքում:

Այդպիսով ստացվում է, որ Բառարանը կազմվել է թարգմանչի հայեցողական ընտրությամբ: Թերևս պատճառն այն է, որ բառարանից դուրս թողնված նոր բառերը հեղինակի կամ գուցե իր ժամանակի լատինաբան հեղինակների համար սովորական են եղել, ուստի առանձին բացատրելու հարկ չի եղել:

Զեղինակը մի քանի բառեր հատկապէս մանրամասն է նկարագրում, ինչպէս՝ **ախտաջեր, անկարելոջ, ապառոցեմ, բաւականարութիւն, թիկնաստանդեմ, միանդր** և այլ բառերի դեպքում: Ընդհանուր առմամբ նկատելի է, որ մանրամասն մեկնաբանել է իր ստեղծած բառերը, իսկ նրանք, որոնք որ ծանոթ են եղել իր ժամանակ այլ աղբյուրներից, հիմնականում բավարարվել է հակիրճ բացատրելով:

Վ. Զունանյանի բառարանի մի շարք բառեր չունեն ՆՅԲ և ԱԲ, բայց ընդգրկված են Ստեփանոս Մալխասյանցի «Զայերեն բացատրական բառարանում»: Նշանակո՞ւմ է, որ վերջինս օգտվել է Վարդան Զունանյանի բառարանից և որոշակի բառեր քաղել: Դժվար է այդ հարցին պատասխանել, քանի որ մեր քննած բառարանի որոշ բառեր Ստ. Մալխասյանցի բառարանում ընդգրկված են (սմարակտոս, տրամախիտ, փոյթընդոստ), բայց որոշ բառեր էլ նրանում չկան (կարծրախօսութիւն, տրամա-

պահով, տեսափոխ և այլն): Շատ ավելի հավանական է թվում, որ Ստ. Մալխասյանցն օգտվել է մեկ այլ բառարանից, որը բաղվածաբար մեջբերումներ ունի Վ. Յունանյանի բառարանից:

Հաշվի առնելով, որ հայերենի բառապաշարի և լատինաբան հայերենի ուսումնասիրման համար որոշակի արժեք կարող են ունենալ Վարդան Յունանյանի բառարանի նորակազմ բառերը, ստորև ներկայացնում ենք այդ ցանկը իր՝ Վարդան Յունանյանի բացատրություններով: Պահպանել ենք հեղինակի կիրառած ուղղագրությունը (ցաթկեմ, լաթին) ու նաև նրա բերած լատիներեն տառադարձումները, եթե այդպիսիք եղել են բառարանում: Մեր միջամտությունն առկա է միայն կետադրության մեջ՝ այն համապատասխանեցնելով արդի կանոններին:

**Ախտաջեր**, երան, յոզնակի՝ ախտաջերունք. սեռական իմս անուն դժնդակի հիւանդութան, զոր լաթինացիք ֆէպոիս յարանուանեն, և է՛ անբարեխառն ինչ տապ:

**Ակնաշրջածեմ**. հոգունակաբար շուրջ ածելով զաչս, այսր և անդր հայիմ մտադրութեամբ: Լատ. չիռքումսփիցիո:

**Աղմկափաթոյթ**. շրջապատեցեալ աղմկիւք, թէ հոգեկանօք և թէ մարմնականօք, և զառածեցեալ նոքօք:

**Այսրաբարշեմ**. բռնութեամբ յետս քարշեմ:

**Այսրոստեմ**, յե՛տս ցաթկեմ:

**Անդրաբացեմ**, յետս աբացեմ, հանգոյն գրաստից և նախրաց:

**Անժուր**, նուազ և անզօր, կամ ո՛չ պարարտ:

**Անկարելոյ**, չոյ, յոգ. անկարելունք, չաց. տեղի ինչ, շրջափակեցեալ պատուարաւ և լարաբաժանեցեալ ի ներքս յորձապատիւ ճանապարհօք և համանմանիւք: Ի յունաց և լաթինացւոց Լապի-րիՆթուս վերածայնի:

**Անկոխատ**, որ ո՛չ ստորադրե զինքն այլում կամ խոնարհեցուցանե, և կամ որ ո՛չ տայ կոխատիլ ինքեան:

**Աշխատայոյր**, լի աշխատութեամբ և դժուարութեամբ:

**Ապազնի**, որ ոչ է սերեցեալ յազնուականէ տոհմէ, կամ ռամիկ. նոյնպէս և արաբք անպատեք կոչին ապազնիք:

**Ապառոցեմ**, ի բաց թողում և հրաժարիմ յիրէ յայնմանէ, զոր ունեցեալն էի նախկնաբար, զորօրինակ՝ հրաժարիլ յեպ[ի]ս[կոպոս]յութենէ կամ ի վերակացութենէ, յիշխանութենէ, զոր յառաջագոյն ունէի: Լատ. ռէնոցիօ:

**Առունիմ**, հասանեմ ցանկացելոյ իրին, զոր կամէի, արդ ընկալեմ զնոյն: Լատ. բօստգուօռ:

**Արտատնի**, որ ի գործ արկանի արտաքս քան գտունն, և կամ իր ինչ, որ ո՛չ է տնային:

**Արտելուն**, ան. յոգ. արտևանունք, անաց կամ ունց. Վերջնագոյն մասն ճակատոյն, որ մակաչաց վերակայի, ծածկեցեալ հերօք կարճաբուսիւք, զոր ռամկօրէն ունք վերածայնեն:

**Աբառնաշոյտ**, կարի վաղվաղուն և երագ, ի փոխել աբեացն, յորում ցուցանի երբեմն ինքնահաւանութիւն իմն, անխոհեմութիւն և կամ անհամեստութիւն: Լատ. փռեփոսփիռուս:

**Բաղձաբարշուրին**, քարշումն ի բաղձանս և ի կարօտանս, կամ քարշիցումն ի բաղձանաց:

**Բաւականարութիւն**, անպարտ առնել զինքն, առբասրումն, վճարումն, բաւականապէս վճարումն պարտաւորութեան, զի բաւական արութիւն է այնքան առնել, որքան բաւական լինի բարկացելոյն: Լատ. սաթիսֆաթցիօ:

**Բռնետղ**, ետեղ. ռամկօրէն՝ կոթ:

**Գումարետղ**, տեղի գումարման մարդկանց կամ այլոց իրաց:

**Դարակեմ**, ճանաչեմ այնքան նրբագունիւ խուզմամբ և հետազօտմամբ, մինչ մայ և ո՛չ ինչ յենթակայումն ճանաչելուց, գաղտեցեալ յիմոյս ճանաչմանէ:

**Դերյարդարեմ**, զթիրեցեալն և զխանգարեցեալն վերստին ուղղեմ և յարդարեմ: Լատ. էմէնսօ:

**Դիմաըմբոստեմ**, ընդդեմ զինիմ և հակառակ կամ, զի մի՛ լիցի, և իբր բարձրավզօրէն կիրճ արկանեմ և խանգարեմ զլի- նելութիւն իրին: Լատ. Իմիէ՛տիօ:

**Ենթատրոհումն**, կոցի առաքիւնութիւնն այն, որ ներփակէ յինքեան զվճիտ և զիսկական վերլուծումն զիրացն հետագայից, նրբագունիւ հետագօտմամբ: Լատ. տիսքե՛ցիօ:

**Երբեմնութիւն**, անուն բաղկացեալ ի մակբայէն երբեմն, և նշանակէ զկիրառումն ժամանակի նովիմբ մակբայի:

**Երբեւ**, մակբայ ժամանակական, մերթ, յայլում ժամանակի կամ յորում և իցէ ժամանակի: Նշանակի ևս ուրեք ուրեք:

**Երթեկցութիւն**, կցորդութիւն գնալոյ և գալոյ առ միմեանս, սովորութիւն բաղաբազարիւոյ ի միասին: Լատ. Զօսվէռսա՛ցիօ:

**Ընդբասրեմ**, ի բաց մերժեմ և հեռացուցանեմ յինէն, բա- ցասեմ հրաժարմամբ: Լատ. ռէբու՛սօ:

**Ընդհոծ**, յաճախագոյն և երկարածիգ, երբեմն նշանակէ խիտ առ խիտ:

**Թիկնաստանդեմ**, ստեմ և փոխեմ զասացեալս իմ, ոչ կամիմ գալ առ իրն առաջադրեցեալ և պառտճառեմ զբանս պէսպէս: Լատ. Թեռծիվէ՛նսօռ:

**Իսկատ**, զուրկ ի ճմարտութենէ, սուտ:

**Լրարկութիւն**, չարախօսութիւն կամ վատաբանութիւն զու- մեմնէ:

**Խաղետղ**, հրապարակ և տեղի խաղուց:

**Խելացնորածետ**, ախտացեալ հիւանդութեամբ խելացնորիւ: Լատ. Ֆռէնէ՛թիբու:

**Խրամատագգած**, զգածեցեալ վնասաբերիւ և աւերածեալ խորհրդով կամ դիտաւորութեամբ կամ մտածութեամբ կամ իրակութեամբ կամ բանիւ և այլով համայնիւք:

**Խրատապատժեմ**, կշտամբեմ բանիւք կամ պատժեմ քինա- խնդրութեամբ և խրատու: Լատ. բասթի՛կօ:

**Խրոխտառոցեմ**, շարժեմ զգլուխս հանդէպ կրծոյս՝ ահացուցանելով զոք և կամ սպառնամ միանգամայն զբանս խրոխտս և զոգորալիս ելուզանելով:

**Խտտացաւ**, հիւանդութիւն իմն աչաց, որ շառագունէ զսպիտակոյց նորին և ուռուցեալ զկոպսն, յետս շրջէ իբր զա- րիւնատեսիլ և զկեղունակս: Լատ. օֆթալմիալ:

**Շրարաբանութիւն**, ոճ իմն խօսելոյ, որ համանմանիւք և երկիմացիւք բանիւք զթօղէ զիմացն ուղղական և իբր ներածորտ զի՛սկն իրին:

**Կախեկ**, ի. բարկագոյն և խիստ մասնիկն այն ամենից պտղոյ, յորմէ կախին յոստոյ ծառոյն, զոր ռամկորէն կոթ անուանեն:

**Կարծրախօսութիւն**, անհաւաստութիւն և տարակուսական իմն զօրութիւն բանից, որ ի կարծիս և ի տարակոյս արկանէ զլսօղսն:

**Կարկաչտութիւն**, լեզուագարութիւն ախմարական, որ ո՛չ զվայելս ունի խօսելոյ և ոչ իսկ զժամանակ և զորպիսութիւն խօսիցն ընտրէ:

**Կենակիր**, նախապետական իմն զօրութիւն հոգւոյն, որ յաջողակօրէն յարդարէ զբնաւս նորին ներգործութիւնս, և իբր յինքեան կրէ զկեանս: Լատ. սփի՛րիթու:

**Կերակիր**, որ առբերէ զխորտիկս ի սեղան: Առ իշխանս է՛ արժանապատիւ իմն կերակրութիւն, զոր լաթինացիք տակիֆէռ վերակոչեն:

**Կերարկ**, ամենայն ինչ, որ տրի վասն ուտելոյ և ըմպելոյ, որպէս և ռոճիկ անուանի ամենայն ինչ, որ առ ի ուտել ի զգենուկ և յայլ պէտս առատրին:

**Չայեցարան**, տեղի, ուր խաղք և պէսպէս հրճուանք հասա- րակականք հրապարակին: Մերթ ասի և ինքեան հայեցմանն առ յայսպիսիս: Լատ. սփէթաթուլում:

**Հաշուեմուտ**, պտուղ և շահ տարեկան, զոր ժողովեմք ի ստացուածոց մերոց, յանդեայց, յանդաստանաց, ի տանց, ի բաղաբաց: Լատ. փռուէնթուս:

**Հասակալեմ**, հասանեմ իրին ցանկացելոյ և իւրացուցանեմ զնա:

**Հաստադոք**, որ ունի զստուար իմն և զամրագոյն արմ, և կամ որոյ կողմն ներքին հաստագոյն է, քան զկողմն վերին:

**Հարկամիտիմ**, ստիպիմ իբր ի հարկե առ ի հետևիլ առաջադրեցելոյ իրին:

**Ձեռքածութիւն** և ձեռնածութիւն, ըմբռնումն ի ձեռնսէ և առաջնորդումն: Լատ. մանուտոնթցիո:

**Ճեպամերթ**, յաճախապէս, բազմիցս: Լատ. ֆռեգուէնթեր:

**Մեծիրապէս**, կարի, յոյժ, սաստիկ: Լատ. մակնոսփերե:

**Մեռինայ**, խոտ ինչ թունալի, որ բուսանի ի լերինս անջրդի: Լատ. աթոնիթում:

**Միանդր**, եր, կոչի ձողածն նիշն, զոր կառուցանեն նասպարիսում, վասն խաղուց ընթացականաց: Լատ. մէթա:

**Յարակ**, մակբայ ժամանակական. ընդ երկարածիգ իմն ժամանակ: Լատ. տի՛ու:

**Յարակունութիւն**, երկարածութիւն ամանակի. թիւ աւուրց և յոգնամենութիւն տնելոյ: Լատ. տիուլթուննիթաս:

**Յարմարափոյթ**, որ արդ պատրաստեալ է առ ի զիր ինչ առնել թարց յապաղման կամ ծուլութեան, և որ առձեռն պատրաստ գոյ, մինչ խնդրի կամ պիտոյանայ: Լատ. փռոսփիթուս:

**Յամին**, նոյ, եաւ. յապաղումն, պատճառեցեալ ի կամաց յամողին:

**Յապառեմ**, եպերեմ, անհոգանամ և իբր յապառնում ամանակի թողում զջան և զհոգացութիւն իրին առաջադրեցելոյ, երբեմն է՝ անգոսնեմ, առ յոչինչ համարիմ: Լատ. նէկլիկո:

**Յաւետագին**, որ զառաւել ունի զգին, և զմեծահաշուեցութիւն, քան զայլս:

**Յորձապտոյտ**, նշանակէ զըջաբերմունս և զխոթնածութիւնս բանից, և ևս զճանապարհ և զշաւիղս մանեմանս, և յատկապէս առնանի վասն ջրոյ:

**Յուսացողութիւն**, կարծիք իմն իսկադիր և յոյս, ըղացեալ զինքենէ կամ զայլմէ, ի կիր արկանի մերթ ի կողմն չար, և մերթ՝ ի բարի: Լատ. ֆիտոնցիա:

**Նաւակիրոք**, կտեր, տեսակ իմն փոքեր ձկան, զորմէ ճառեն արգելուլ զնան ի գնացից յենմամբ և եթ իւրով ի նա: Իսկ այլք ասեն յամրագոյն արտագործել զընթացս նաւին, այլ ո՛չ հատանել ամենևին զթափ գնացից նորին: Լատ. ռեմոռա: Յունարէն էիւէնէիս յարանուանի:

**Ներսունապէս**, կարի իմն ներքսապէս և իբր յեցեալ ի սրտում, թէ սիրով, թէ խորհրդով և թէ այլովք իրօք: Լատ. ինթիմէ:

**Նշանառ**, ցուցակ իմն և նշան արհամարհանաց, որ լինի ի շարժառոցելոց ձեռին, շրջածութեամբ աչաց կամ առոցմամբ այլոց անդամոց:

**Նմանակերտ**, պատկեր ինչ կազմեցեալ ըստ նմանութեան իրի ուրուք: Լատ. սիմուլաթում:

**Շարժակցեմ**, շարժմամբ անդամոց մարմնոյս հեշտացուցանեմ զհայեցօղս: Լատ. ճեսթիթուլօռ:

**Շարժառոցեմ**, յորացմամբ իմիւ շարժեմ զձեռս կամ զանձս իմ այսր և անդր:

**Շիւղադեգ**, կուտակ ինչ շիւղից կամ այլոց նիւթոց, զորս դիզաբարդել սովորեն մրջինք ի վերայ բունոց իւրեանց, մանաւանդ յանտառս և ի վայրս խոնաւուտս:

**Շլանկատեմ**, հայիմ սակաւ ինչ ունելով զտեսութիւն և իբր զկիսակոյր: Լատ. չէթոնցիո:

**Շնորհառութիւն**, պարգևումն կամ ընձեռումն շնորհի ուրուք ըստ արդեանց և արժանաւորութեան: Լատ. պէնէֆիջիում:

**Ուղղակոբեմ**, հարթեմ և ուղղեմ զթիւրութիւն կամ առ ուղին դարձուցանեմ զարտելեալս:

**Պողոտենուագ**, տեսակ իմն բանաստեղծականի վերածառութան, որ զբաղաբականաց կամ գյատկառից անձանց զվարս և զկեանս առցուցանէ: Լատ. բօմէ՛տիա:

**Սառնորակեայ**, յօրինեցեալ ի սառնորակէ: Լատ. Զրիսթա՛լլինում:

**Սիրելագրկութիւն**, զրկիլն յայնց իրաց, որք կարի իմն սիրելիք իցեն, զորօրինակ ի հօրէ, յամուսնոյ, յորդոյ, ի բարեկամէ իսկականէ և յայլոց:

**Սկզբնախաղ**, յատկապէս կոչի նախանուագումն այն հանդարտիկ և համաձայնեցութիւն աղէաց բնարին և այլոց գործեաց երաժշտական, զոր նախ բան զերգելն սովորեն երգիչք և բնարահարք փորձառոցել: Լատ. փռէլու՛տիում:

**Վաղարկութիւն**, երկարեցումն և տարածումն ժամանակի, ի ներկայէն առ յայլս ամակնակս: Լատ. տիլա՛ցիո:

**Վարկ**, ի. և վարկեան, ենոյ. Է՛ մասնիկն այն, զոր թեպետ և փոքրիկ իմն է, սակայն դրեցեալ ի թաթ կշռոյն, շարժէ զնա և ստորահակէ, ուստի ոմանք կետ անուանեն վասն փոքրութեան: Լատ. մօմէ՛նթում:

**Վեհալուստր**, եր. յոյժ պայծառափայլ, լուսաւորագունեղ, վճտագոյն: Փոխաբերութեամբ առնանի վասն ազնուագունեղի, հռչակաւորի և համբաւածաւալի: Լատ. իլլուսթրի՛սիմուս:

**Տեսափոխ**. կոչին զանազանութիւնք փոփոխմանց ընտեսարանում, մինչ իրակին ի դերասանից պողոտենուագք կամ բաղենուագք: Լատ. սչէ՛նայ:

**Տխորժեմ**. ոչ ախորժեմ:

**Տրամագոյգ**, անգոյգ, հակագոյգ, անհանգետ, այսինքն՝ ընդդէմ զուգութեան և հաւասարութեան:

**Տրամապահով**, անզուրկ ի կասկածանաց և յերկիւղէ, ո՛չ անբոյթ:

**Տրամաճառեմ**. որոնեմ յամենից կողմանց, յուզեմ հոգունակաբար և հետազօտութեամբ վիճաբանեմ: Լատ. տիսգուի՛րօ:

**Տրամատեսեմ**. յայտնապէս և իսկապէս ճանաչեմ, արտադատեմ, զանազանեմ, դնեմ զտարբերութիւն ենթադատութեամբ և բաժանեմ յիրերաց զչարն և զբարին և զայլս: Լատ. տիսչէ՛նսօ:

**Փաղարկութիւն**. ենթադատումն ծածկագունի և անգիտացելոյ ուրուք իրի, զոր մտածեմք յարաբերութեամբ նշանաց իմիք և պատճառաց և կարծեմք այսպէս կամ այնպէս գոյ: Լատ. բօսիէթօն՛ոս:

**Փոխարժութիւն**. արտադրումն գործոյն իւրոյ, զոր ունի ի բնութենէ և կամ մինչ հարկի յայլմէ առ ի առնել զնոյն:

**Փոքրէն**. մակբայ բացասական, ո՛չ, մի՛:

**Քաղաբարոյութիւն**. բաղաբավարութիւն իմն, որ ի խօսս և ի կատակս խառնէ զհամեստութիւն և զհեշտացութիւն հաճոյական և զուարճացուցիչ: Լատ. տւթռաֆէ՛լիա:

**Քաղենուագ**. տեսակ իմն վարժելոյ զտաղս բանաստեղծականս, նորում թագաւորաց և իշխանաց և կամ այնց, որք ի յարբունիս ելամտեն, թշուառութիւնք և տառապանք արտացուցանին: Լատ. թռաճէ՛տիա:

## ՀՈՎՍԵՓ ԱՐԾԱԽԵՏՈՒ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՆԱՐԱՆԸ

Բանասիրական գրականության մեջ շատ բան չենք գտնի Հովսեփ Արցախեցու մասին՝ մի հոգևորական գիտնականի, որ հեղինակ է գրաբարի սովոր բառարանի և ուսումնական քերականության:

Հովսեփ Արցախեցին 18-րդ դարի վերջի - 19-րդ դարի 1-ին կեսի հայ հոգևոր, կրթական գործիչներից է, եղել է Շուշիի թեմի վարդապետ, զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Ֆրանսիացի բարոյագետ և աստվածաբան Անտուան Կովդինի մի աշխատության հետևողությամբ համառոտել և ստեղծել է փիլիսոփայական ձեռնարկ հետևյալ ամբողջական խորագրով. «Առաջին մասն փիլիսոփայության, համառոտել ի բուն Տրամաբանութեն աստուածաբան վարդապետին Կովդինյ ի 1830 ամի: Աշխատասիրութեամբ հոր Հովսեփայ գիտնական վարդապետի Տեր-Աւագեան Արցախեցոյ, որ է միաբան Սրբոյ վանիցն Գանձասարու՝ եղելոյ ի խաչեն գաւառակին Արցախայ»: Հ. Արցախեցին փիլիսոփայական այս ձեռնարկում ներկայացնում է գիտական իմացության և ձևական տրամաբանության հետ կապված բազմաթիվ հարցեր:

Մաշտոցյան Մատենադարանի թ. 2563 ձեռագրում պահպանված է Հովսեփ Արցախեցու անտիպ քերականությունը «Տետրակ բայի» անվանումով: Նրա 1ա էջին ընթեռնելի հստակ ձեռագրով գրված է խորագիրը՝ «Գիրքս այս կոչի տետրակ բայի, ի պետս համբակաց», նույն էջին վարը՝ «Աշխատասիրութեամբ Տեանն Յօսեփայ Արցախեցոյ գերիմաստ վարդապետի ի միաբանութեն վանիցն Սրբոյն Յակոբայ: Ի հայրապետութեան Տեանն Յօհաննու սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն հայոց, 1839, ի վանս Սրբոյն Յակոբայ»:

Աշխատությունն ունի ընդգծված ուսուցողական բնույթ: Այդ են հուշում «ի պետս համբակաց» նշումը, գրքի ողջ շարադրանքը, քերականության պարզ մատուցումը, նույնիսկ՝ հստակ ու հատ-

հատ ձեռագրաշարը, որ անշուշտ հեղինակի ինքնագիրն է: Էջերն ունեն գունավորումներ, գլխագարդեր:

Քերականական այս աշխատությունն սկսվում է «Յաղագս նախադրութեան» գլխով: «Նախադրութիւն է մասն բանի, որ ի յարիլն զանունս ևս և յայլ մասունս բանի իբր հոլովականս, ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ, իբր զի եղեալ յառաջոյ անունն՝ յայտ առնէ զայն, ինչ որ շուրջ զիրօք մտածի» (Էջ 2ա): Սահմանումից հետո տրվում են նախադրության տեսակները՝ պատճառականք, ժամանակականք, տեղականք, հանգունականք (=ցուցական), զատականք, միջնորդականք, առաւելականք և այլն: Այս կերպ նախադրությունների հետ միավորված են նաև շատ մակբայներ, դերանունների մի մասը, որոշ ածականներ (հետաքրքիր է, որ երկրորդ գլուխը նվիրված է հենց մակբայներին, որոնք դիտվում են «որ եղեալ մակ բայից, այսինքն՝ ի վերայ բայից», 18ա): Ապա թվարկվում են համապատասխան տեսակների օրինակներ՝ կիրառված նախադասությունների մեջ: Այս սկզբունքը նույնպես աշխատությանը դասագրքի լիարժեք տեսք է տալիս, ցանկացած քերականական իրողություն ներկայացված է բազմաթիվ օրինակներով: Հաջորդող գլուխներում համանման սկզբունքով ներկայացվում են՝ Յաղագս շաղկապի, Յաղագս միջարկութեան (=եղանակավորող բառեր), Յաղագս խնդրառութեան բայից և այլն: Ձեռնարկի վերջին հատվածն ունի «Յաղագս հարցմանց» բաժինը, որ վերևում շարադրված դրույթների համառոտումն է:

Բոլոր գլուխներում նկատվում են Հովսեփ Արցախեցու խորագիտակ մտտեցումները գրաբարի քերականության և ուսուցման հարցերում: Ձեռնարկն ընդհանուր առմամբ գրված է գրաբար, միայն տեղ-տեղ շարադրանքը վերածվում է աշխարհաբարի, ինչպես՝ «ներգործական բայն ունի հայցական խնդիր, եթէ զօրութեամբ և եթէ ներգործութեամբ աներևոյթ լինի խնդիր հայցականի տեղ» (82ա): Շարադրանքի պարզությունը նույնպես ուսուցողական նպատակներ է հետապնդում:

Պետք է ասել, որ գրաբարի քերականության այս ուսումնական ուղեցույցն իր կառուցվածքով, նյութերի հերթականությամբ, շարադրանքով անմիջականորեն կապված չէ հայ դպրոցներում իր ժամանակին ամենից շատ տարածված՝ Մի-բայել Զամյանի և Կրթանես Զալըխյանի քերականությունների


հետ<sup>61</sup>, այսինքն՝ Հովսեփ Արցախեցու «Տետրակ բայի» երկը որոշակիորեն ինքնուրույն գործ է:

Հովսեփ Արցախեցու քերականության բովանդակության և հայ քերականական մտքի հետ ունեցած առնչությունների բնությունը թողնելով հետագային՝ նշենք, որ նույն հեղինակի ստվարածավալ բառարանը նրա լեզվական հմտությունների ևս մի վկայությունն է:

\*\*\*

Գրաբարի հռչակավոր բառարանները ստվերում են թողել գործնական-ուսումնական նպատակներով ստեղծված մյուս բառարանները, այդ թվում՝ Հովսեփ Արցախեցու «Համառոտ բառգիրք ի գրաբարե յաշխարհաբար», տպագրված Շուշիում, 1830 թ.<sup>62</sup>: Թեև այն ստեղծվել է 19-րդ դարի սկզբին, սակայն ներկայացնում ենք ուշ միջնադարի հայ բառարանագրության շարքում բառարանի բնույթն ու բովանդակությունը նկատի ունենալով:

Չնայած իր ուրույն արժեքին՝ այն դուրս է մնացել բառարանագիրների տեսադաշտից, բառարանի մասին խոսք չկա նաև Գ.Թոսունյանի «Գրաբարի բառարանագրությունը» (2006) աշխատության մեջ, որը մանրամասնում է հատկապես տպագիր բառարանների կառուցվածքը, բովանդակությունը: Սակայն առաջին իսկ ընթերցումը ցույց է տալիս, որ Հ. Արցախեցու այս աշխատությունը պարունակում է բառապաշարային ոչ քիչ ուշագրավ իրողություններ և արժանի է առանձին անդրադարձի<sup>63</sup>:



Նկար 11. Հովսեփ Արցախեցու բառարանի տիտղոսաթերթը:

Ներկայացվող բառարանը ուշագրավ է նախ նրանով, որ կապված է Արցախյան գրահրատարակության հետ: Շուշիում 19-րդ դարի երեսնական թվականներին գործել է արդյունավետ մի տպարան, որտեղ հրատարակվել են նաև Եսայի Հասան-Ջալալյանցի «Պատմություն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից» (1839) աշխատությունը, «Ճանապարհացոյց ամ բարեպաշտ կեանս, որ հիմնեալ է ի կանոնս

<sup>61</sup> Տե՛ս Մ. Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի և այժմ նորոգ համառոտեալ աշխատասիրութեամբ նորին ամ ի դիւրութիւն ուսանողաց, Վենետիկ, 1801: Վ. Չալոյխեան, Կրթութիւն գործնական հայկական գրոց բարբառոյ ըստ իւրաբանչիւր կանոնաց, Վիեննա, 1837:

<sup>62</sup> Հովսեփ Արցախեցի, Համառոտ բառգիրք ի գրաբարե յաշխարհաբարն. Ի պետս համբակաց, Շուշի, 1830: Կգործածենք ԱրցԲԲ հապավումով:

<sup>63</sup> Հովսեփ Արցախեցու բառարանին համառոտ անդրադարձ է ԵՊԳ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողուհի Հասմիկ Մուրադյանի՝ մեր հանձնարարությամբ ներկայացրած զեկուցումը ուսանողական գիտական ընկերության նստաշրջանում:



Քրիստոնեութան» (1833), «Պատմութիւն սուրբ գրքոց» (1828), «Սիրտ մարդոյ, որ է տաճար աստուծոյ կամ գործարան սատա-  
նայի» (1833) և այլ աշխատություններ:

Որպես գրաբարի բացատրական բառարան՝ Յ.Արցախեցու «Յամանոտ բառգիրքը» ստեղծման ժամանակով ավելի հին է ՆԲ, ՆՅԲ, Գրիգոր Փեշտիմանյանի «Բառգիրք հայկազեան լեզուի» բա-  
ռարաններից: Արցախեցու՝ 398 էջ, 8000 և ավելի բառ պա-  
րունակող բառարանի ստեղծման համար ՆՅԲ-ն կամ որևէ այլ  
բառարան որպես աղբյուր չեն ծառայել, այն ինքնուրույնաբար է  
ստեղծվել: Ստորև բերվող համադրական Աղյուսակ 3-ը կարող է  
ասվածը լավագույնս փաստել: ԱրցՅԲ-ի բառերը համեմատել  
ենք ստեղծման ժամանակով առավել մոտ ՆՅԲ-ի (1836-37 թթ.),  
Գ.Փեշտիմանյանի «Բառգիրք հայկազեան լեզուի» (1844-46  
թթ.), ինչպես նաև Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայ-  
կազեան լեզուի» բառարանի տվյալների հետ: Օրինակ՝ Կ տառով  
սկսվող առաջին քսան գլխաբառերի հերթականությունը նշված  
չորս բառարաններում ունի հետևյալ պատկերը:

Աղյուսակ 3.

ՍեբՅԼ, 1749 թ.	ԱրցՅԲ, 1830 թ.	ՆՅԲ, 1836-37 թթ.	ՓԲՅ, 1844-46 թթ.
Կա	--	Կա	Կա
--	--	Կաբոս	Կաբոս
Կագ	Կագ	Կագ	Կագ
Կագագարթոյց	Կագագարթոյց	Կագագարթոյց	Կագագարթոյց
--	--	Կագացող	Կագացող
Կագեմ	Կագեմ	--	Կագեմ
--	--	--	Կագի
Կագիմ	Կագիմ	Կագիմ	Կագիմ
Կագումն	--	--	Կագումն
--	--	Կագ	Կագ
--	--	Կագագործութիւն	Կագագործութիւն
--	--	Կագղուրական	Կագղուրական
Կագղուրացուցանեմ	--	Կագղուրեցուցանեմ	Կագղուրեցուցանեմ
--	Կագղուրանամ	--	Կագղուրանամ
Կագղուրեմ	Կագղուրեմ	Կագղուրեմ	Կագղուրեմ
Կագղուրիչ	--	--	Կագղուրիմ
--	--	Կագղուրեցուցիչ	Կագղուրեցուցիչ
--	--	--	Կագղուրիչ
Կագղուրումն	--	Կագղուրումն	Կագղուրումն
Կագմ	--	Կագմ	Կագմ
--	Կագմ ունիլ	--	--

--	Կագմ կալ	--	--
Կագմած	--	Կագմած	Կագմած
--	--	Կագմակերպ	Կագմակերպ
Կագմակերպեմ	Կագմակերպեմ	Կագմակերպեմ	Կագմակերպեմ
Կագմակերպութիւն	--	Կագմակերպութիւն	Կագմակերպութիւն
Կագմարան	--	Կագմարան	Կագմարան
Կագմարար	--	--	Կագմարար
Կագմեմ	--	Կագմեմ	Կագմեմ
--	--	--	Կագմ գրոց
--	--	Կագմիկ	Կագմիկ
Կագմիչ	--	Կագմիչ	Կագմիչ
--	--	Կագմողական	Կագմողական
--	--	--	Կագմորենի
--	--	Կագմոց	Կագմոց
--	--	Կագմուած	Կագմուած
Կագմութիւն	--	Կագմութիւն	Կագմութիւն
Կաթ	--	Կաթ	Կաթ
Կաթարոս	Կաթարոս	Կաթարոս	Կաթարոս
Կաթեղր	Կաթեղր	Կաթեղր	Կաթեղր

Բերված աղյուսակից նկատելի է, որ Յ.Արցախեցու բառա-  
րանն իր համառոտ բառային կազմով ոչ ամբողջովին է  
համընկնում նշված բառարաններին: Առավել մոտ են ՆՅԲ-ն և  
Գ.Փեշտիմանյանի բառարանները: Յ.Արցախեցու ինքնուրույն  
բառարան լինելն ապացուցվում է ոչ միայն բառային կազմի  
սոսկական համեմատությամբ, այլև հետևյալ մի քանի դիտար-  
կումներով.

ա) Յ. Արցախեցու բառարանում կան նոր բառեր, որ չունեն  
նշված բառարանները, օրինակ՝ **կաղամարծուկն, կապանա-  
ւորեմ, կապանջ, կապելիոն, կառարշաւանք, կատակահեմ, կա-  
տաղունիք, կարե՞** «որչափ որ կարենայ», **կարակի, կարծ՝**  
**«մանած թել բամբակի», կարկաչայ, կարշնեմ, կեղաւարտակ,  
կեռատ** «ատամը, կառիքը թափուած», **կերոտի, կթոտիմ,  
կմախեմ** «ջարդել, ջլերը կտրատել», **կոպտատարագ, կորո-  
վաքիք, կոնահարեմ, կրտսերադաս** և այլն: Նշվածների մի մասն  
ակնհայտորեն ունի խոսակցական ծագում՝ եթե նույնիսկ  
հեղինակը դրանք քաղել է գրավոր աղբյուրներից կամ այլ  
բառարաններից:

բ) Արցախեցու բառարանում առկա են բազմաթիվ բառեր,  
որոնք ունեն նոր և չարձանագրված իմաստներ գրաբարյան մյուս  
բառարանների համեմատ: Դրանք առանձնացնելն ու հին հայե-

րենի տվյալների հետ համադրելը գրաբարի բառապաշարի իմաստային առումների վերաբերյալ մեծաքանակ նյութ կարող է մատուցել, ինչպես՝

**Կճեայ** – չորս կողմը բռնող

**Կրթեմ** – բանեցնել, դեպ ի յինքն ձգել

**Կրկնարօր** – զարթ զարթ քննած

**Կրկնոց** – աստառ ոսկեղեն և արծաթեղեն շենքի և այլն:

զ) Հաճախ առկա են միևնույն բառը բացատրելու զգալի տարբերություններ Հ. Արցախեցու և մյուս բառարանների, օրինակ՝ ՆՀԲ-ի տվյալների միջև (տե՛ս Աղյուսակ 4): Դա ևս մեկ հավելյալ ապացույց է, որ մեր հեղինակը լիապես ինքնուրույն է իր բառերի բացատրությունները տվել:

Գլխաբառը	ԱրցՀԲ	Աղյուսակ 4. ՆՀԲ
Կապակռիւ	սիրոյ կապը կռուով բանդող, խռովութիւն քցող	կռիւ յարուցանող ընդ կապակիցս կամ ընդ սիրելիս հակառակատրք
Կարծրադատ Կենսախորախոյս	սերթ դատաստան անող կենսքի ումուտ տուող	խստիւ դատող որ տայ խորախոյս կենաց
Կիրթերասան Կնճանամ	կեմ եկող, սանձ եկող խոզ դառնալ, կատղիլ, ինատ անել	որպէս ընդել ձի որպէս զկինձ վայրենանալ հպարտութեամբ, գոռոզանալ
Կցակ	կցորդ, իլիախ, նաև՝ կպած, ջուլխտ	գրտակ հացի, նկանակ կամ պաքսիմատ

դ) Հ. Արցախեցու բառարանում որպես գլխաբառ բերված են զգալի թվով հարադրություններ, որոնք բացակայում են մյուս բառարաններում կամ տրված են շարադրանքի մեջ, ինչպես՝ **բազ առնել, կանգուն նստիլ, կառեալ կապիլ, կարթակտոր առնել, կիճիռս արկանել, կշտապինդ վայելել, կործան անկանիլ** և այլն:

ե) ԱրցՀԲ-ում գլխաբառերն օժտված են բարբառային, թուրքերեն կամ պարսկերեն բացատրություններով, որը փաստում է, թե հիմնականում ուսումնական նպատակներով ստեղծված այս

բառարանից օգտվողները հաղորդակցվում էին ժամանակի բարբառով, ուստի հարկ է եղել բառերը բացատրել նման եղանակով: Օտարաբառ նման բացատրությունները ցույց են տալիս նաև, որ իր ժամանակին օտար այդ բառերից շատերը եղել են համագործածական, ուստի ուսումնական նպատակով բառը բացատրելիս հարկ է եղել մեջտեղ բերել թուրքերեն այդ բառերը: Օրինակ՝

Ալեկոծեմ – տալդալամիշ անել, խռովացնել, վելվելե հանել

Անընտրաբար – առանց մտածելու, **թևեթելի**

Բաղձանք – փափագ, **հասրեթ, հավես, էշի**

Գթոտ – սահող, սկրդող, **պտիւրմիշ** լինող, սխալող, դալտեցող

Դայեակ – ծծմար, **սիւտանայ**, տղայ **պեսլեմիշ** անող

Դժնդակ – գէշ, **զալըմ**, կատղած, խիստ սաստիկ, **զարարլու**,

**զէհիրլու**, դառնաշունչ

Երանեակ – ելանելի, **տեօլվեթլի, թալեիլի**

Չրաշխատ – փուճ տեղը աշխատող, **նաֆիլե չալշմիշ** լինող

Կիրթ – վարժ, սովոր, **վուխուպ**

Հովանի – շուք անող, **սիֆեր, քեօլկե**

Մտայոյզ – միտք անող, **ֆեսֆեսելի**, կարծիք անող

Նազելի – աղայ **եօլլու**, **շեօիրեթլի**, աղվոր

Շանթ – կրակ կտրած երկաթ, կայծակ, բեծեր, **քեօզեր**

Շրջան – պտուտ, **տեվր, չեվրե**, բոլորտիք և այլն:

Համառոտ այս քննությունից հետո հանգում ենք այն համոզման, որ Հովսեփ Արցախեցու «Համառոտ բառգիրք ի գրաբարե յաշխարհաբար» աշխատությունը հայ բառարանագրության լիարժեք և ինքնուրույն մի նմուշ է, պարունակում է բառապաշարային ուշագրավ տվյալներ, որոնք բացակայում են նրան նախորդած և հաջորդած տարբեր բառարաններում և կարող են հարստացնել մեր բառապաշարի քննության պատմությունը: Առհասարակ բառարանն ինքնին վկայում է, որ 19-րդ դարի 20-30-ական թվականներին, երբ խոսակցական և մասամբ նաև գրական մակարդակներում

Մ ա գ ՝ ա ճ ՝ մ մ ա ը ՝  
 Մ ա գ ա ղ ա թ ՝ ի ՝ ի ճ ՝ ի ց ՝ ի բ ՝  
 կ ա շ ի ն շ ի ն ս ծ թ ա ռ լ թ ՝  
 Մ ա գ ի լ ՝ գ լ ի ա լ ա ճ ՝ օ թ ՝  
 գ ու շ ի լ լ լ ա ն ի լ ՝ գ ու շ ի փ ի ն ՝  
 ձ է ՝  
 Մ ա գ ի ս տ լ ի ՝  
 ս ն ս ՝ } ի ս ն ՝  
 Մ ա գ ի ս ՝ ի ա լ ա ճ ՝ օ թ ՝ } փ ա ՝  
 ա ղ ո ս ՝ } շ ՝ յ ՝  
 Մ ա գ լ ի մ ՝ կ ը թ մ ա գ լ ց ե մ ՝ ե ց ի ՝  
 ե ա ՝ ե լ ՝ ն է թ գ թ ՝ ճ ա ն կ ե մ ՝ ճ ա ն ՝  
 կ ո թ ե լ ՝  
 Մ ա գ լ ց լ ՝ ծ ա լ թ ՝ ճ ա ն կ ո լ փ ի ն ՝ ձ է ՝  
 ո լ ՝ գ ա ը չ է ա լ ՝ ճ ա ն կ ե լ ո լ ՝ ճ ա ն ՝  
 կ ո թ ե լ ո լ ՝  
 Մ ա գ ն ի ս ՝ }  
 Մ ա գ ն ի ս ՝ ն տ ի ՝ } ա լ մ ս տ ՝ ե լ ՝  
 ա ՝ ա ց ՝ օ թ ՝ } մ ս տ ՝ մ լ լ ա ՝  
 Մ ա գ ն ի ս տ ի ս ՝ } տ ը զ ա ա շ լ ՝  
 Մ ա ղ ա պ ու ը ՝ ա ճ ՝ մ մ ա ղ ա պ ու ը ՝  
 Մ ա ղ ա պ ու ը ՝ ղ ե ը ծ ա ն ի լ ՝  
 Մ ա ղ ա պ ու ը ՝ ն ա ի փ թ ՝ հ լ լ ՝ մ ա ղ  
 մ մ ա ղ ո թ ՝ բ ու ն լ ի ա ղ ն մ մ ա ՝  
 զ ո ղ ն պ ը ծ ա ջ ս թ ղ ՝ փ ա ը ՝ պ ը ծ լ ՝  
 ն թ ղ ՝  
 Մ ա ղ ա պ ու ը ՝ ղ ե ը ծ ա ն ի լ ՝ կ ա մ  
 ճ ո ղ ա պ լ լ լ ՝ ճ ո ղ ո լ ա ղ ա տ լ լ լ ՝  
 մ ա ղ մ մ ա ղ ո թ ՝ ձ ե ո թ ՝ ը ն կ ն ի ՝ ե լ ի  
 ա ղ ա տ լ լ ՝  
 Մ ա ղ ա պ ու ը ՝ փ ը ծ ա լ ՝ ՚ ի մ ա չ ՝  
 լ ա ն է ՝ մ ա ղ մ մ ա ղ ո թ ՝ մ ե ո ն է լ ՝  
 ա լ լ լ ՝ ե լ ի ա պ լ ը ց ՝  
 Մ ա ղ ա ը օ թ ՝ ի ա լ ա ճ ՝ օ թ ՝  
 ա ս տ ղ ե լ ի ա մ բ ա ը ՝  
 Մ ա ղ ա ը ա ը ՝ ե լ ՝ ի ճ ՝ ի ց ՝ ի բ ՝  
 ս ա ղ զ ՝ ս ա ղ ի ղ ՝ ծ ա մ մ ն ՝ ծ ա մ ՝  
 տ ա ի ս ա գ ու զ ՝  
 Մ ա ղ լ ի լ ՝ ի լ ՝ ի ա լ ա ճ ՝ օ թ ՝  
 մ ա ղ ք ա շ ՝ ճ լ մ ու ս տ ը ղ ա ղ ՝  
 Մ ա լ ե ա լ ՝ ե լ ց ՝ ո լ ՝ ո ց ՝ ո լ ՝ ք ՝  
 մ ն ն տ ը ա ծ ՝ փ շ ը ա ծ ՝ փ ա ը ՝ կ ը ՝  
 ա ա ծ ՝ ի ս ա տ մ ՝  
 Մ ա լ ե մ ՝ ե ց ի ՝ ե մ ՝ ե լ ՝ ն ե ը զ ո ղ ՝  
 մ մ ն ը ե լ ՝ փ շ ը ը ե լ ՝ փ ա ը ՝ չ է ա ՝  
 մ ե լ ՝ ի ք ը լ թ է բ ա ն ը ո թ ո ճ ա լ ՝  
 Մ ա լ լ լ ՝ }  
 Մ ա ղ ու լ ՝ } ու ղ ա ՝ տ ե Վ է ՝ փ ա ը ՝  
 մ ա լ լ լ ո ղ ՝ } հ ա լ ա թ ՝ հ ա տ ա շ ո լ ա ն ՝  
 ո լ ՝ ո ց ՝ } փ ա ը ՝ մ ա լ լ լ ա ՝ չ է լ ի ՝  
 ո լ ՝ ք ՝ } ս ե ս ՝ ս է ս ՝  
 Մ ա լ ս ա մ ՝ ս ց ի ՝ մ ա լ ՝ չ է ս ՝  
 ն ա լ ս ա ն ձ ի լ ՝ փ ա լ լ լ ՝

Սկար 12. Հատված Հովսեփ Արցախեցու բառարանից:

աշխարհաբարն արդեն իշխող էր դառնում, պահանջ էր զգացվում գրաբարյան բառերը բացատրելու նաև բառարանների տեսքով: Հ. Արցախեցու բառարանն արժևորվում է այդպիսի դերով, ունեցել է ուսումնական հստակ ուղղվածություն և օգտագործվել է դպրոցներում:

## ՈՐՊԵՍ ԱՍՓՈՓՈՒՄ


Այսպիսով՝ ներկայացրինք միջևնդարի հայ բառարանագրությունից յոթ նմուշ, որոնք հիմնականում դուրս են մնացել բանասերների, հայերենագետների ուշադրությունից և որոնք նորովի շրջանառության մեջ դրվելու կարիք ունեն:

Հայ բառարանագիտությունը դեռևս անելիքներ ունի այս ուղղությամբ: Կարող ենք առանձնացնել մի քանի կետեր, որոնք, մեր կարծիքով, կանգնած են բառարանագրության խնդիրների շարքում և որոնց գիտական պրպտումները պետք է շարունակել:

1. Արդիական է Երևանի Մաշտոցյան Մատենադարանի և այլ ձեռագրերի հիման վրա կազմել և հրատարակել ձեռագիր կարևորագույն բառարանների քննական բնագրերը: Մինչ օրս հրատարակվել են Արիստակես Գրիչի, «Բառգիրք հայոց»-ի, որոշ բժշկարանների բնագրերը: Մյուս բառարանները տպագրելու առումով դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Բառարանագրության և առհասարակ հայերենի բառագիտության համար կարևոր փուլ կարող է լինել, օրինակ՝ «Հանդես բանաստեղծաց», «Բառք քերականին», «Նարեկի» բառարանների հրատարակումը:

2. Ձեռագիր մատյաններում պետք է շարունակել բառարանային նմուշների «փնտրտուքը»: Թե՛ ամբողջական բառարաններում, թե՛ պատահիկներում հնարավոր է գտնել հին և միջին հայերենի բառարանային մեծաքանակ տվյալներ, որոնք կհարստացնեն հայերենի հին և միջին շրջանների բառապաշարը: Բառարանային ուշագրավ նմուշներ են, օրինակ՝ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերում պահպանված «Բառք արաբերեն-թուրքերեն-հայերեն» (ՄՄ 617), Բառարան-պատահիկը (ՄՄ 2166), Լվովի համալսարանի ձեռագրական բաժնի՝ «Բառք երբայեցոց», «Բառք քեր-

թողականք», «Հանդես բանաստեղծաց» և այլ բառարաններ պարունակող Cod. arm. 50 ձեռագիրը, նույն համալսարանի «Բառգիրք իմաստասիրական բառից հայոց և լատինացւոց» բառարանը (Cod. arm. 62-I), Երուսաղեմի Ս.Հակոբ ձեռագրատանը պահվող «Բառարան Մնացական Սեբաստացիի» (1790 թ.), ուշ շրջանից՝ Միհրան Ասքանազի «Բառարան հայերեն» (1900 թ.) բառարանները և շատ ուրիշ ձեռագիր բառարաններ, որոնք ուսումնասիրվելու և ներկայացվելու կարիք ունեն:



Նկար 13. Հատված Լվովի համալսարանի ձեռագրական բաժնի Cod. arm. 50 ձեռագիր բառարանից:

3. Հայերեն բացատրական առաջին բառարանի՝ «Բառգիրք հայոց»-ի պարունակած բազմաթիվ բառային աղճատումներ, «բառափոխումներ» հնարավոր է շտկել և ուղղել ձեռագիր բառարանների տվյալների հիման վրա: Ձեռագրերի

միջոցով հնարավոր է յուրաքանչյուր առանձին բառի ձեռագրային «ճամփորդությանը» հետևել՝ որոշակիորեն ցույց տալով գրչագրական «բառափոխության» այն ընթացքը, որով ի հայտ է եկել տվյալ բառը և անցել բառարանից բառարան, որոշ դեպքերում բաղաբացիություն ստացել հայերենում:


4. Հատկապես ուշ միջնադարի՝ վաղ աշխարհաբարյան շրջանի բնագրերը լիարժեք ներառված չեն լեզվական և բառապաշարային քննությունների շրջանակի մեջ, մինչդեռ միայն 17-18-րդ դարերում ստեղծված հայերեն բազմաժանր երկերը, դիվանական փաստաթղթերը, վիմագիր արձանագրությունները և այլ բնագրեր պարունակում են մեծ թվով՝ հազարավոր նոր բառեր, որոնց քննությամբ հնարավոր կլինի վերականգնել նոր հայերենի կազմավորման ընթացքը, արևելահայերեն - արևմտահայերեն սահմանների առանձնացումը հենց ակունքներում: Նման բառերն ի մի հավաքելու փորձ է մեր «Նոր բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» բառարանը՝ մոտ 3000 բառային միավորով: Բառարանի տպագրումից հետո շարունակել ենք բառերի քարտագրումը տարբեր բնագրերից, և ներկայումս մեր քարտարանը պարունակում է շատ ավելի մեծ թվով «նորահայտ» բառեր 17-18-րդ դարերի հայերեն բնագրերից:

5. Բառապաշարային և լեզվական քննություններն «ավանդական» ժանրերից բացի՝ (պատմագրություն, ժամանակագրություն, բանաստեղծություն և այլն) պետք է ներառեն նաև դիվանական, իրավաբանական գրությունները, նամակագրությունը, հաշվապահական և առևտրական գրագրությունները, ծիսական մատյանները: Դրանց անտիպ բազմաթիվ նմուշներ կարելի է հանդիպել թե՛ Հայաստանի և թե՛ արտերկրի հայկական կենտրոնների ձեռագիր պահոցներում:

6. Անուրանալի է ՆՅԲ-ի, ԱԲ-ի և հայերենի հին և միջին շրջանների մյուս հեղինակավոր բառարանների դերը հայերենագիտության համար: Մյուս կողմից՝ դրանց համեմատական նախնական դիտարկումն իսկ ի հայտ է բերում գլխաբառերի, դրանց բացատրությունների, իմաստային նրբությունների տարբերություններ, փոխառյալ և բարբառային զգալի բառա-

շերտեր, որոնք կարիք ունեն առանձնացման, բառարանից բառարան նկատվող հիմնական տարբերությունները մատնանշելու՝ ցույց տալու համար իմաստափոխության, հնչյունական և բառակազմական տարբերակները, այդ կերպ՝ բառապաշարային տեղաշարժերը հայերենի տարբեր փուլերում:

7. Եվ որպես արդյունք այդ քննությունների՝ հնարավոր է աշխատանքներ տանել հայերենի բառապաշարը բառարանային մակարդակում համադրելու, ամբողջացնելու և լիարժեք բառարան ստեղծելու ուղղությամբ:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ա) Ձեռագրեր

- ՄՄ 110 - Ստեփանոս Լեհացի, Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք, էջ 370ա-463բ (Էջմիածին, 1662 թ.):
- ՄՄ 739 - Բառ է հայոց լեզուէ պարզ եւ յստակ, էջ 274ա-311բ (Իլով, 1621-1631 թթ.):
- ՄՄ 1528-Թարգմանութիւն բառից մատենիս ի Նահապետ ծաղկողէ, էջ 1ա-2բ (Շոռոթ, Նախիջևան, 1649-1651 թթ.):
- ՄՄ 1635 - Հանգաւորեալ բառգիրք թուրքերէն-հայերէն, էջ 149ա-201ա (Կ.Պոլիս, 1778 թ.):
- ՄՄ 1654 - Բառք քերթողականք, էջ 203ա-53ա, Հանդես բանաստեղծաց, էջ 253ա-260ա (ԺԷ դ.):
- ՄՄ 1756 - Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք, էջ 7ա-182ա (ԺԷ դ.):
- ՄՄ 2271 - Ի վերայ այբուբենից անուանք քաղաքաց, էջ 196ա-210բ (Սպահան, 1724):
- ՄՄ 2281 - Հանդես բանաստեղծաց, էջ 122բ-131ա, Այս բառք գեղջուկք, որ կարի պիտոյ է վարժասիրաց, էջ 134ա-6ա (ԺԷ դ.):
- ՄՄ 2563 - Յօսեփայ Արցախեցոյ Գիրքս այս կոչի տետրակ բայի, էջ 1ա-89ա (Սուրբ Յակոբ, 1839):
- ՄՄ 6275 - Բառք են այսոքիկ, որ կոչի բառարան բժշկական, էջ 184ա - 239բ (ԺԷ դ.):
- Լովովի համալսարանի ձեռագիր Cod. arm. 50 - Բառագիրք (ԺԷ դ.):
- Լովովի համալսարանի ձեռագիր Cod. arm. 62-1 - Բառագիրք իմաստասիրական բառից հայոց և լատինացոց (ԺԷ/ԺԸ դդ.):

### բ) Բառարաններ

- ԱԲ - Առձեռն բառարան հայկազեան լեզուի, կազմ. Գ. Ճելալեան, Անթիլիաս, 1988:
- ԱՀԲԲ - Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա-Բ, Եր., 1976:
- ԱրցՀԲ - Յովսեփ Արցախեցի, Համառօտ բառգիրք ի գրաբարտ յաշխարհաբար. Ի պետս համբակաց, Շուշի, 1830:
- ԲՀ - Բառագիրք հայոց, արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեսիա վարդապետէ, Յալիկօռնա, 1698:

Կարստ - Միջին հայերենի բառարան (անտիպ):  
 ՀԱԲ - Աճառյան Յ., Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Դ, Եր., 1971-79:  
 ՀԲԲ - Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. I-IV, Եր., 1944-45:  
 ՀԳԲ - Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան (ՆՀԲ-ում չվկայված բառեր), Եր., 2010:  
 ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա-Զ, Եր., 2001-2010:  
 ՀՀՇՏԲ - Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տղեանունների բառարան, հ. 1-5, Եր., 1986-2001:  
 ՄՀԲ - Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009:  
 Ն. Բիւզ. - Նորայր Բիւզանդացի, Բառգիրք ստորին հայոց, ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, հրատ. պատրաստեց Մ. Մինասեանը, Ժնեւ, 2000:  
 ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հեղ. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մկ., հ. Ա-Բ, Եր., 1979-81:  
 ՊՆԲ - Պողոսյան Ն., Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դարեր), Եր., 2014:  
 ՍեբԲՀ - Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1749-69:  
 ՓԲՀ - Փէշտիմաճեան Գ., Բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Կ. Պօլիս, 1844-46:

#### գ) Մենագրություններ և հոդվածներ

Ալեքսանյան Վ., Ակնարկ հայ բառարանագրության պատմության, «Լրաբեր» հասարակական գիտությունների, Եր., 1990, էջ 66-75:  
 Ակիսեան Ն., Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Լվով և ի Ստանիսլաւով, Վիեննա, 1961:  
 Աղայան Եղ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:  
 Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. I-II, Եր., 1940-51:  
 Ամալյան Հ., Հայ միջնադարյան բառարանագրությունը, Եր., 2007:  
 Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Եր., 1966:  
 Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI-XVII դդ.), Եր., 1971:

Բաղրամյան Ռ, Կիրակոս Գանձակեցու մոնոլոգներն բառացանկը, ՊԲՀ, 1979, թ. 1, էջ 129-142:  
 Բառարանագրության և բառագիտության հարցեր (Ժողովածու), Եր., 1972:  
 Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Եր., 1968:  
 Գասպարյան Գ., «Վարդանաց պատմության» միջնադարյան բառարանը, ՊԲՀ, 1963, թ. 2, էջ 269-275:  
 Գրիգորյան Հ., Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական բառարանը, ՊԲՀ, 1975, թ. 2, էջ 134-145:  
 Գրիգորյան Ս., Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ, Եր., 2009:  
 Եղիա Մուշեղյան, Թուրքերեն-հայերեն բառարան (2000 բառային միավոր), աշխատ. Բ.Չուգասյանի, Եր., 1986:  
 Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, Եր., 2006:  
 Թորոսյան Պողոս Տիրիկեցի, Տետրակ համառոտ բառարանի, առարեալ և չափաբերմամբ ոտանաւորեալ ի վայելումն Նորավարժից դպրատան, Նոր Նախիջևան, 1794:  
 Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարար-ժեք բառեր), Եր., 2003:  
 Խաչատրյան Լ., Գրաբարի ուսումնական բառարան, Եր., 2013:  
 Խաչերյան Լ., «Գրչության արվեստի» լեզվական-բերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Եր., 1962:  
 Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն-Ս.Էջմիածին, 2012 թ.:  
 Համբարձումյան Վ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 1, XVII-XIX դդ., Եր., 2006:  
 Համբարձումյան Վ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 2, X-XVIII դդ., Եր., 2015:  
 Համբարձումյան Վ., Բառաբանական դիտարկումներ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցի» մի բանի բառերի շուրջ, ՊԲՀ, 2010, N 3, էջ 161-169:  
 Հայ բառարանագրություն. Անտացված մատենագիտություն, կազմող Վ. Ալեքսանյան, Եր., 1986:  
 Հայրապետյան Ա., Լատիներեն-հայերեն բառարան, Եր., 2005:  
 Հովհաննիսյան Լ., Բառաբանական նկատառումներ «Բառգիրք Հայոցում» տեղ գտած մի բանի բառերի վերաբերյալ, ՊԲՀ, 2000, թ. 2:  
 Հովհաննիսյան Լ., Նուրբեր պատմական բառարանագրության, Եր., 2001:

- Յուզիանյան Ն., Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր (ձեռագիր բառարանների կյուրթի հիման վրա), ՊԲՅ, Եր., 2012, թ. 2, էջ 170-180:
- Յուզիանյան Ն., Բառաքնական դիտարկումներ, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2014, էջ 90-98:
- Ղազարեան Ռ., Ալեոիսեան Յ., Նորայայտ բառեր գրաբարում, Եր., 2007:
- Ղազարեան Ռ., Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012:
- Ղազարյան Ռ., Էջեր հայ բառարանագրության պատմությունից, Եր., 2002:
- Մայր ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Ա-Ը, Եր., 2001-2013:
- Մկրտչյան Ն., Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն» բառարանը, Եր., 2012:
- Նորայր արք. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971:
- Չուգասյան Բ., Եռալեզվյան միջնադարյան մի նոր բառարան, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1968, թ. 10, էջ 81-91:
- Չուգասյան Բ., Պարսկերենում արաբերենից փոխառյալ բառերի հայատառ միջնադարյան մի բառարան, ՊԲՅ, 1970, թ. 3, էջ 150-184:
- Չալըխեան Վ., Կրթութիւն գործնական հայկական գրոց բարբառոյ ըստ իւրաքանչիւր կանոնաց, Վիեննա, 1837:
- Չամչեան Մ., Զերականութիւն հայկազեան լեզուի և այժմ նորոց համառօտեալ աշխատասիրութեամբ նորին առ ի դիւրութիւն ուսանողաց, Վենետիկ, 1801:
- Պետրոսյան Վ., Մխիթար Սեբաստացու լեզվաբանական ժառանգությունը, Եր., 2008:
- Պողոսյան Ա., Հայ բառարանագրությունը 18-րդ դարում, Վանաձոր, 2010:
- Պողոսյան Ն., Նոր բառեր Եվտիբոսի բնագրում, Բանբեր Երևանի համալսարանի, 2008, թ. 3:
- Պողոսյան Ն., 17-րդ դարի հայ բառարանագրության հուշարձաններ, Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապ. գիտ. նստաշրջանի զեկուցումներ, Եր., 2012, էջ 252-264:

- Պողոսեան Ն., Լատինաբան հայերենի բառարանագրության մի յուշարձան ժե դարից, «Բազմավեպ», Վենետիկ, 2011, թ. 3-4, էջ 627-645:
- Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974:
- Ջահուկյան Գ., Ստուգաբանություններ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1976, թ. 12:
- Ջահուկյան Գ., Զերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954:
- Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին ի Վիեննա, կազմեց Յ. Վ. Տաշեան, Վիեննա, 1895:
- Օրմանեան Մ., Ազգապատում, Կ. Ա-Գ, Կ.Պոլիս-Երուսաղեմ, 1912-1927:
- Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, тип-я Императорской Академии Наук. 1915:
- Владимирцов Б. Я., Сравнительная грамматика монгольского письменного языка и халхаского наречия, Л., 1929:
- Денисов П.Н. Очерки по русской лексикологии и учебной лексикографии, М., 1974:
- Касарес Х., Введение в современную лексикографию, пер. с исп., М., 1958:
- Ковтун Л. С., Русская лексикография эпохи средневековья, М.-Л., 1963:
- Отчественные лексикографы XVIII-XX века, под ред. Г. А. Богатовой, М., 2011:
- Щерба Л. В., Опыт общей теории лексикографии, Л., 1974:
- Hartmann R.K., The History of Lexikology, University of Exeter, 1986:
- Problems in lexicography, ed. by F. W. Householder and Sol Saporta, 2 ed., The Hague, 1967:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ .....	3
ՆՈՐԱԳՈՒՅՆ ԵՐՁԱՆԻ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ .....	5
ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ	14
ՆԱՅԱՊԵՏ ԾԱՂԿՈՂԻ ԲԱՌԱՐԱՆԸ .....	24
ԹՈՒՐԹԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՆԳԱԿՈՐ ԲԱՌԱՐԱՆ .....	34
«ԲԱՌԱՐԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ».....	44
«Ի ՎԵՐԱՅ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ԱՆՈՒԱՆՔ ԶԱՂԱԶԱՑ».....	49
ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՂԱՑՈՒ «ԲԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ» ԲԱՌԱՐԱՆԸ.....	56
«ԲԱՌԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ի ԾՇԳՐՏՈՒՄՆԵՐ.....	64
ՎԱՐԴԱՆ ՀՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԸ .....	73
ՀՈՎՍԵՓ ԱՐՅԱՆԵՑՈՒ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՐԱՆԸ.....	92
ՈՐՊԵՍ ԱՄՓՈՓՈՒՄ.....	101
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	105

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ  
Պրակ Ա  
(ԺԷ-ԺԹ դարեր)

Norayr Poghosyan  
Fragments of Armenian lexicography history  
Volume 1 (17-19th centuries)



Տպագրությունը՝ լազերային, թուղթ՝ օֆսեթ,  
չափսը՝ 60x84 1/16, ծավալ՝ 7 տպ. մամուլ,  
տպաքանակը՝ 150:

Տպագրվել է «Մեկնարկ» ՍՊԸ տպարանում  
Հեռ.՝ 091-40-27-97, 094-40-27-97

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
Երևան, 2016



ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ